

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2020
N 3 (52)

Գիտական հանդես Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը

պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 574483

ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardadatutyunjournal.com

Հրապարակված է 19.10.2020թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

EDITORIAL BOARD

Սրբուհի Գալյան – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունների ոլորտը համակարգող տեղակալ, Արդարադատության առաջին դասի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, խմբագրական խորհրդի նախագահ

Srbuhi Galyan – Deputy Prosecutor General of the RA, carrying out functions envisaged by “Law on confiscation of property of illicit origin”, First Rank Counsellor of Justice, PhD student of the chair of criminal law, YSU, Chairman of the Editorial Board

Աշոտ Հայրապետյան – «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, գլխավոր խմբագիր

Ashot Hayrapetyan – “Legal Education and Rehabilitation Programs’ Implementation Center” SNCO, PhD in Law, Associate Professor, Chief editor

Արտակ Ասատրյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Artak Asatryan – PhD in Law

Հրանուշ Հակոբյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Hranush Hakobyan – Doctor of Law, Professor

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Harutyunyan – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Khachatryan – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor

Վոլոդյա Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Volodya Hovhannisyan – Doctor of Law, Associate Professor

Արմեն Եսայան – Հայաստանի Հանրապետության արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Yesayan – Third Class State Advisor of Justice of the Republic of Armenia, Doctor of Law, Professor

Գրիգոր Բադիրյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր

Grigor Badiryan – Doctor of Law

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Stepan Tsaghikyan – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian University, Doctor of Law, Professor

Սերգեյ Առաքելյան – «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Sergey Arakelyan – Rector of “Academy of Justice” SNCO, Doctor of Law, Professor

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Ruzanna Hakobyan – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor

Ժորա Ջհանգիրյան – «Գլաժոր» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դոկտոր, պրոֆեսոր

Zhora Jhangiryan – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ruben Avagyan – Rector of “Manc” University, Doctor of Law, Professor

Արփիմեն Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Arpine Hovhannisyan – PhD in Law, Associate Professor

Սուրեն Քրմոյան – ՀՀ փոխվարչապետի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու

Suren Krmoyan – Adviser to Deputy Prime Minister, PhD in Law

Սերգեյ Հայրապետյան – Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Sergey Hayrapetyan – Doctor of Historical Sciences, Professor

Աշոտ Ենգոյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Engoyan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor

Գարիկ Քեռյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Garik Keryan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor

Մուշեղ Հովսեփյան – ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Mushegh Hovsepyan – Head of Chair / Faculty of Journalism- Chair of Printed and Broadcast Media of YSU, Doctor of Philological Sciences, Professor

Էդուարդ Ղազարյան – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ղեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Eduard Ghazaryan – Dean of the Faculty of Agribusiness and Economics of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor

Օտարերկրյա անդամներ

International members

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Hayk Kupelyants – PhD in Law

Ալեքսանդր Արիմով – ՌԴ Սանկտ Պետերբուրգի պատիժների իրականացման դաշնային ծառայության համալսարանի ղեկավար, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Alexandr Krymov - Head of the St. Petersburg University of the Federal Penitentiary Service of Russia (FPS of Russia), Major general of the Internal Service, Doctor of Law, Professor

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր

Andrey Skiba – Head of Chair / Legal Faculty- Chair of Criminal and Executive Right of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Law, Associate Professor, Major of Internal Service

Եվգենի Բարաշ – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Yevhen Barash – Doctor of Law, Professor, Honored Worker of Science and Technology of Ukraine

Հենրիկ Լինդերբորգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր

Henrik Lindeborg – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Law

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Nikita Ivanov – Head of the Chair of Penal Right and Criminology of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Սերգեյ Չերնյավսկի – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Serhii Cherniavskiy – Vice-Rector of the National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Law, Professor

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Vadim Vinogradov – Head of the Chair of Constitution and International Right of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Վլադիմիր Գուրեն – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Vladimir Gureev – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Associate Professor

Կոնստանտին Գուսարով – Յարոսլավ Մուդրիի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Konstantin Gusarov – Head of the Chair of Civil Procedure of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Law, Professor

Վիտալիյ Ստուկանով – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Vitaly Stukanov – Head of Department of Psychology and Pedagogy of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogical Sciences, PhD in Psychological Sciences, Associate Professor

Ալեքսանդր Ռուբիս – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Aleksandr Rubis – Professor of the Department of Criminal Procedure of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Law, Professor

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՆԻ

Արմեն Օհանյան (պատասխանատու քարտուղար), Միլվա Արիստակեսյան (տեխնիկական խմբագիր), Անուշ Հայրումյան (սրբագրիչ), Սամվել Աբրահամյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 6 ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ
Պետության և եկեղեցու տարանջատումը ֆրանսիական լուսավորիչների իրավաքաղաքական հայացքներում
- 10 ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵՂՅԱՆ
Քրեական օրենքի գործողության տարածքային սկզբունքի կիրառման որոշ հիմնախնդիրներ
- 20 ՎԱՐԱՋԴԱՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության էությունը
- 29 ՆԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հիմնահարցեր պարտավորեցման հայցի շրջանակներում
- 36 ՎԻՐԱԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքների սահմանադրաիրավական բովանդակությունն ու նշանակությունը, հարաբերակցությունը սահմանադրական այլ սկզբունքների հետ
- 43 ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ
Պրոբացիոն ծառայության գործառույթներն ու ակներև մարտահրավերները
- 49 ՄԱՐԹԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
Ընտանիքում բռնության դեպքերի քրեաբանական մասնակի վերլուծությունն ու դրա հիման վրա առաջարկությունների մշակումը
- 54 ԼԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Էլեկտրոնային ապացույցները որպես ապացույցի ինքնուրույն տեսակ

ՎԱՋԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավաբան,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՐԱՆՁԱՏՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՅԶՆԵՐՈՒՄ

Հոդվածը նվիրված է աշխարհիկ պետության իրավական ամրագրման հարցի լուսաբանմանը՝ ֆրանսիական լուսավորչական իրավաբանական մտքի համատեքստում: Հայտնի է, որ պետություն-եկեղեցի հարաբերությունների իրավական կարգավորման գործում հսկայական ազդեցություն ունեցան Նոր շրջանի հեղափոխական տեղաշարժերը, մասնավորապես՝ անգլիական և ֆրանսիական բուրժուադեմոկրատական հեղափոխությունները: Վերջինիս գործնական իրականացումը տեղի ունեցավ այնպիսի պատմաբանական իրողությունների կիզակետում, երբ առարկայական խնդիր էր դրվել միապետական կարգերի վերանայման և մարդու բնական իրավունքների ճանաչման համար: Ֆրանսիացի լուսավորիչները իրենց բնորոշ մատերիալիստական աշխարհայացքի դիրքերից կանխորոշեցին հեղափոխական այս գաղափարների կյանքի կոչումը, այդ թվում՝ նաև պետությունից եկեղեցու առանձնացումը և խղճի ազատության իրավունքի ամրագրումը:

Հիմնադրադր՝ աշխարհիկ պետություն, պետություն-եկեղեցի փոխհարաբերություններ, խղճի ազատության իրավունք, ֆրանսիական լուսավորչական իրավաբանական միտք:

Մեր օրերում բավական արդիական հիմնահարց է պետակեղեցական հարաբերությունների համարժեք գնահատումը, դրանց տեսաբանական և գործնական հիմնահարցերի քննարկումը: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում պետություն-եկեղեցի տարանջատման սկզբունքը՝ որպես Նոր ժամանակներում ամրագրված իրավական գաղափար: Հարկ է արձանագրել այն, որ եկեղեցին պետությունից անջատելու հետևողական գործընթացը սկիզբ դրվեց ավատատիրական հասարակական-տնտեսական հասարակարգից կապիտալիզմին անցնելու պատմավուրում: Հայտնի է, որ այդ անցումը նախանշվեց բուրժուադեմոկրատական հեղափոխություններով, որոնցից, մասնավորապես, ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը գաղափարական և գործնական առաջամարտիկը դարձավ աշխարհիկ պետության իրավական ամրագրման գործընթացում:

Ժողովրդավարական կարգախոսների ներքո ծավալվող հեղափոխության ալիքը նշանավորվեց քաղաքացիական պատերազմով, արյունալի տեռորով, որի թիրախ դարձան հատկապես միապետական կարգերն ու եկեղեցին: Այդ պայքարի գաղափարական, տեսական հենքը ապահովեցին ֆրանսիական մատերիալիստ-լուսավորիչները՝ Ժ. Լամետրին, Պ. Հոլբախը, Ֆ. Վոլտերը, Դ. Դիդրոն, Կ. Հելվեցիուսը և այլք, որոնց վրա, իր հերթին, հիմնարար ազդեցություն էր գործել ֆրանսիացի լուսավորիչ Պիեռ Բեյլի¹ «ոչ թե բանականությունը

պետք է ենթարկվի հավատին, այլ հավատը պետք է ենթարկվի բանականությանը» հիմնադրույթը:

Այս տեսական մեկնակետից ելնելով՝ ֆրանսիացի «մարտնչող մատերիալիստները» կրոնը հակադրեցին բանականությանը և անողորմ հարձակում սկսեցին Կաթոլիկ եկեղեցու դեմ՝ հրապարակ նետելով նրան ուղղված Վոլտերի հայտնի «ճգմենք սողունին» նշանաբանը: Հակակրոնական շարժումը սուր բնույթ ընդունեց հատկապես քրիստոնեության պարագայում, որի հետևանքով ազգայնացվեցին եկեղեցական հողերը, փակվեցին մի շարք եկեղեցական կառույցներ:

Հատկանշական է, որ ֆրանսիացի լուսավորիչների պայքարն ընդդեմ կրոնի ու եկեղեցու, ընդհուպ մինչև 18-րդ դարի կեսը ծավալվում էր «դեիզմի» դրոշի ներքո, այսինքն, մի կողմից նրանք Աստծուն ընդունում էին որպես աշխարհի արարիչ, մյուս կողմից՝ պաշտպանում այն դրույթը, որ գերբնական ուժերը չեն միջամտում բնության և հասարակության զարգացմանը²: Սակայն հարկ է ընդգծել այն փաստը, որ իրենց հետագա նախաձեռնություններում մարտնչող մատերիալիզմի տեսաբանները աստիճանաբար հաղթահարեցին դեիզմի սահմանափակվածությունը և բացահայտ աթեիստական կողմնորոշում որդեգրեցին³:

Այդուհանդերձ, հիմք ընդունելով բանականության գերակայությունը՝ ոչ բոլորն էին անտեսում կրոնի սոցիալական նշանակությունը: Ֆրանսիական հեղափոխության նախակարապետ Լուի Մոն-

տեսքում, վստահ կողմնակիցը լինելով պետություն-եկեղեցի գործառնության շարանջատմանը և խղճի ազատության ապահովմանը, միաժամանակ, բարձր էր գնահատում քրիստոնեության դերը՝ հատկապես միապետերի հնարավոր անմարդկային վարքագիծը զսպելու և կամայական քայլերը կանխելու տեսանկյունից: Այս առումով՝ Մոնտեսքյուն, նույնիսկ, ինչ-որ տեղ խելամիտ էր համարում պետական եկեղեցու կամ կրոնի դերը՝ որպես միասնականության խթանող գործոն: Ըստ Մոնտեսքյոյի՝ մարդկային օրենքները, ավանդույթները և կրոնական կարգադրագրերը, ունենալով տարբեր ծագում, նպատակ և գործառնություն, պետք է միտված լինեն քաղաքացիների բարոյական որակների բարձրացմանը և նրանց հարաբերություններում ապահովեն հանդուրժողականություն⁴:

Ֆրանսիական լուսավորականության ջահակիր Ֆրանսուա Վոլտերն իր «Հանդուրժողականության մասին» տրակտատում այն վստահ կարծիքին էր, որ մարդու համոզմունքների և դրանք հրապարակալորեն դավանելու ազատությունը, որը չի վնասում հասարակության մյուս անդամների իրավունքները, նույնքան կարևոր իրավունք է, որքան անձնական ազատության և սեփականության իրավունքը: Մարդկային օրենքը հիմնված է բնական իրավունքի վրա, իսկ խղճի ազատությունը մարդու բնական իրավունքն է: Վոլտերի պնդմամբ մարդկության ընդհանուր բարիքը. «...պահանջում է համոզմունքի, խղճի, պաշտամունքի ազատություն, առաջին հերթին, նրա համար, որովհետև այդ ազատությունը ժողովրդի միջև իրական եղբայրություն հաստատելու միակ միջոցն է»⁵: Միաժամանակ, հավատքի նկատմամբ հանդուրժողականությունը հուսալի երաշխիք է՝ ելնելով պետական անվտանգության և կայունության ապահովման նկատառումներից, քանի որ տարամետ կարծիքների բաժանված հասարակությունը հանդուրժողականության շնորհիվ չի կարող իշխանատենչ հավակնություններ դրսևորել: Հետևաբար՝ հարկավոր է լինել արդարադատ և ներողամիտ, չէ որ բոլորն էլ, ի վերջո, ստեղծված են մեկ Աստծո կողմից⁶: Վոլտերի այս հանդուրժողականությունը, լինելով նրա իրավաքաղաքական մտքի անբաժանելի մասը, հանում արդարության, պետք է ասել, որ ուներ որոշակի հակասական երանգներ, այն պարզ պատճառով, որ դա չէր դրսևորվում Կաթոլիկ եկեղեցու և վերջինիս դավանանքի նկատմամբ, և, ավելին, նույնիսկ կտրուկ և բացահայտ կերպով հակադրվում էր դրան:

Ժողովրդավարական իդեալների հաստատագրման գործում նշանակալի ազդեցություն ու-

նեցավ Ժան-Ժակ Ռուսոյի ժողովրդաիշխանության մասին ուսմունքը: Ռուսոն գտնում էր, որ արդարության և իշխանության միակ աղբյուրն Աստված է, բոլոր հիվանդությունների հիմքը նույնպես Աստծուց է, սակայն դա չի արգելում մարդկանց դիմել բժիշկի: Եթե արդարության պատկերացումը բոլորի մոտ նույն կերպ ընկալվեր, պետությունը կարիք չէր ունենա ո՛չ կառավարության և ո՛չ էլ օրենքների, այստեղից էլ եզրակացնելով, որ արդարության համար անհրաժեշտ են օրենքներ:

Կողմնակից լինելով կրոնական այլակարծության հաստատմանը՝ Ռուսոն մերժում էր այն վարդապետությունների գոյությունը, որոնք սերմանում են ատելություն և հակադրվում այսպես կոչված «քաղաքացիական պարտքին»: Նա խիստ վտանգավոր էր համարում թեոկրատական պետություններին բնորոշ առանձնահատկությունների տեղայնացումը աշխարհիկ պետություններում. «Նա, ով կասի Եկեղեցուց դուրս չկա փրկություն, պետք է վտարվի պետությունից, եթե իհարկե պետությունը Եկեղեցի չէ կամ առաջնորդը քահանայապետ չէ»⁸: Սա թերևս վկայությունն է այն բանի, որ աշխարհիկ պետության մեջ կրոնը չի կարող համապարտադիր լինել բոլորի համար:

Հատկանշական է, որ նոր դարաշրջանում Եվրոպայի կողմից որդեգրած աշխարհիկ սկզբունքները հիմք դրեցին պետություն-եկեղեցի հարաբերությունների նոր մեկնակետին՝ կանխորոշելով աշխարհիկ պետությունների կազմավորումը: 1789թ. Ֆրանսիայի օրենսդիր մարմնի կողմից ընդունված Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը սահմանեց կրոնական բազմակարծության (Հոդ. 10-րդ) և մտքի ազատության իրավունքը (Հոդ. 11-րդ): 1790թ. հուլիսի 12-ին Ֆրանսիայի Սահմանադիր ժողովի կողմից ընդունվեց «Հոգևոր դասի քաղաքացիական սահմանադրություն» («Constitution civile du clergé») վերտառությամբ օրենքը, որի արդյունքում՝ Ֆրանսիայի Կաթոլիկ եկեղեցին անջատվեց Հռոմի Կաթոլիկ եկեղեցուց և ամբողջությամբ անցավ իշխանությունների ենթակայության տակ: Վարչական դեպարտամենտների քանակին համապատասխան ստեղծվեցին եկեղեցական թեմեր, իսկ եկեղեցուն պատկանող հողատարածքները ազգայնացվեցին: Հոգևոր սպասավորների համար սահմանվեց տեղական ինքնակառավարման մարմիններին ծառայողական երդում տալու պարտավորություն, որը մեծ վրդովմունք առաջացրեց հոգևորականության շրջանում: Արդյունքում՝ շատերը հրաժարվեցին հոգևոր սպասավորությունից: Հետագայում եկեղեցական ծեսով կատարված ամուսնությունը իր տեղը զիջեց քաղա-

քացիական ամուսնությանը, ինչպես նաև վերացվեց ընտրական իրավունքի իրացման համար Կաթոլիկ եկեղեցու հետևող լինելու պահանջը¹։ Միաժամանակ, հիշյալ զարգացումների շնորհիվ մարմնավորվեց և տեսական հարթությունից իրավական դաշտ տեղափոխվեց եկեղեցու և պետության անջատման դոկտրինը։ Արդեն 1793թ. յակոբինյան իշխանության կողմից ընդունված Հռչակագրի 7-րդ հոդվածը սահմանեց խղճի ազատության իրավունքը, իսկ 1795թ. *փետրվարի 21-ին ընդունված օրենքի համաձայն՝ սահմանվեց կրոնական պաշտամունքի ազատության իրավունքը և արգելք դրվեց պետության կողմից որևէ կրոնի ֆինանսավորման կամ այլ կերպ աջակցության վրա*։

Հատկանշական է, որ Ֆրանսիան առաջինը աշխարհում ընդունեց օրենք եկեղեցու և պետության անջատման մասին (*«La séparation des Églises et de l'État»* (1905 թ.)), որով ուժը կորցրած ճանաչվեց Նապոլեոն Բոնապարտի և Հռոմի Պիոս 8-րդ պապի միջև ստորագրված Կոնկորդատը¹⁰։ Ինչպես ժամանակակիցներն են բնորոշում ֆրանսիա-

կան պետության և կաթոլիկ եկեղեցու պայքարը՝ որպես «երկու Ֆրանսիաների առճակատում», պայմանականորեն ասած, ավարտվեց եկեղեցու պարտությամբ։ Եկեղեցու և պետության մասին անջատման օրենքով ազգայանցվեց կրոնական կառույցներին պատկանող գույքի մեծ մասը, իսկ պետական բյուջեից քահանաների վճարվող աշխատավարձը դադարեցվեց։

Այսպիսով պարզ է դառնում պետություն-եկեղեցի հարաբերություններում ֆրանսիական լուսավորչական մտքի մեծ ազդեցությունը։ Ֆրանսիական աշխարհիկ պետության մոդելը՝ լաիցիզմը, դարձավ ընդօրինակելի մի շարք եվրոպական պետությունների համար։ Ուշագրավ է նաև այն, որ, եթե ֆրանսիական աշխարհիկ մտածողությունը գնաց եկեղեցուն հակադրվելու ուղղով, ապա անգլո-սաքսոնականը ընտրեց «պետություն-եկեղեցի» հարաբերությունների համադրման կոնսենսուսային ձևաչափը։

¹ Պ. Բեյլի՝ այդ ժամանակների համար չափազանց մեծ հանդուրժողականության և բանականության գովերգումը, արժանացավ այնպիսի դիմադրության, որի պարագայում պարզապես այրեցին նրա աշխատությունները։ Թեև պետք է նաև նշել, որ հետագա կյանքի և գործունեության ընթացքում նշանավոր մտածողը նահանջեց իր որոշ մոտեցումներից, մասնավորապես՝ աթեիստական աշխարհընկերումը համարելով վտանգավոր պետության համար։ Այլ կերպ ասած՝ պետությունը ոչ միայն պարտավոր է միջոցներ ձեռք առնել նրանց նկատմամբ, ովքեր խախտում են օրենքներն ու սովորույթները, այլև նրանց՝ ովքեր չեն երկյուղում Աստծո դատաստանից։

² Կուզնեցով Վ., Թող չքվի խավարը, 18-րդ դարի մատերիալիստները աթեիզմի, կրոնի, եկեղեցու մասին, Եր., 1980թ., էջ 4։

³ Թորոսյան Վ., Աշխարհիկ պետության ծագումը և զարգացումը, «Արդարադատություն» գիտական հանդես, 2018թ., N 1 (42) էջեր 9-14։

⁴ Монтескье Ш. Л., О духе законов, Избранные произведения. // Институт философии АН СССР, М.: Государственное издательство политической литературы, 1955, С. 530-560.

⁵ Вольтер, Трактат о веротерпимости, Философские трактаты и диалоги, М.: Изд-во Эксмо, 2005, С. 138.

⁶ Նույն տեղում, էջ 203։

⁷ Руссо Ж. Ж., Об Общественном договоре, или Принципы политического Права, Об общественном договоре. Трактаты / Пер. с фр., М.: «КАНОН-пресс», «Кучково поле», 1998, С. 226-227.

⁸ Նույն տեղում, էջեր 321-322։

⁹ Боберо Ж., Светскость: французская исключительность или универсальная ценность? https://zn.ua/SOCIETY/svet-skost_frantsuzskaya_isklyuchitelnost_ili_universalnaya_tsennost.html։

¹⁰ Понкин И. В., Столетие французского закона о разделении церквей и государства.–М.: 2005, С. 21.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. Կուզնեցով Վ., Թող չքվի խավարը, 18-րդ դարի մատերիալիստները աթեիզմի, կրոնի, եկեղեցու մասին, Եր., 1980թ.։
2. Монтескье Ш. Л., О духе законов, Избранные произведения. // Институт философии АН СССР, М.: Государственное издательство политической литературы, 1955.
3. Թորոսյան Վ., Աշխարհիկ պետության ծագումը և զարգացումը, «Արդարադատություն» գիտական հանդես,

2018թ., 2018 N 1 (42):

4. Вольтер, Трактат о веротерпимости, Философские трактаты и диалоги, М.: Изд-во Эксмо, 2005.
5. Руссо Ж. Ж., Об Общественном договоре, или Принципы политического Права, Об общественном договоре. Трактаты / Пер. с фр., М.: «КАНОН-пресс», «Кучково поле», 1998.
6. Боберо Ж., Светскость: французская исключительность или универсальная ценность?
7. Понкин И. В., Столетие французского закона о разделении церкви и государства. М.: 2005.

Ваге Торосян

Юрист Европейского университета,
кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Разделение государства и церкви в правовом и политическом контексте французского Просвещения

Статья посвящена освещению вопроса о правовой фиксации светского государства в контексте политико-правовой мысли французского Просвещения. Примечательно, что революционные изменения в Новой Эре, в частности, англо-французские буржуазно-демократические революции, оказали огромное влияние на правовое урегулирование государственно-церковных отношений. Практическая реализация последнего имела место в центре таких исторических и политических реалий, когда была поставлена основная задача по пересмотру монархического строя и признанию естественных прав человека. Французские просветители, исходя из своего типичного материалистического мировоззрения, предопределили реализацию этих революционных идей, включая отделение церкви и право на свободу совести.

Ключевые слова: светское государство, государственно-церковные отношения, право на свободу совести, французское просвещение, юридическая и политическая мысль.

Vahe Torosyan

Lawyer at European University,
PhD in Law

SUMMARY

The separation of state and church in the legal-political context of the French Enlightenment

The article is devoted to the coverage of the issue of legal fixation of the secular state in the context of the French Enlightenment legal-political thought. It is noteworthy that the revolutionary changes in the New Era, in particular the Anglo-French bourgeois-democratic revolutions, had a huge impact on the legal settlement of state-church relations. The practical implementation of the latter took place in the center of such historical and political realities, when a substantive task was set for the revision of the monarchical order and the recognition of human natural rights. The French Enlighteners, from their typical materialist worldview, predetermined the realization of these revolutionary ideas, including the separation of the church and the right to freedom of conscience.

Key words: Secular state, state-church relations, right to freedom of conscience, French Enlightenment legal-political thought.

Բնագիրը ներկայացվել է 14.07.2020թ.

Ընդունվել է տպագրության 09.09.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու Կ. Հակոբյանը

ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և
ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման
բաժնի մասնագետ,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Սույն աշխատանքում քննարկվում են տարածության մեջ քրեական օրենքի գործողության տարած-
քային սկզբունքի կիրառման հիմնախնդիրները: Ուսումնասիրության ենթարկելով ՀՀ օրենսդրությունը և
միջազգային իրավական ակտերը՝ ներկայացվում են պետության տարածքի սահմանման հետ կապված
խնդիրները, հանցանքի կատարման վայրի որոշման և տարածքային սկզբունքի կիրառման բացառու-
թյունների հիմնախնդիրները: Կատարված հետազոտության հիման վրա ներկայացվում են առաջարկու-
թյուններ՝ ուղղված ՀՀ օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը:

*Հիմնաբառեր՝ քրեական օրենք, գործողություն տարածության մեջ, տարածքային սկզբունք, ճանա-
չում չստացած պետություն, որևէ պետության չպատկանող տարածք, տևող և շարունակվող հանցագոր-
ծություններ, համացանց, համակարգչային հանցագործություններ:*

Հանցանքի կատարման վայրի որոշումն
առանցքային նշանակություն ունի քրեական իրա-
վունքում, քանի որ առանց դրա անհնար է հստա-
կեցնել, թե ո՞ր պետության օրենսդրությունն է կի-
րառելի, ո՞վ և ի՞նչ չափով իրավունք ունի կիրառե-
լու քրեաիրավական հակազդման միջոցներ:

Հիմնական խնդիրը, որ ծագում է նշված ինս-
տիտուտի կիրառման ժամանակ, պայմանավոր-
ված է նրանով, որ տարածության մեջ քրեական
օրենքի կիրառման հարցերին անդրադառնալիս
պետք է հաշվի առնել ոչ թե մեկ, այլ մի քանի պե-
տության շահերը՝ իրենց տարբեր օրենսդրական
կարգավորումներով:

Տարածության մեջ քրեական օրենքի գործո-
ղության հարցը թե՛ տեսաբանների շրջանում և թե՛
իրավակիրառ պրակտիկայում հաճախ բախվում է
անլուծելի թվացող մի շարք խնդիրների. ինչպե՞ս
վարվել այն դեպքերում, երբ հանցանքը սկսվել է,
օրինակ՝ ՀՀ-ում, բայց ավարտվել միջազգային
հանրության կողմից դեռևս ճանաչում չստացած
պետությունում, օրինակ՝ Արցախում, կամ ինչպե՞ս
կանոնակարգել այն իրավիճակները, երբ հանցան-
քը կատարվել է մի պետության տարածքում, սա-
կայն սահմանների ճշգրտման արդյունքում ներկա-
յումս այն արդեն հանդիսանում է մեկ այլ պետու-
թյան տարածք՝ գործող ուրույն օրենսդրությամբ և
այլն:

Քրեական օրենքի գործողությունն ասելով՝ ըն-
դունված է հասկանալ քրեական օրենքի գործողու-

թյան կամ իրագործման ոլորտը: Քրեական օրեն-
քը, ինչպես և ցանկացած այլ իրավական ակտ, ու-
նի գործողության որոշակի տարածքային սահմա-
նափակումներ: Դրանք այն սահմանափակումներ
են, որոնք վերաբերում են տարածքին, ժամանա-
կին և այլ հանգամանքներին:

Տարածության մեջ քրեական օրենքի գործո-
ղությունն ասելով ընդունված է հասկանալ՝ քրեա-
կան օրենքի առաջ դրված այն հանձնարարակա-
ններն ու մարտահրավերները, որոնք կատարվում
են, կամ կարող են կատարվել՝ ելնելով տարածքա-
յին սահմանափակման սկզբունքից կամ գաղա-
փարից: Քրեական օրենքի գործողությունն ասելով
ընդունված է հասկանալ նաև քրեական օրենքի
կամ դրա նորմերի գործողության այս կամ այն ձևը,
քրեաիրավական կարգավորման կոնկրետ մեխա-
նիզմները¹:

Այս ընդհանուր տրամաբանությունից օրենսդ-
րությունը սահմանում է մեկ բացառություն: Խոսքը
դիվանագիտական անձեռնմխելիությամբ օժտված
անձանց և նրանց կողմից հանցանքների կատար-
ման պարագայում քրեաիրավական ներգործու-
թյան միջոցների կիրառման մասին է: Այս անձանց
կողմից հանցանքների կատարման դեպքում
նրանց նկատմամբ քրեաիրավական ներգործու-
թյան միջոցների կիրառման հարցը՝ համաձայն ՀՀ
գործող քրեական օրենսգրքի² (այսուհետ՝ Օրենս-
գիրք) և միջազգային պայմանագրերի, որոշվում է
դիվանագիտական ճանապարհով:

«Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի³ համաձայն՝ դիվանագիտական ներկայացուցչության ներկայացուցիչներ են համարվում դեսպանները, հյուպատոսները, նրանց քարտուղարներն ու օգնականները, խորհրդականները և տեղակալները, ռազմական ատաշեն և նրա օգնականը, առաջին, երկրորդ և երրորդ քարտուղարը և նրանց օգնականները, քարտուղար-արխիվավարը, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները, որոնք ապրում են նրանց հետ համատեղ:

Փոխադարձ փոխգործակցության սկզբունքով՝ դիվանագիտական անձեռնմխելիությանը օժտված անձանց շարքին են դասվում նաև դիվանագիտական ներկայացուցչություններին սպասարկող անձնակազմը, այդ թվում՝ նաև միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձինք, պառլամենտի և ներկայացուցչական այլ մարմինների ներկայացուցիչներ:

Քրեական օրենքի գործողության սկզբունքները համընդհանուր են և պետք է արտացոլեն քրեական օրենքի տրամաբանությունը: Սկզբունքների հիմքում դրված են այն հիմնարար իրավանորմերը, որոնք օգնում են իրականացնելու քրեաիրավական հարաբերությունների լիարժեք կարգավորում:

Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ հիմնված է մի շարք սկզբունքների վրա՝ տարածքային, քաղաքացիության, ունիվերսալ, ռեալ: Առանձին երկրներում գործում է նաև հովանավորչության սկզբունքը, սակայն առաջնահերթ նշանակություն ունի հենց տարածքային սկզբունքի կիրառման հիմնահարցը⁴:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած անձը ենթակա է պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով: Տարածքային սկզբունքը գործում է որոշակի տարածքում արարքի կատարման փաստը որոշելու և անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցները կիրառելու համար:

Նշված սկզբունքի կիրառման առումով առկա են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ ՀՀ օրենսդրությունը չի կանոնակարգում այն իրավիճակները, երբ ՀՀ տարածքից դուրս հանցանքի կատարման պահին անձը հանդիսացել է ՀՀ քաղաքացի, սակայն մինչ պատասխանատվության ենթարկելը դադարել է ՀՀ քաղաքացի լինելուց կամ ընդհակառակը՝ հանցանքի կատարման պահին ՀՀ քաղաքացի չի եղել, սակայն մինչ պատասխանատվության ենթարկվելը ձեռք է բերել ՀՀ քաղա-

քացիություն: Հարց է ծագում՝ կարո՞ղ ենք արդյոք նշված անձանց ենթարկել պատասխանատվության ՀՀ-ում հայտնվելու դեպքում և ո՞ր սկզբունքի հիման վրա՝ քաղաքացիությամբ, թե՞ ունիվերսալ:

Այս առումով առավել հետաքրքիր է Ֆրանսիայի օրենսդրությունը, որի կանոնակարգման համաձայն՝ Ֆրանսիայի տարածքից դուրս հանցանքի կատարման պարագայում գործում է Ֆրանսիայի օրենսդրությունը, եթե հանցանքը կատարվել է Ֆրանսիայի քաղաքացու կողմից, կամ այն անձի, ով թեև հանցանքի կատարման պահին Ֆրանսիայի քաղաքացի չէր, սակայն այն ձեռք է բերել դրանից հետո:

Կարծում ենք՝ ճիշտ կլիներ ՀՀ քրեական օրենսդրությունում ևս ամրագրել այդ մոտեցումը: Այդ առումով, առավել քան ողջունելի է ՀՀ քրեական մոր օրենսգրքի մախագծում⁵ (այսուհետ՝ Նախագիծ) տեղ գտած ձևակերպումը, որի 12-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը հանցանք է համարվում դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք այդ արարքի համար քրեական պատասխանատվության չեն ենթարկվել»:

Հաջորդ խնդիրը կապված է այլ պետության տարածքի հետ: Հնարավոր են իրավիճակներ, երբ հանցանքը կատարվի չճանաչված պետության կամ ընդհանրապես որևէ պետության չպատկանող տարածքում: Նման պարագայում խնդիրներ կարող են ծագել քաղաքացիության սկզբունքի կիրառման առումով: Կարծում ենք՝ ՀՀ քրեական օրենսդրությունը ևս պետք է արձագանքի այդ հարցին:

Նախագծում կրկին այս ուղղությամբ առաջարկ արված է, որը, սակայն, վերաբերում է միայն որևէ պետության չպատկանող տարածքին: Մասնավորապես, Նախագծի 12-րդ հոդվածում ամրագրված է, որ, եթե քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրա-

պետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց կողմից կատարվել է որևէ պետության չպատկանող տարածքում, ապա այդ արարքը կատարած անձինք ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքի համար որպես պատիժ նախատեսված է ազատազրկում: Կարծում ենք, որ նման ձևակերպումը թեև արդարացված է, սակայն անհարկի ընդլայնում է այն արարքների շրջանակը, որոնց պարագայում պետությունը պետք է արձագանքի, քանի որ քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցանքների ճնշող մեծամասնության համար, սանկցիայում նախատեսված է ազատազրկում: Թերևս ավելի ճիշտ կլիներ որոշակիորեն սահմանափակել ազատազրկման ժամկետը և օրենսդրությունն ամրագրել, որ այդ դրույթը կիրառելի է այն դեպքերում, երբ կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն: Մինևույն ժամանակ, կարծում ենք, որ օրենսդրություն պետք է ամրագրվի, որ, եթե հանցանքը կատարվել է չճանաչված պետության տարածքում և քաղաքացիության սկզբունքին բավարարող սուբյեկտը հայտնվել է ՀՀ տարածքում, ապա նա ենթակա է պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով՝ մեր երկրում այդ արարքը հանցանք համարվելու պարագայում:

Հարկ է նկատել, որ քաղաքացիության սկզբունքն ամրագրում է ստացել բազմաթիվ երկրների օրենսդրությամբ: Համաձայն Շվեյցարիայի օրենսդրության՝ ցանկացած պարագայում այլ պետության տարածքում հանցանք կատարած Շվեյցարիայի քաղաքացին քրեական պատասխանատվության է ենթարկվելու Շվեյցարիայի օրենսդրությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, եթե հանցանքի կատարման երկրի օրենսդրությամբ ավելի մեղմ պատասխանատվություն է նախատեսվում այդ արարքի համար: Այս դեպքում անձը պատասխանատվության կենթարկվի այդ երկրի օրենքով⁶:

Օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է քրեական օրենքի տարածության մեջ գործողության ունիվերսալ սկզբունքը, համաձայն որի՝ օտարերկրյա քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր հանցանքը կատարել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության

քրեական օրենսգրքով, եթե նրանք կատարել են այնպիսի հանցագործություններ, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով:

Որպես այդպիսին, այս սկզբունքն իր էությունը ընդհանուր տարածքային սկզբունքից բացառում է: Այս սկզբունքի էությունը այն է, որ անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում ցանկացած պետության կողմից իր երկրի օրենքներով՝ անկախ այն հանգամանքից, որտեղ է նրա կողմից կատարվել հանցանքը: Ն.Գ. Մերգիսյանին, փորձելով բացահայտել սկզբունքի էությունը, նշում էր, որ տվյալ սկզբունքի էությունը հետևյալն է՝ այն պատասխանատվություն է սահմանում ցանկացած պարագայում և ցանկացածի նկատմամբ՝ անկախ հանցանքի կատարման վայրից⁷:

Ճապոնիայի օրենսդրությունը բավականին հետաքրքիր իրավակարգավորումներ ունի այս հարցի հետ կապված: Ասվածը մասնավորապես վերաբերում է նրան, որ քրեական օրենսգրքի որոշ հոդվածներ անվերապահորեն կիրառելի են պետության տարածքից դուրս հանցանք կատարած ցանկացած անձի նկատմամբ, որը սահմանվում է քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերով և միջազգային պայմանագրերով⁸: Գերմանիայի օրենսդրությունը սահմանում է կոնկրետ տեսակի հանցագործություններ, որոնց պարագայում այս սկզբունքը համարվում է կիրառելի: Ֆրանսիայի օրենսդրությունը հստակ սահմանում է մարդկության դեմ ուղղված հանցագործությունների տեսակները և նրանց նկատմամբ նշանակման ենթակա պատիժը⁹:

Ռեալ սկզբունքի էությունը հետևյալն է, որ այն ապահովում է քրեական օրենքի գործողության էքստերիտորիալության սկզբունքը, ինչի պայմաններում ապահովում է տվյալ պետության և նրա քաղաքացիների պաշտպանությունը հանցագործություններից: Այսպես, Օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը ամրագրում է, որ օտարերկրյա քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր հանցանքը կատարել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե նրանք կատարել են այնպիսի ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ, որոնք ուղղված են Հայաստանի Հանրապետության շահերի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և ազատությունների դեմ: Կարծում ենք՝ Օրենսգրքում, ռեալ

սկզբունքի ձևակերպման մեջ, առկա է որոշակի անհամաչափություն. եթե հանցանքը կատարվել է ՀՀ տարածքից դուրս և ուղղված է ՀՀ շահերի կամ նրա քաղաքացիների իրավունքների և ազատությունների դեմ, ապա պատասխանատվություն պետք է սահմանվի ոչ թե միայն ծանր կամ առանձնապես ծանր, այլ՝ ցանկացած հանցանքի համար: Ուստի, առաջարկում ենք Օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություն:

Բավականին հետաքրքիր և ուշագրավ է նաև արտասահմանյան երկրների փորձը քննարկվող թեմայի վերաբերյալ: Այսպես, Գերմանիայի քրեական օրենսգիրքը, փորձելով հարցին տալ հնարավորինս մանրակրկիտ իրավական կարգավորում, մեկ առանձին հոդվածով է սահմանում հանցանքի կատարման վայրը: Այսպես՝ հանցանքի կատարման վայր է համարվում այն վայրը, որտեղ հանցավորը գործել է, կամ անգործության դեպքում դրսևորվել է նրա հանցավոր անգործությունը: Այլ կերպ ասած, այստեղ հանցանքի կատարման վայրը կախման մեջ է դրվում՝ ելնելով այն հանգամանքից՝ արդյոք մենք գործ ունենք նյութական, թե ձևական հանցակազմերի հետ¹⁰: Հատուկ ուշադրության է արժանանում միայն մեկ հանգամանք, այն է՝ եթե հանցանքը կատարվել է հանցակիցների մասնակցությամբ: Այդ պարագայում հստակեցվում է քաղաքացիության և քրեական օրենքի՝ տարածքում գործողության հարցը:

Հարցը բավականին հետաքրքիր իրավական կարգավորում է ստացել Ֆրանսիայի քրեական օրենսգրքում: Այստեղ կապ ունեն երկրի թե՛ ցամաքային, թե՛ ջրային և թե՛ օդային սահմանները, ուստի, ասելով հանցանքի կատարման վայր՝ Ֆրանսիայի օրենսդրությունը հասկանում է վայրը, որտեղ կատարվել է հանցանքը՝ անկախ տարածքի տեսակից¹¹:

Օրենսգիրքը 14-րդ հոդվածով է կարգավորման ենթարկում հանցանքի կատարման վայրի հետ կապված իրավահարաբերությունները, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված է համարվում այն հանցանքը, որը սկսվել, շարունակվել կամ ավարտվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, հանցակցությամբ կատարվել է այն անձանց հետ, ովքեր հանցավոր գործունեություն են իրականացրել այլ պետության տարածքում:

Առանձնակի կարևորություն է տրվում նաև տևող ու շարունակվող հանցագործությունների, հանցակցությամբ կատարվող հանցանքների կատարման վայրի որոշմանը:

Տևող հանցագործությունների ժամանակ հան-

ցանքի կատարման վայրի պարզման համար, որոշակի բացառություններից բացի, մեր կարծիքով, կարևոր նշանակություն ունի, թե որտեղ է խափանվել հանցավոր գործունեությունը: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) Ս. Ղամբարյանի և մյուսների գործով իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ տևող հանցագործությունները դրսևորվում են հանրորեն վտանգավոր գործողության կամ անգործության, տևական ժամանակահատվածում անընդմեջ իրականացմամբ, զուգորդվում են օրենքով հանցավորի վրա դրված պարտականությունների տևականորեն չկատարմամբ և ավարտված են համարվում արարքի դադարման պահից, որը կարող է պայմանավորված լինել ինչպես հանցավորի գործողություններով (օրինակ՝ մեղայականով ներկայանալով), այնպես էլ՝ նրանից անկախ հանգամանքներով (օրինակ՝ իրավապահ մարմինների միջամտությամբ և այլն)¹²: Վճռաբեկ դատարանը վերահաստատում է վերը մեջբերված դիրքորոշումն առ այն, որ տևող հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքը կրում է ոչ թե մեկանգամյա բնույթ, այլ դրա իրականացումը բնութագրվում է՝ տևական ժամանակահատվածում անընդհատ իրականացվող գործընթացով: Հետևաբար՝ տևող հանցագործությունների դեպքում հանցանքը կատարելու ժամանակ պետք է դիտել հանցավոր արարքը իրականացնելու ամբողջ ժամանակահատվածը՝ սկսելու պահից մինչև դրա դադարման պահը: Այլ խոսքով՝ տևող հանցագործության կատարման ժամանակ պետք է հասկանալ դրա իրականացման ժամանակահատվածի ցանկացած միավորը մինչև դրա դադարումը:

Վերոգրյալով պայմանավորված՝ կարծում ենք, որ հանցանքի կատարման վայրի պարզման հարցի լուծումը կախված է տևող հանցագործության կոնկրետ տեսակի առանձնահատկություններից: Օրինակ՝ ՀՀ զինծառայողին, որը դասալքություն է կատարել և փախուստի դիմել ու բռնվել այլ պետության տարածքում, պետք է պատասխանատվության ենթարկել ոչ թե այդ պետության, այլ՝ ՀՀ քրեական օրենքով: Միևնույն ժամանակ, օրինակ, ապօրինի կերպով հրազեն կրող անձը, որը հանցանքը սկսել է ՀՀ-ում, այնուհետև այն շարունակել այլ պետության տարածքում ու բռնվել այնտեղ, պետք է պատասխանատվության ենթարկվի այդ պետության քրեական օրենքով¹⁴:

Շարունակվող հանցագործությունների կատարման վայր է համարվում այն տարածքը, որտեղ իրականացվել է հանցագործության բաղկացուցիչ մասը հանդիսացող միաբնույթ կամ նույնա-

կան արարքներից վերջինը: Օրինակ՝ անձը հափշտակություն է իրականացնում մի քանի պետությունների տարածքով երթևեկող բեռնատար գնացքից: Այս դեպքում հանցանքի կատարման վայր է համարվում այն պետության տարածքը, որտեղ իրականացվել է հափշտակություն հանդիսացող արարքներից վերջինը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ շարունակվող հանցագործությունները բաղկացած են մեկից ավելի նույնական արարքներից, որոնցից յուրաքանչյուրը թեկուզև ինքնուրույն հանցակազմ է պարունակում, բայց ընդգրկված է միասնական դիտավորության մեջ, հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ, հետևաբար դիտվում է իբրև մեկ հանցագործություն, որն ավարտված է համարվում հանցավորի դիտավորությամբ ընդգրկված վերջին արարքի կատարման պահից՝:

Հանցակցությամբ կատարվող հանցանքների կատարման վայր պետք է համարել այն տարածքը, որտեղ իր հանցավոր արարքներն է իրագործել կատարողը: Օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է ՀՀ տարածքում կատարված, եթե հանցակցությամբ կատարվել է այնպիսի անձանց հետ, ովքեր հանցավոր գործունեություն են իրականացրել այլ պետության տարածքում: Իհարկե, խոսքը կատարողի մասին է, հակառակ դեպքում, եթե կազմակերպիչը, դրոհիչը կամ օժանդակողը գործում են ՀՀ-ում, իսկ կատարողը՝ այլ պետության տարածքում, հանցանքը չի կարող համարվել ՀՀ-ում կատարված:

Հանցանքի կատարման վայրի որոշման ընթացքում որոշակի բարդություններ են առաջանում նաև, երբ խոսքը վերաբերում է ձևական կամ նյութական հանցակազմերին: Տվյալ պարագայում, որքան էլ հանցակազմերի այս բաժանումը կրում է խիստ տեսական բնույթ, այնուամենայնիվ, հարկ է ուշադրության արժանացնել նաև այդ հարցը:

Գիտական գրականության և քրեական օրենսգրքի մեկնաբանություններում ձևական հանցակազմերով հանցանքների կատարման վայր ասելով՝ ենթադրվում է այն վայրը, որտեղ կատարվել է, այսինքն՝ դրսևորվել է հանցավոր գործողությունը կամ անգործությունը¹⁶:

Նյութական հանցակազմի միջոցով նկարագրված հանցագործությունների դեպքերում, երբ հանրորեն վտանգավոր արարքը (գործողությունը կամ անգործությունը) և դրա հետևանքները իրականացվում են միևնույն տարածքում, խնդիրը բարդություններ չի առաջացնում: Իսկ այն դեպքերում, երբ գործողությունը (անգործությունը) կատարվում է մի պետության տարածքում, իսկ հետևանքները վրա

են հասնում մեկ այլ պետության տարածքում, առկա են որոշակի բարդություններ հանցանքի կատարման վայրի հստակեցման մասով: Հեղինակների մի մասը գտնում է, որ այդպիսի դեպքերում հանցանքը կատարելու վայր պետք է համարել այն տարածքը, որտեղ վրա են հասել հանրորեն վտանգավոր հետևանքները: Մյուսները գտնում են, որ նման դեպքերում հանցանքը կատարելու վայր պետք է համարել այն տարածքը, որտեղ կատարվել է հանրորեն վտանգավոր արարքը (գործողությունը կամ անգործությունը), անկախ նրանից, թե որտեղ են վրա հասել վտանգավոր հետևանքները:

Այս հարցի լուծումը կապված է հանցագործության բնույթի, դրա նպատակների և այլ հանգամանքների հետ: Օրենսգրքի հոդված 14-րդի երկրորդ մասի ձևակերպումից երևում է, որ հանցանքը համարվում է ՀՀ տարածքում կատարված նույնիսկ այն դեպքում, երբ այն սկսվել է այլ պետության տարածքում, բայց ավարտվել է ՀՀ տարածքում: Քրեական իրավունքի բուհական դասագրքում այն կարծիքն է արտահայտվում, որ այլ տարածքում սկսված հանցանքը, որը ավարտվել է ՀՀ տարածքում կարող է համարվել ՀՀ տարածքում կատարված հետևյալ դեպքերում՝

1) եթե վտանգավոր հետևանքները տարածվել են ՀՀ տարածքի վրա և հանցանքը ուղղված է ՀՀ կամ նրա քաղաքացիների շահերի դեմ,

2) եթե հանցագործությունը թե՛ փաստացի, թե՛ իրավաբանորեն ավարտվում է ՀՀ տարածքում: Օրինակ՝ եթե ՀՀ տարածքում պայթյուն իրականացնելու նպատակով մեկ այլ պետության տարածքում դեպի Հայաստան ուղևորվող գնացքի մեջ տեղադրվում է հեռակառավարվող ռումբ, որը գործողության մեջ է դրվում ՀՀ տարածքում և վնաս է պատճառում ՀՀ շահերին, ապա հանցանքի կատարման տարածք պետք է համարվի ՀՀ տարածքը:

Այլ պարագաներում՝ ուրիշ պետության տարածքում սկսված հանցանքը, որի հետևանքները վրա են հասել ՀՀ տարածքում, չի կարող համարվել ՀՀ-ում կատարված: Օրինակ՝ եթե հանցավորը գոհին թունավորում է մեկ ուրիշ պետության տարածքում, բայց մահը վրա է հասնում ՀՀ տարածքում, հանցանքը չի կարող համարվել ՀՀ-ում կատարված¹⁷:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումից երևում է, որ հանցանքը համարվում է ՀՀ-ում կատարված, եթե այն սկսվել է ՀՀ տարածքում, բայց ավարտվել է այլ պետության տարածքում: Այս դեպքում ՀՀ-ում սկսված հանցանքը չի կարող համարվել ՀՀ-ում կատարված,

եթե դրա հետևանքները տարածվում են այլ պետության տարածքի վրա և ուղղված են այդ պետության կամ նրա քաղաքացիների շահերի դեմ: Այլ հարց է, որ ՀՀ-ում սկսված հանցանքի հետևանքները, որոնք վրա են հասել այլ պետության տարածքում, ուղղված են ՀՀ կամ նրա քաղաքացիների շահերի դեմ: Այդ դեպքում ՀՀ-ում սկսված հանցանքը, որը թեկուզ ավարտվել է այլ պետության տարածքում, պետք է համարվի ՀՀ-ում կատարված: Այն դեպքերում, երբ սկսված հանցանքը ՀՀ-ում խափանվել է, ապա այն միանշանակ համարվում է ՀՀ-ում կատարված: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ հանցանքը շարունակվում է ՀՀ տարածքում (սկսվել է մի պետության տարածքում, շարունակվել է ՀՀ-ում, ավարտվել մեկ այլ տեղում), ապա այն կհամարվի ՀՀ-ում կատարված միայն այն դեպքում, երբ շարունակվելու ընթացքում, դեռ ավարտին չհասած, խափանվել է ՀՀ-ում:

Տարածքային սկզբունքը գերծ չէ նաև «տարանցիկ հանցագործությունների» հետ կապված խնդիրներից, որոնք միաժամանակ իրականացվում են մի քանի պետությունների տարածքում¹⁸: Հարկ է նաև նշել, որ բարձրացված խնդրի կապակցությամբ կարգավորումներ չի պարունակում ո՛չ Օրենսգիրքը, ո՛չ Նախագիծը:

Քրեական օրենքի գործողության տարածքային սկզբունքի հիմնական դրույթների շրջանակներում ձևակերպվող տրամաբանական էությանը համապատասխան, դրա համատարած և անշեղ գործողության համար, պահանջվում է ստեղծել առանց բացառության բոլոր հանցագործների ըստ նրանց կողմից հանցանքի կատարման վայրի՝ պետությանը հանձնելու ճկուն համակարգ: Սակայն, նման իրավիճակը ձեռնառու չէ նույնիսկ այս սկզբունքի ամենաակտիվ կողմնակիցներին: Օրինակ, ըստ Ռ. Քեսթլինի՝ ավելի ճիշտ է օժտել ներկայացուցչական իրավասության իրավունքով (հանցագործության կատարման վայրում պետության անունից պատասխանատվության ենթարկելու հնարավորություն), քան մեղավորներին հանձնել Գերմանիայի սահմաններից դուրս¹⁹:

Քիչ արդյունավետ է թվում նաև հանցանքի կատարման վայրի հասկացության ընդլայնված մեկնաբանման փորձը («Երկար կամ երկարացված ձեռքի տեսություն» - Theorie der langen oder verlängerten Hand, oder Theorie der erweiterten Handlungsbegriffes և «միջանկյալ ազդեցության տեսություն» - Theorie der Zwischenwirkung oder Zwischenwirkungstheorie)՝ կապված Նորագույն ժամանակաշրջանում տարածում ստացած անդրազգային (տրանսնացիոնալ) հանցանքների

հետ²⁰:

Հանցագործության վայրը մեկնաբանելու փորձերի փոխարեն, թերևս, առավել ճիշտ է թվում ընդլայնել կամ մեղացնել բուն տարածքի հասկացությունը, որի վրա տարածվում է այս կամ այն պետության իրավագործությունը: Այս առումով հատկանշական է Ռ. Խասնուտդինովի դիրքորոշումը, որը մանրամասնորեն վերլուծել է որոշ ոչ աշխարհագրական օբյեկտների, այսպես կոչված, «քվազիտերիտորիաների» գոյության խնդիրը²¹: Ավանդաբար նման օբյեկտների շարքին են դասվում օտարերկրյա ծագման օդային և ջրային նավերը, որոնք գործում են դրոշի ներքո (lex flagi): Ա. Գ. Կնյազևը այս շարքին է դասում նաև դիվանագիտական առաքելությունների տարածքները, հավատարմագրման պետության տարածքում գտնվող շինությունները և կառույցները²²:

Կարելի՞ է արդյոք համացանցը դիտարկել որպես նոր քվազիօբյեկտ: Նման դիրքորոշումը հետաքրքիր է նրանով, որ նման օբյեկտները (ելնելով աշխարհագրական չափանիշներից) գտնվում են ՀՀ իրավական դաշտում, սակայն քրեական իրավագործությունը նրանց վրա չի տարածվում: Միջազգային իրավունքում այս դեպքում ընդունված է խոսել անձեռնմխելիության մասին²³:

Արժե մի քանի վերապահում անել «վիրտուալ տարածության» բնույթի մասին՝ համացանցը որպես քվազիօբյեկտ դիտարկելիս: Այսպես, Շ. Թորնթոնը ԱՄՆ ազգային քրեական իրավասության սահմանման շրջանակներում՝ որպես առաջնային խնդիր, մանրամասն դիտարկում է համացանցի օգտատերերի իրավունքների սահմանափակման խնդիրը՝ պետական կարգավորման փորձերով²⁴: Այստեղից բխում է համացանցի՝ որպես յուրօրինակ վերազգային պլատֆորմի ընկալումը, որի նկատմամբ անիրագործելի է ազգային իրավագործությունը²⁵: Համացանցում շփվելու իրավունքը՝ ամերիկացիների համար, յուրաքանչյուր մարդու վերազգային սուբյեկտիվ իրավունքն է: Այս ոլորտում ձևավորվող վարքագծի նորմերի համակարգը չի կարող կարգավորվել ազգային իրավունքով, քանի որ համացանցը՝ աշխարհագրական առումով, տարածք չէ:

Մի փոքր այլ դիրքորոշում ունեն իրավունքի մայրցամաքային համակարգի ներկայացուցիչները, մասնավորապես, գերմանացի քրեագետները: Է. Հիլգենդորֆը ուղղակիորեն խոսում է համացանցում իրավահարաբերությունների նկատմամբ տարածքային սկզբունքի կիրառելիության մասին՝ առաջարկելով քրեական հետապնդում իրակա-

նացնել քրեական օրենքի գործողության ռեալ սկզբունքի հիման վրա²⁶ : Հարկ է նշել, որ Գերմանիայի օրենսդրության մեջ, ի տարբերություն ՀՀ օրենսդրության, քրեական օրենքի գործողության ռեալ սկզբունքը կիրառվում է բավականին լայն²⁷ :

Մեկ այլ գերմանացի հետազոտող՝ Վ. Հայնշել ֆոն Հայնեգը, ճանաչելով տարածքային սկզբունքի իրականացման անհնարինությունը, առաջնահերթություն է տալիս միջազգային քրեական իրավունքին²⁸ : Դրա հետ մեկտեղ նա հետաքրքիր միտք է առաջ քաշում ինտերնետի ֆիզիկական ենթակառուցվածքի մասին, որը կապված է կոնկրետ տարածքի հետ (տվյալ քրեագետի դատողություններում հղում կա նույնիսկ որևէ պետության էլեկտրացանցերին՝ որպես նման քվազիօբյեկտների սնուցման աղբյուրի):

Նշված աշխատությունների մեծամասնությունում մշտապես խոսվում է տարածքի և ինչ-որ իրավական դաշտի հարաբերակցության մասին, որը աշխարհագրական չափանիշներով կարող է լինել տվյալ տարածքից ինչպես ավելի նեղ, այնպես էլ՝ ավելի լայն: Հետևելով Վ. Հայնշել ֆոն Հայնեգի օրինակին՝ կարելի է «տարածել» ազգային իրավական դաշտի հասկացությունը ոչ միայն համացանցի ենթակառուցվածքների, այլև համակարգչային տեղեկատվության՝ որպես քվազիօբյեկտի վրա:

Թերևս սա ամենահաջողված տարբերակը չէ. բավական է դիտարկել համակարգչային տեղեկատվության իրավիճակը. այն կարող է ազատորեն փոխանցվել մի պետության տարածքից մյուսի տարածք՝ շրջանցելով երրորդը:

Արդյոք այն ունի²⁹ օտարերկրյա տարր, ընկնում է արդյոք lex flagi-ի գործողության տակ:

Հարկ է ասել, որ հարցադրումը, ավաղ, նոր չէ: Չնայած 19-րդ դարում այսպես կոչված «տարանցիկ հանցագործությունների» հարցով սկսված ակտիվ գիտական բանավեճին, գիտնականներից ոչ ոք այդպես էլ չմոտեցավ խնդրի լուծմանը: Անգլիական քրեական իրավունքում հանցագործությունը (օրինակ՝ գրադարությունը), որը կատարվել է փոստային առաքման միջոցով, համարվում է ավարտված վտանգավոր հետևանքների առաջացման վայրում, իսկ փոստը համարվում է innocent agent՝ անմեղ գործակալ²⁹ : Գերմանիայում կոնցեպտուալ լուծում չի գտնվել: Այսպես, գերմանացի քրեագետների ուսումնասիրություններում հետաքրքիր դեպք է նկարագրվել. երբ փոստի միջոցով գրադարտչական հանցագործություն է կատարվել՝ գերմանացի իրավաբանների մեծ մասը հրաժարվել է Գերմանիան հանցագործության վայր ճանաչելուց: Իսկ, երբ առաքման առարկան պայթուցիկ կամ թունավորող

նյութեր է պարունակել, կարծիքը փոխվել է³⁰ : Խորհրդային քրեական իրավունքում, ինչպես նշել է Մ.Ի. Բլումը, բավարար ուշադրություն չի դարձվել այս հարցին³¹ :

Տեղեկատվության դեպքում lex flagi-ի համար միակ հնարավոր «արդարացումը», թերևս, շրջանառության լեզուն է: Կարելի է ասել, որ համացանցում շրջանառվող հայոց լեզվով տեղեկատվությունը պետք է գտնվի ՀՀ օրենսդրության ներքո, քանի որ այն ուղղված է լեզվի կրողներին՝ առավելապես հայերին: Եվ հակառակը՝ համակարգչային տեղեկատվությունը, ունենալով օտար տարր (մեր հասկացողության մեջ օտար լեզվով շարադրված), պետք է գտնվի այլ պետության իրավասության ներքո: Սակայն, նման սահմանումը անհնար է դառնում, քանի որ նույն լեզուներն ունեն տարածում մի քանի երկրներում: Երկրորդ հանգամանքն այն է, որ օտար լեզվի չիմացությունը բնավ այն պատճենը չէ, որը կարող է պաշտպանել հայաստանցիներին արտերկրից կատարվող հեռավար հանցանքներից: Համացանցի լեզվական արգելքը ջնջվում է նույն տեխնոլոգիաների շնորհիվ: Երրորդ հանգամանքն է՝ համակարգչային տեղեկատվության բուն բնույթը, դրա էլեկտրոնային բնույթը³² : Որպեսզի այն ստանա մարդու համար «ընկալելի» տեսք, անհրաժեշտ է վերափոխել մեքենայական կոդից վիզուալ ձևի՝ ի տարբերություն 19-րդ դարի գրավոր հաղորդագրությունների:

Կարծում ենք, որ համակարգչային տեղեկատվությունը, ունենալով նման հատկություններ, չի կարող լինել քրեական օրենքի գործողության տարածքային սկզբունքի շրջանակներում հայցվող քվազիօբյեկտ: Այն, անշուշտ, իրավունքի օբյեկտ է և ամրագրված լինելով նյութական կրիչի վրա՝ նյութական օբյեկտ: Դրա տարածումը և օգտագործումը պետք է կարգավորվի այլ իրավական մեթոդներով, որոնք տարբերվում են նախկինում հայտնիներից:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ համացանցում կատարվող հանցագործությունների վերաբերյալ քրեական օրենքի գործողության տարածքային սկզբունքի իրագործումը հնարավոր է միայն հետևյալ էական պայմանների դեպքում:

Նախ՝ սկզբունքի անմիջական գործողության համար անհրաժեշտ է ստեղծել միասնական իրավական դաշտ: Ընդ որում՝ պարտադիր չէ, որ այն կապված լինի որևէ պետության կոնկրետ տարածքի, իրավական համակարգի հետ:

Համացանցի ենթակառուցվածքն իր բնույթով այնպիսին է, որ անհնար է որևէ պետություն հասնի

գերակայության նրա ռեսուրսների և բովանդակության նկատմամբ: Բավական է համաձայնության գալ հանցագործությունների կազմերի միասնության մասին, որոնք ճանաչվում են որպես համակարգչային: Նման բան կարող է իրականացվել բավականին կարճ ժամանակահատվածում: Սկզբնական փուլը դրվել է Եվրոպայի խորհրդի «Կիբեռ-հանցագործությունների մասին» 2001 թվականի կոնվենցիայով, որը պարունակում է մեծ հանցագործությունների ցանկը³³:

Սակայն հոդվածների կառուցվածքն անկատար է, քանի որ դրանք շատ ընդհանուր բնույթ են կրում: Այս պահին նախապատրաստական և խորհրդատվական աշխատանքներ են տարվում նոր միջազգային փաստաթղթի նախապատրաստման ուղղությամբ: Մեր կարծիքով՝ կարևոր առաջընթաց կլինի ապագա փաստաթղթում կիրառել միասնական պատժամիջոցներ, ինչը մինչ օրս չկա և սկզբունքորեն չի նախատեսվում: Հակառակ դեպքում, յուրաքանչյուր հանցագործ կարող է ընտրել իր համար առավել մեղմ պատիժ բոլոր հնարավորներից՝ պարզապես Եվրոպական միության մի երկրից մյուսը տեղափոխվելով:

Միասնական իրավական դաշտի ստեղծումը, մեր կարծիքով, արտացոլում է քրեական իրավունքի գործողության տարածքային և համընդհանուր սկզբունքների մի սիմբիոզ: Իրականում ունիվերսալ իրավասությունը դեռևս անիրագործելի է: Կարծում ենք, որ խնդիրը կարող է լուծվել ոչ միայն գլոբալ, այլև՝ տեղական մակարդակով: Հայաստանի Հանրապետությունը կարող է ոչ միայն ներգրավվել Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի շրջանակներում՝ քրեական իրավունքի կարգավորման գոյություն ունեցող գործընթացներում, այլև՝ ստեղծել սեփական:

Օրինակ՝ հետխորհրդային տարածքի սահմաններում, որը դեռևս հիմնված է քրեական իրավունքի բովանդակության և գործողության սկզբունքների վերաբերյալ միասնական մոտեցումների վրա, հնարավոր է ընդունել երկկողմ և բազմակողմ նորմատիվ ակտեր, որոնք նվիրված կլինեն համակարգչային հանցավորության դեմ պայքարին, ինչպես նաև՝ աստիճանաբար ընդլայնել նոր ստեղծված իրավական դաշտը սահմանակից երկրներում: Միևնույն ժամանակ, ՀՀ քաղաքացիներին ՀՀ-ի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ չմտած պետությունների կողմից հանցավոր ոտնձգություններից զերծ պահելու համար՝ կարելի է մեկուսացնել համացանցի հայկական հատվածը՝ ՉԺՀ-ի օրինակով: Ինչ-որ իմաստով դա կարող է նշանավորվել մի անցումային

շրջանով՝ համակարգչային հանցագործությունների համար պատասխանատվության միջազգային նորմերի ստեղծման և տարածքային սկզբունքը ունիվերսալի փոխարինելու համար:

Երկրորդ՝ մենք արդարացի ենք համարում նկատել, որ տարածքային սկզբունքը չի կարող լիարժեք իրականացվել հանցագործության վայրում սեփական քաղաքացիներին հանձնելուց հրաժարվելու դեպքում: Ընդհանուր իրավունքի երկրները, որոնք առավել հավատարիմ են տարածքային սկզբունքի դրույթներին, թույլ են տալիս մեծ հնարավորություն: Մայրցամաքային իրավունքի երկրները հերքում են: Դա զրոյացնում է այնպիսի իրավական կատեգորիայի արժեքը, ինչպիսին է հանցագործության կատարման վայրը:

Այսպիսով, եթե համացանցի միջոցով կատարվող հանցագործությունների (ինտերնետ հանցագործություն) խնդիրը դիտարկենք իրավական նոր ֆիլկցիայի՝ քվադիտերիտորիայի տեսանկյունից, որը ձևավորվել է իրավական դաշտի միասնականությամբ, այլ ոչ թե պետական ինքնիշխանության, ապա խնդիրը միանգամայն լուծելի է: Դրա համար անհրաժեշտ է հանցագործության վայր ճանաչել հենց համացանցը, այսինքն՝ համացանցի միջոցով հանցավոր արարքների կատարման բոլոր դեպքերը: Բավական է միայն ամրագրել այս հատուկ իրավական կարգավիճակը միջազգային մակարդակով և, ըստ էության, ստեղծել նոր օբյեկտ՝ հասարակական հարաբերությունները համացանցում:

Միասնական իրավական տարածքի (համակարգչային հանցագործությունների վերաբերյալ) իրավիճակում միանգամայն հնարավոր է քրեական հետապնդում իրականացնել այն պետության կողմից, որտեղ բնակվում է (գտնվում է) տուժողը, քանի որ տվյալ դեպքում ավելի հեշտ կլինի պարզել պատճառված վնասի չափն ու բնույթը և գործի քննությունը պետք է կատարվի ոչ թե «հանցագործության կատարման վայրում», այլ տուժողի բնակության (գտնվելու) վայրում: Այսպիսով, վերոգրյալի հաշվառմամբ տարածքային սկզբունքի նորացված բանաձևը հետևյալն է. համացանցը հանցագործության կատարման վայր ճանաչելու դեպքում պետք է կիրառվի այն պետության ազգային իրավագործությունը, որտեղ բնակվում է (գտնվում է) տուժողը:

- ¹ Տե՛ս, Мельников М.Г., Действие уголовного закона во времени и пространстве. Автореф. дисс. ...канд. юрид. наук. Рязань. 1999, С. 13.
- ² Տե՛ս, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2003 թվականի ապրիլի 18-ին: Ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին: ՀՕ-528-Ն, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407-րդ:
- ³ Տե՛ս, Գիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի կողմից 1961թ. ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 1964թ. ապրիլի 24-ին, գործում է, https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/dip_rel.shtml, հասանելի է 16.06.2020թ-ի դրությամբ: Հայերեն տարբերակը՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=37357> 16.06.2020թ-ի դրությամբ:
- ⁴ Տե՛ս, Dorozhinskaya E. A., Komarov A. A., Krupnitskaya V. I. , Rozuman I. V. The Criminal Law Influence on the Modern Electronic and Information Society of the Russian Federation // International Review of Management and Marketing. 2016. Vol. 6. N 6S. էջեր 165–168.
- ⁵ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագիծ, որը հասանելի է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ www.e-draft.am-ում՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.e-draft.am/projects/2115/about>, հասանելի է 16.06.2020թ-ի դրությամբ:
- ⁶ Տե՛ս, Уголовный кодекс Швейцарии. Перевод с немецкого А.В. Серебренниковой. М., Диалог - МГУ, 2000, С. 8-9.
- ⁷ Տե՛ս, Сергиевский Н.Д., Русское уголовное право. Часть Общая, СПб, 1913, С. 177-178.
- ⁸ Տե՛ս, Преступление и наказание в Англии, США, Франции, ФРГ, Японии: Общая часть уголовного права. М.: Юридическая литература, 1991, С. 221.
- ⁹ Տե՛ս, Крашенинникова Н.А., История государства и права Зарубежных стран: Учебное пособие в 2-х частях, 2-е издание. Ч. II, кн. 2. М.: Изд-во «Юридический колледж МГУ». 1995, С. 178-197.
- ¹⁰ Տե՛ս, Уголовный кодекс ФРГ. М.: Изд-во «Юридический колледж МГУ». 1996, С. 13.
- ¹¹ Տե՛ս, Уголовный кодекс Франции. М., 1993, հոդվածներ 113-1-րդ, 113-2-րդ:
- ¹² Տե՛ս, Սիրաժ Գաբրիելի Ղամբարյանի և մյուսների գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ-0055/01/11 որոշման 21-րդ կետը:
- ¹³ Տե՛ս, Արամայիս Արտավազդի Հարությունյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՍԴ-0204/01/13 որոշման 18-րդ կետ:
- ¹⁴ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2012թ., էջ 70:
- ¹⁵ Տե՛ս, Սիրաժ Գաբրիելի Ղամբարյանի և մյուսների գործով որոշման 21-րդ կետ:
- ¹⁶ Տե՛ս, Уголовное право. Общая часть: Учебник / Под ред. В.Н. Петрашева. М.: «Издательство ПРИОР», 1999, С. 84.
- ¹⁷ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2012թ., էջ 70:
- ¹⁸ Տե՛ս, Фролова А. И., Действие российского уголовного закона в пространстве: законодательная регламентация и перспективы совершенствования с учетом опыта уголовного законодательства зарубежных стран : автореф. дис. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2013г., С. 14.
- ¹⁹ Տե՛ս, Köstlin R., Neue Revision der Grundbegriffe des Kriminalrechts // Allgemeine Literatur-Zeitung. 1845. N 92, էջ 747:
- ²⁰ Տե՛ս, Российское уголовное право. Общая и особенная части : учеб. : в 3 т. Т. 1. Общая часть. 2-е изд., испр. и доп. / под ред. Н. А. Лопашенко. М.: Юрлитинформ, 2014г., С. 49.
- ²¹ Տե՛ս, Хаснутдинов Р. Р., Территориальное и экстерриториальное действие уголовного закона : автореф. дис. ... канд. юрид. наук. Казань, 2007, С.18.
- ²² Տե՛ս, Князев А. Г., Действие уголовного закона в пространстве : автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2006. С. 11.
- ²³ Տե՛ս, Чемеринский К. В., Международно-правовые основы криминализации общественно опасных деяний: отдельные проблемы // Вестник Северо-Кавказского гуманитарного института. 2016. N 1. С. 335.
- ²⁴ Տե՛ս, Thornton S. State Criminal Laws in Cyberspace: Reconciling Freedom for Users with Effective Law Enforcement. *Richmond Journal of Law & Technology*, 1997, vol. IV, iss. 2. Available at: <http://jolt.richmond.edu/v4i2/thornton.html> (հասանելի է՝ 10.07.2020թ. դրությամբ)
- ²⁵ Տե՛ս, Miller S. Prescriptive Jurisdiction over Internet Activity: The Need to Define and Establish the Boundaries of Cyberliberty. *Indiana Journal of Global Legal Studies*, vol. 10, iss. 2, art. 8. Available at: <http://www.repository.law.indiana.edu/ijgls/vol10/iss2/8> (հասանելի է՝ 10.07.2020թ. դրությամբ):
- ²⁶ Տե՛ս, Hilgendorf E. Überlegungen zur strafrechtlichen Interpretation des Ubiquitätsprinzips im Zeitalter des Internet. *Neue juristische Wochenschrift*, 1997, no. 29, էջ 1874:
- ²⁷ Տե՛ս, Жалинский А. Э., Современное немецкое уголовное право. М.: Вэлби: Проспект, 2006, С. 102.
- ²⁸ Տե՛ս, Heintschel von Heinegg W. Legal Implications of Territorial Sovereignty in Cyberspace // 4th International Conference on Cyber Conflict. Tallinn, 2012. URL: https://ccdcoe.org/publications/2012proceedings/1_von_Heinegg_LegalImplicationsOf-TerritorialSovereigntyInCyberspace.pdf (հասանելի է՝ 10.07.2020թ. դրությամբ):
- ²⁹ Տե՛ս, Кенни К., Основы уголовного права / пер. с англ. М.: Иностран. лит., 1949, С. 457.

³⁰ St'u, Hippel R., Deutsches Strafrecht. Bd. 2. Berlin, 1930. էջ 70:

³¹ St'u, Блум М. И., Действие советского уголовного закона в пространстве: учеб. пос. Рига: ЛГУ им. П. Стучки, 1974, С. 130.

³² St'u, Евдокимов К. Н., Актуальные вопросы совершенствования уголовно-правовых средств борьбы с компьютерными преступлениями // Вестник Казанского юридического института МВД России. 2016. N 2 (24). С. 65.

³³ St'u, Convention on Cybercrime // Council of Europe : [պաշտ. կայք]. URL: <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/185> (հասանելի է՝ 10.07.2020թ. դրությամբ):

Геворг Барсегян

Специалист отдела по организации научно-исследовательских и программно-методических работ Академии юстиции, студент первого курса магистратуры юридического факультета Ереванского государственного университета

РЕЗЮМЕ

Некоторые проблемы применения территориального принципа действия уголовного закона

В данной работе обсуждаются основные проблемы применения территориального принципа действия уголовного закона. На основе исследования законодательства РА и международных правовых актов представляются проблемы, связанные с определением территории государства и места совершения преступления, а также исключения применения территориального принципа. В результате исследования делаются предложения, направленные на улучшение законодательства РА и правоприменительной практики.

Ключевые слова: уголовный закон, действие в пространстве, территориальный принцип, не получившее признания государство, никакому государству не принадлежащая территория, длящиеся и продолжаемые преступления, интернет, компьютерная преступность.

Gevorg Barseghyan

Legal Specialist at the Unit of Organization of Scientific Research and Programmatic-Methodological Activities of the Academy of Justice. First year Master student at the Law Faculty of Yerevan State University

SUMMARY

Several issues of the application of the territorial principle of criminal law

This paper discusses the main problems of applying the territorial principle of criminal law. On the basis of the research of the RA legislation and international failed acts the problems connected with the determination of the territory of the state and the place of crime, as well as the exclusion of the application of the territorial principle are presented. As a result of the research, proposals are made aimed at improving the RA legislative and law enforcement practices.

Key words: criminal law, action in space, territorial principle, non-recognized state, no state owned territory, ongoing and continuing crimes, Internet, cybercrime.

Բնագիրը ներկայացվել է 14.07.2020թ.

Ընդունվել է տպագրության 09.09.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա. Գաբրույանը

ՎԱՐԱԶԴԱՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի
դատավորի օգնական,
Հայ-Ռուսական Համալսարանի իրավունքի և
քաղաքականության ինստիտուտի քրեական
իրավունքի և քրեական դատավարության
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՕՐԵՆՔՈՎ ՊԱՀՊԱՆՎՈՂ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

«Գաղտնիքի պահպանություն» և «գաղտնիքի պաշտպանություն» իրավական կատեգորիաների հարաբերակցության հարցերում հետազոտողները չեն կարողանում գալ միասնական կարծիքի դրանց էության, բովանդակության և թույլատրելի սահմանների վերաբերյալ: Տարբեր հետազոտական ուղղությունների գիտնականներ ձևավորել են հակադիր մոտեցումներ այդ հասկացությունների հարաբերակցության հարցի վերաբերյալ: Հոդվածում փորձ է արվել ընդհանրացնել նշված կատեգորիաների հարաբերակցության հետ կապված հիմնախնդիրների վերաբերյալ տարբեր գիտնականների և հետազոտողների հայացքները, ինչպես նաև տրվել է «գաղտնիքի պաշտպանություն» եզրույթի սահմանումը:

Հիմնաբառեր- իրավական պահպանություն, իրավական պաշտպանություն, իրավաբանական պատասխանատվություն, իրավական երաշխիքներ, իրավաչափ վարքագիծ, իրավախախտում, գաղտնիք:

Գաղտնիքի ընդհանուր իրավական վերլուծության մեթոդական նախադրյալներն ուսումնասիրելով՝ Ի.Վ.Բոնդարը եկել է այն եզրահանգման, որ գաղտնիքի (իրավական իմաստով) օբյեկտիվ հատկությունը օրենքում դրա պահպանության ամրագրումն է և գաղտնիքը տնօրինողի կողմից պաշտպանության միջոցների ձեռնարկումը¹:

Իսկապես, օրենքով պահպանվող գաղտնիքների պաշտպանության վերաբերյալ օրենսդրական կարգավորման վերլուծությունը ցույց է տալիս, որ նորմատիվ իրավական ակտերում օգտագործվում է երկու իրավական կատեգորիա՝ «գաղտնիքի պահպանություն» և «գաղտնիքի պաշտպանություն»: Սույն գիտական աշխատանքում անդրադառնալով ենք «իրավական պաշտպանություն» և «իրավական պահպանություն» եզրույթների բացահայտմանը, որից հետո փորձ կարվի ներկայացնել օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության էությունը:

«Իրավական պաշտպանություն» եզրույթը լայնորեն տարածվեց հետխորհրդային ժամանակաշրջանում և այսօր բովանդակվում է ՀՀ և ՌԴ բազմաթիվ օրենքներում: Ընդ որում, դիտարկվող հասկացության սահմանումը բացակայում է և, ընդամենը, հատուկ օրենքներում ամրագրվում են նեղ շրջանակ ընդգրկող սուբյեկտների իրավական պաշտպանության միջոցներն ու երաշխիքները: Սա հիմնականում բացատրվում է մարդու «իրավական պաշտպանություն» երևույթի՝ հարաբերականորեն նորույթ լինելու հանգամանքով և,

հետևաբար, ընդհանուր տեսական առումով պահանջում է ավելի խորքային գիտական իմաստավորում:

Իրավաբանական գրականության մեջ չկա միասնական մոտեցում «իրավական պահպանություն» և «իրավական պաշտպանություն» եզրույթների վերաբերյալ:

Այսպես, Ջ.Վ.Ռոմովսկու կարծիքով՝ իրավական պաշտպանությունը անընդհատ կազմվող ակտ է, որի մեջ գլխավորն այն է, որ այն հանդիսանում է իրավակիրառ մարմնի կողմից ընտրված պետական հարկադրանքի միջոցի իրականացում: Իրավական պաշտպանությունը հնարավոր չէ իրականացնել առանց հատուկ պետական կամ հասարակական մարմինների գործունեության²:

Լ.Ն.Չավադսկայան իրավական պաշտպանությունը համարում է որոշակի մարմինների գործունեություն՝ ուղղված սուբյեկտի խախտված կամ վիճարկվող և պետության կողմից պաշտպանվող իրավունքների վերականգնմանը³:

Օ.Վ.Իվանովը և Բ.Յու.Տիխոնովան իրավական պաշտպանություն ասելով հասկանում են իրավասու մարմնի կողմից հատուկ միջոցառումների կիրառում՝ ուղղված լիազոր անձի համար իրավունքի իրացման իրական հնարավորությունն ապահովելուն⁴:

Ելնելով վերը նշվածից՝ կարելի է ենթադրել, որ իրավական պաշտպանությունը հեղինակները հասկանում են որպես մարմինների գործունեություն՝ ուղղված խախտված իրավունքների և օրի-

նական շահերի վերականգնմանը:

Այս հարցի նկատմամբ մի փոքր այլ մոտեցում ունեն Ն.Վ.Վիտորուկը⁵ և Ա.Վ.Ստրեննովսկուկը⁶: Նշված գիտնականներն իրավական պաշտպանությունը դիտարկում են ոչ թե անձի իրավական կարգավիճակի իրացման խոչընդոտների վերացմանն ուղղված իրավասու մարմինների գործունեություն, այլ՝ որպես անհատի գործունեություն, այսինքն՝ իրավունքների «ինքնապաշտպանություն»:

Գոյության ձևի տեսանկյունից՝ մարդու իրավական պաշտպանությունը կարող է լինել նաև իրավական վարքագիծ: Վ.Ն.Կուդրյավցևն այն սահմանում է որպես. «...անհատական ու կոլեկտիվ սուբյեկտների սոցիալական առումով կարևոր վարքագիծ, որը ենթակա է նրանց գիտակցությանն ու կամքին, նախատեսված է իրավունքի նորմերով և ունի իրավական հետևանքներ»⁷: Հարկ է նկատել, որ իրավական պաշտպանությունը որպես իրավական վարքագիծ պետք է հանդես գա իրավաչափ վարքագծի ձևով, որի ներքո հասկացվում է՝ սուբյեկտների գիտակցված, իրավական նորմերին համապատասխանող և պետության կողմից երաշխավորվող վարքագիծ:

Իրավական պաշտպանությունը միշտ հանդես է գալիս որպես իրավաբանական գործընթաց՝ ինչպես լայն, այնպես էլ՝ նեղ իմաստով: Լայն իմաստով՝ իրավական պաշտպանությունը պետական մարմինների և հասարակական միավորումների գործունեության փոխկապակցված իրավական ձևերի համակարգ է: Նեղ իմաստով՝ այն փոխկապակցված, հատուկ կարգավորված, հաջորդող գործողություններով, ընդհանուր նպատակին ծառայող և համապատասխան հնարքների ու միջոցների օգնությամբ կոնկրետ արդյունքի հանգեցնող գործողությունների համակարգ է⁸:

Այսպիսով, պաշտպանության իրավական երաշխիքների շարքում առանձնացվում են կատարված իրավախախտումների բացահայտմանն ուղղված միջոցառումները, պաշտպանիչ միջոցառումները, իրավաբանական պատասխանատվության միջոցառումները, ինչպես նաև իրավապահ գործունեության ընթացակարգային ձևերը⁹:

Շարադրված տեսանկյունների վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավական պաշտպանության գոյության կարևորագույն ձևերից մեկը՝ իրավաբանական գործունեությունն է, որն իր մեջ ներառում է իրավաստեղծ և իրավակիրառ գործունեությունները:

Իրավական պաշտպանության շրջանակներում իրավաստեղծ գործունեությունն իրենից ներկայացնում է լիազոր մարմինների կողմից նորմա-

տիվ ակտերի մշակում, հրապարակում, չեղարկում և կատարելագործում, որոնցում (այդ ակտերում) ամրագրվում են մարդու իրավունքների պահպանության ու պաշտպանության երաշխիքները, սահմանվում են իրավապաշտպանական հարաբերությունների սուբյեկտների լիազորությունները, պաշտպանվելու իրավունքի իրացման դատավարական կարգը և սուբյեկտների պատասխանատվությունը իրավունքների խախտման համար:

Իրավակիրառ գործունեությունը լիազոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից իրավունքի նորմերի կազմակերպված կիրառման դրսևորում է, որն իրականացվում է անձի իրավական կարգավիճակի պահպանման ու պաշտպանման նպատակով: Իրավակիրառումն ավարտվում է անհատների համար պարտադիր, իրավաբանորեն կարևոր որոշման ընդունմամբ, որում տրվում է ոչ միայն որոշակի իրավիճակի իրավաբանական գնահատականը, այլ նաև սահմանվում է դրա մասնակիցների վարքագիծը:

Իրավապաշտպանական գործունեության ընթացքում բավարար չէ միայն պաշտպանել կամ վերականգնել մարդու իրավունքները, անհրաժեշտ է հետազոտել իրավիճակը, որպեսզի բացահայտվեն այդ իրավունքների խախտման իրական պատճառները և գտնվեն այդ իրավունքների պաշտպանության ամենաարդյունավետ եղանակները, որոնց դեպքում հնարավոր կլինի պաշտպանել իրավունքները և կանխել նոր խախտումները:

Եվ այսպես, իրավական պաշտպանությունը կարող է իրականացվել ամենատարբեր ձևերում՝ իրավաբանական գործունեության մեջ, իրավահարաբերություններում, իրավական վարքագծում, իրավաբանական գործընթացում և այլն:

Իրավական պաշտպանությունը, որպես միջճյուղային ինստիտուտ, իրավունքի տարբեր ճյուղերին պատկանող, սակայն միևնույն իրավապաշտպանական ուղղվածությունն ունեցող նորմերի ու ինստիտուտների ամբողջություն է: Ընդ որում, մարդու իրավական պաշտպանության միջճյուղային ինստիտուտի հիմքը հանդիսանում է սահմանադրական իրավունքի իրավապաշտպանական ինստիտուտը:

ՀՀ Սահմանադրության մեջ իր տեղն ունի մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործառնությունը, քանի որ հենց հանրային իրավունքն է սահմանում իրավունքի բոլոր սուբյեկտների իրավաբանական պաշտպանության ընթացակարգի մեխանիզմը, բացի այդ՝ սահմանադրական պաշտպանությունը համախմբում է իրավունքի բոլոր ճյուղերի իրավապաշտպանա-

կան ներուժը՝ ակտիվացնելով մարդու պաշտպանության ողջ գործընթացը՝ դրա մեջ ներգրավելով հասարակության բոլոր ինստիտուտները և իրավունքի սուբյեկտները, այդ թվում՝ միջազգային:

Այսպիսով, հիմնվելով իրականացված վերլուծության վրա, կարելի է տալ իրավական պաշտպանության հետևյալ սահմանումը: **Իրավական պաշտպանությունը** իրավունքի սուբյեկտների՝ նորմատիվ իրավական ակտերի համակարգի վրա հիմնված գործունեություն է, որի նպատակն է՝ իրավական տարբեր ձևերով և միջոցներով մարդու իրավական կարգավիճակի իրացման ճանապարհին հանդիպող խոչընդոտների վերացումը և նրա լիարժեք իրավական պաշտպանվածության վիճակի ապահովումը:

Ինչ վերաբերում է «իրավական պահպանություն» եզրույթին, ապա գիտական գրականության մեջ գոյություն չունեն «իրավական պահպանություն» հասկացության համընդհանուր մեկնաբանություններ, ուստի մենք կնշենք միայն այն բազմազան հատկանիշները, որոնցով կարելի է բնութագրել և դասակարգել իրավական պահպանությունը:

Որպես իրավական պահպանության դասակարգման ինքնուրույն չափանիշ հանդես է գալիս իրավական պահպանության օբյեկտը: Օրինակ՝ քրեական իրավունքի ներկայացուցիչները կողմ են քրեաիրավական պահպանության օբյեկտը որպես պոզիտիվ իրավունքով պահպանվող հասարակական հարաբերություններ ըմբռնելուն: Յանկացած հասարակական հարաբերությունների, այդ թվում՝ իրավական պահպանության ներքո վերցվածների հիմքում ընկած են անձի, պետության, հասարակության շահերը¹⁰: Իրավական պահպանության օբյեկտներն առանձնացնելիս և իրավաբանական արգելքները սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել ամենից առաջ իրավաբանական նորմի օբյեկտիվ անհրաժեշտությունը, տվյալ հասարակական հարաբերությունների տեսակը, դրանց նշանակությունը հասարակական հարաբերությունների համակարգում¹¹: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքով՝ իրավական պահպանության ներքո են գտնվում մարդու կյանքը և առողջությունը, սեփականությունը, տնտեսությունը, հասարակական անվտանգությունն ու կարգը, շրջակա միջավայրը, պետական իշխանությունը, զինվորական ծառայության կարգը և այլն: Տվյալ արժեքներին համապատասխան հաստատվում են ոչ միայն հանցագործությունների տեսակները, այլ նաև՝ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի կառուցվածքը:

Այսպես, հասարակական հարաբերություններ

րի, իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պահպանության անհրաժեշտությունը միշտ էլ գոյություն է ունեցել: Պոզիտիվ իրավունքը ոչ միայն պահպանում է հանրաճանաչ, հիմնարար հասարակական հարաբերությունները, այլ նաև նպատակաուղղված է կոնկրետ սոցիալական համակարգում անցանկալի դրսևորումների ոչնչացմանը:

Պետք է ընդգծել, որ, պահպանելով հասարակական հարաբերությունները, իրավունքը թույլ է տալիս խափանել հասարակական կյանքի համար ոչ ցանկալի երևույթներն ու գործընթացները, որոնք խախտում են դրա նորմալ զարգացման պայմանները և հակասում են հասարակության, պետության ու քաղաքացիների շահերին:

Մեր կարծիքով, իրավական պահպանությունը կապված է իրավական ակտի գոյության հետ, այլ կերպ, եթե մի օրենք կարգավորում է որոշակի իրավահարաբերություն, ապա նպատակ ունի պահպանել ինչ-որ իրավահարաբերության բնականոն գործունեությունը:

Այժմ անդրադառնանք «իրավական պահպանություն» և «իրավական պաշտպանություն» կատեգորիաների հարաբերակցությանը:

Քանի որ բացատրական բառարանում «պահպանություն» և «պաշտպանություն» բառերի սահմանումը տրվում է «պահպանել» և «պաշտպանել» բայերի միջոցով¹², պետք է անդրադառնալ դրանց մեկնաբանությանը: Այսպես, «պահպանել» բառի ներքո ընդունված է հասկանալ. «...անվնաս՝ առանց կորստի կամ փչացման պահել, գործադրության՝ կիրառության մեջ պահել, շարունակել, չհրաժարվել, չխախտել: Դրությունը՝ վիճակը՝ անփոփոխ կերպով պաշտպանել՝ պահել:» («Պաշտպանել» բառի ներքո հասկացվում է «...տնտնագործությունից, վնասակար գործողություններից, վտանգից զերծ պահել, միջոցառում իրականացնել պաշտպանության համար»¹³):

Տարբեր հետազոտական ուղղությունների գիտնականներ ձևակերպել են երկու հակադիր տեսակետներ «պահպանություն» և «պաշտպանություն» հասկացությունների հարաբերակցության վերաբերյալ: Նրանցից ոմանք նույնացնում են պահպանությունը և պաշտպանությունը՝ դա հիմնավորելով այդ հասկացությունների բովանդակությունների միջև էական տարբերության բացակայությամբ¹⁴ կամ դրանց բովանդակությունների նմանությամբ¹⁵:

Գերակշռող մեկ այլ տեսակետի համաձայն՝ նշված հասկացությունները տարանջատվում են մի քանի չափանիշների հիման վրա, որոնցից են՝

նպատակների և միջոցառումների կիրառման հիմքերը: Այսպես, պահպանության նպատակը հանդիսանում է ոչ միայն իրավախախտումների խափանումը, այլ նաև սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի ապահովումը: Իրավական պահպանությունը հիմնվում է գործող նորմերում ամրագրված իրավունքների ու ազատությունների վրա, ուստի այն իրացվում է մշտապես, իսկ իրավական պաշտպանության հիմքը հանդիսանում է իրավունքի կողմից պահպանվող օբյեկտի նկատմամբ ոչ իրավաչափ գործողության կատարումը¹⁶: Այս տեսակետի կողմնակիցների հիմնական փաստարկը կարելի է արտահայտել հետևյալ կերպ. «...իրավական պահպանությունն իրացվում է մշտապես, իսկ իրավական պաշտպանությունն օգտագործվում է տարբեր սուբյեկտների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի անմիջական խախտման կամ դրա սպառնալիքի դեպքում»¹⁷:

Ա.Ա.Բաուկենը գալիս է այն հետևության, որ «իրավական պահպանություն» և «իրավական պաշտպանություն» հասկացությունները պետք է տարանջատել հետևյալ պատճառներով.

առաջին՝ իրավական պահպանությունը հանդիսանում է ավելի լայն հասկացություն և ներառում է միջոցառումների մի ամբողջ համալիր՝ ուղղված սուբյեկտների կողմից՝ նորմերում ամրագրված իրավունքներին և օրինական շահերին հետևելուն և դրանց իրացմանն, անհրաժեշտության դեպքում՝ կիրառելով պետական հարկադրանքի միջոցներ:

Երկրորդ՝ իրավական պահպանության բաղկացուցիչ տարրեր են հանդիսանում սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի ապահովումը: Այսինքն՝ պահպանությունն ունի ինչպես կանխարգելիչ ուղղվածություն, այնպես էլ՝ վերականգնման և «պահպանվող» հարաբերություններում ոտնձգությունների խափանման նպատակ:

Ի տարբերություն իրավական պահպանության՝ իրավական պաշտպանությունը կիրառվում է միայն պահպանվող օբյեկտի կամ սուբյեկտների իրավունքների ու օրինական շահերի վրա բացասական ազդեցության դեպքում, ինչպես նաև՝ այդ իրավունքների ու շահերի նկատմամբ իրական սպառնալիքի առկայության դեպքում¹⁸:

Որոշ հետազոտողներ շատ հակիրճ են շոշափում այս խնդիրը՝ դրան հատուկ նշանակություն չտալով և վկայակոչելով իրենց այն գործընկերների փորձը, ովքեր արդեն իսկ մշակել են հիմնական տեսակետներ այս հարցի առնչությամբ:

Օրինակ, այդպիսին է Յու.Ս.Մոսկովչենկոյի հետազոտությունը, որտեղ հեղինակը գալիս է այն

հետևության, որ «պահպանություն» հասկացությունը բովանդակությամբ անհամեմատ ավելի լայն է, քան «պաշտպանություն» հասկացությունը, քանի որ պաշտպանության համար ձեռնարկվող միջոցառումները նույնպես (մասամբ) հանդիսանում են պահպանության ուղղություններից մեկը, իսկ ուղղություններից մյուսը՝ սուբյեկտների իրավունքների ապահովմանն ուղղված այն գործողություններն են, որոնք կապված չեն իրավախախտման հետ¹⁹:

Այս հարցին հակիրճ է անդրադառնում նաև Ա.Կ.Վախիտովը՝ նշելով, որ իրավական պահպանությունը ավելի լայն հասկացություն է, քան իրավական պաշտպանությունը, քանի որ այն ենթադրում է՝ իրավական ռեժիմի, պարտավորությունների, արգելանքների, ինչպես նաև խախտված իրավունքի պաշտպանության եղանակների հաստատում²⁰:

Ե.Յու. Ռոդիոնովան այս խնդիրն ավելի հետևողական վերլուծության է ենթարկում, սակայն, արդյունքում՝ հանգում է այն հետևության, որ «պահպանություն» և «պաշտպանություն» հասկացությունները հոմանիշներ են²¹:

Վերը նշված գիտնականների մոտեցումների վերլուծության արդյունքում՝ հանգում ենք այն եզրակացության, որ իրավական պահպանությունը ստատիկ ազդեցություն է գործում հասարակական հարաբերությունների վրա: Այլ կերպ՝ հասարակական հարաբերությունների իրավական պահպանությունն ունի ստատիկ բնույթ, մինչդեռ իրավական պաշտպանությունը, օրինակ, ունի դինամիկ պոզիտիվ ներգործության բնույթ, քանի որ այն իրավունքի սուբյեկտի կողմից իր օրինական շահերը ոտնձգությունից զերծ պահելու, ինչպես նաև խախտված իրավունքները վերականգնելու գիտակցված գործունեությունն է:

Ամփոփելով գիտական տարբեր մոտեցումները՝ հակված ենք կարծելու, որ պահպանություն և պաշտպանություն իրավական եզրույթները նույնական չեն, քանի որ պահպանությունն օրենքով նախատեսված հարաբերության իրավական ռեժիմի սահմանումն է, իսկ պաշտպանությունն այն իրավական միջոցների կիրառումն է, որոնք գործի են դրվում պահպանվող իրավահարաբերության խախտման կամ խախտման սպառնալիքի դեպքում:

Վերագրյալ իրավական կատեգորիաների վերլուծությունը, դրանց էության բացահայտումը մեթոդական հիմք է հանդիսանում, որպեսզի անդրադառնանք օրենքով պահպանվող գաղտնիքների պաշտպանության էության վերհանմանը:

Նախ անդրադառնանք ՀՀ օրենսդրության մեջ «գաղտնիքի պահպանում» և «գաղտնիքի պաշտպանություն» եզրույթների օգտագործման դեպքերին:

«Գաղտնիքի պահպանում» եզրույթն օգտագործվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերում.

- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, որի 23-րդ գլուխը նվիրված է գաղտնիության պահպանմանը, որտեղ առանձին հոդվածներով ամրագրված են պետական գաղտնիքի պահպանումը, ծառայողական և առևտրային գաղտնիքի պահպանումը,

- օրենսդրի կողմից առանձին օրենքներով ամրագրված է նաև նոտարական գաղտնիքի պահպանումը («Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված), ապահովագրական գաղտնիքի պահպանումը («Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մաս), բանկային գաղտնիքի պահպանումը («Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք), վարկային տվյալների գաղտնիության պահպանումը («Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված), փաստաբանական գաղտնիքի պահպանումը («Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մաս), պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանումն ու պահպանումը («Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մաս):

«Գաղտնիքի պաշտպանություն» եզրույթն օգտագործվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերում.

- պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանումն ու պահպանումը («Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մաս),

- ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որի 141-րդ հոդվածը սահմանում է՝ ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության պաշտպանությունը,

- «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որի 41-րդ հոդվածն ունի հետևյալ վերնագիրը. «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների մասին տեղեկությունների պաշտպանությունը», ընդ որում՝ այդ տեղեկությունները հանդիսանում են պետական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ:

Թվարկված նորմատիվ իրավական ակտերի

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «գաղտնիքի պահպանում» և «գաղտնիքի պաշտպանություն» իրավական կատեգորիաներն օրենսդրի կողմից իրականացված իրավական կարգավորման շրջանակներում չունեն հատակ տրամաբանական տարանջատում:

Ավելին՝ ՀՀ սահմանադրական դատարանի (այսուհետ նաև՝ Սահմանադրական դատարան) 2019 թվականի հուլիսի 2-ի թիվ ՍԳՈ-1467 որոշմամբ անդրադարձ է կատարվել առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների հետազոտումը քրեական դատավարության շրջանակներում դռնփակ դատական նիստում անցկացնելու հարցին, որտեղ Սահմանադրական դատարանը նշել է, որ դռնփակ դատական նիստի շրջանակներում օրենքով պաշտպանվող գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների հետազոտման նպատակն այն անձանց շահերի պաշտպանությունն է, որոնց սպառնում է նշված տեղեկությունների հրապարակումը: Նույն որոշման մեկ այլ պարբերությամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով դռնփակ դատական նիստ անցկացնելու իրավաչափությունը կախված է օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկատվության կոնկրետ տեսակից:

Այլ կերպ՝ Սահմանադրական դատարանի կողմից մույնպես չեն տարբերակվել «պաշտպանություն» և «պահպանություն» եզրույթները, ավելին՝ ըստ էության, քննարկվող որոշումից կարելի է եզրակացնել, որ գաղտնիքի «պաշտպանություն» և «պահպանություն» եզրույթներն օգտագործվել են մույնական իմաստով:

Գաղտնիքի համատեքստում «պաշտպանություն» և «պահպանություն» իրավական կատեգորիաների էությունն առավել համընդգրկուն ներկայացնելու համար անդրադառնանք օրենքով պահպանվող գաղտնիքների վերաբերյալ գիտական աշխատություններում տեղ գտած մոտեցումներին:

Պետք է նկատել, որ օրենքով պահպանվող գաղտնիքների հիմնախնդիրներին նվիրված գիտական աշխատություններից քչերում կարելի է գտնել «պահպանություն» և «պաշտպանություն» եզրույթների վերաբերյալ մոտեցումներ, իսկ առկա մոտեցումներն էլ՝ մակերեսային, առանց հիմնավորման նախապատվությունը տալիս են այդ եզրույթներից մեկի օգտագործմանը:

Այսպես, Յու.Ս.Պիլիպենկոյի կարծիքով «տեղեկության պահպանություն» եզրույթը տեղին չէ օգտագործված գոյություն ունեցող գաղտնիքներից

շատերի նկատմամբ: Վերջինիս մոտեցմամբ՝ «Տեղեկատվության մասին» ՌԴ օրենքը պարունակում է ավելի ճշգրիտ եզրույթ, այն է՝ «տեղեկության պաշտպանություն», որը նույնպես չի բովանդակում գաղտնիքի սովորական չիրապարակման դեպքերը²²:

Ըստ Վ.Ե.Եվսենկոյի՝ օրենքով պահպանվող գաղտնիքի համատեքստում ճիշտ է կիրառել «պահպանություն» եզրույթը, քանի որ իրավակարգավորման առարկան ոչ միայն գաղտնիության իրավունքի խախտման դեպքում դրա պաշտպանումն է, այլև՝ նախքան դրա խախտումն այն օրենքով պահպանելը (նախականիսելը)²³:

Մեր մոտեցմամբ սահմանափակ հասանելիությանը տեղեկությունների շրջանառման հետ կապված հարաբերությունների պահպանման օբյեկտ են հանդիսանում այն շահերը, որոնց կարող է վնաս հասցվել չթույլատրված հասանելիության (օգտագործում, հրապարակում) արդյունքում, ուստի գաղտնիքի օրենքով պահպանությունն իրենից ներկայացնում է գաղտնիության իրավունքի անխափան ապահովմանն ուղղված փոխկապակցված ու հաջորդական միջոցառումների համալիր: Այդ միջոցառումները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- օրենսդրությամբ գաղտնիության ռեժիմի ամրագրում, գաղտնիքների տեսակների սահմանում,

- գաղտնիքի առնչությամբ ծագած իրավահարաբերության մասնակիցների իրավաչափ (թույլատրելի) և հակաիրավական վարքագծի հատկանիշները սահմանող իրավական նորմերի ընդունում,

- գաղտնիքի ստացման, օգտագործման հետ կապված իրավահարաբերության մասնակիցների, ինչպես նաև պաշտոնատար անձանց իրավասությունների նախատեսում,

- պետական հարկադրանքի միջոցներ, որոնք կիրառելի են իրավաչափ, սակայն առավել հաճախ՝ կիրառվում են հակաիրավական վարքագծի պայմաններում:

Ինչ վերաբերում է օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության էությանը, ապա ըստ մեր դիրքորոշման՝ գաղտնիքն իրավական պաշտպանությամբ օժտվում է այն դեպքում, երբ գաղտնիության իրավական ռեժիմը սահմանված է օրենքով (այսինքն՝ պահպանվում է օրենքով) և առկա է օրենքով պահպանվող գաղտնիքի խախտում կամ խախտման վտանգ:

Ընդունված տեսակետի համաձայն՝ գաղտնիության իրավունքի սուբյեկտների իրավական պաշտպանությունն իրենից ներկայացնում է թույլ-

լատրելի միջոցառումների համակարգ (որոնք ենթադրում են վարքագծի ակտիվ մոդել)՝ ուղղված հակաիրավական վարքագծի կանխմանը կամ այնպիսի իրավաչափ վարքագծի կանխմանը, որն, այնուամենայնիվ, կարող է վնաս հասցնել գաղտնիության իրավունքի սուբյեկտի կամ այլ անձանց իրավունքներին:

Վերոգրյալի հիման վրա հակված ենք արձանագրել հետևյալը.

- որպեսզի գաղտնիքը պաշտպանվի, այն պետք է պահպանված լինի օրենքով,

- պահպանվող գաղտնիքի պաշտպանությունը կարող է իրականացվել միայն օրենքով նախատեսված ձևերով ու միջոցներով,

- գաղտնիքի պաշտպանությունը նպատակ է հետապնդում կանխել գաղտնիքի նկատմամբ ոչ իրավաչափ վարքագիծը,

- գաղտնիքի պաշտպանությունը լուծում է այն ուսնձգությունից և ոչ իրավաչափ միջամտությունից գերծ պահելու խնդիր,

- պաշտպանության միջոցները կիրառվում են գաղտնիքի խախտման կամ խախտման վտանգի առկայության դեպքում:

Այսպիսով, ամփոփելով՝ կարելի է տալ օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության հետևյալ սահմանումը.

Օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանությունը՝ որպես իրավական պաշտպանության տեսակ իրավական միջոցների ու ձևերի ամբողջություն է, որը կոչված է գերծ պահել օրենքի պահպանության ներքո գտնվող գաղտնիքը և (կամ) գաղտնիքի իրավունքը ուսնձգությունից և ոչ իրավաչափ միջամտությունից:

Գաղտնիքի «պահպանություն» և «պաշտպանություն» իրավական եզրույթների տարբերությունը գործնականում նույնպես ներկայացնելու համար անդրադառնանք ՀՀ օրենսդրությամբ ամրագրված օրենքով պահպանվող գաղտնիքների պաշտպանության որոշ հիմնախնդիրների:

Այսպես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով պահպանվում է փաստաբանական գաղտնիքը, սակայն կարող ենք արդյոք եզրակացնել, որ այն բավարար պաշտպանված է: Այս հարցադրմանը պատասխանելու համար ներկայացնենք օրենքով պահպանվող փաստաբանական գաղտնիքի պաշտպանության առումով մտահոգիչ որոշ ռիսկեր:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) փաստաբանական գաղտնիքը պաշտպանվում է ընդամենը երեք տեսակի օպերատիվ-հետախուզա-

կան միջոցառումներից: Տվյալ դեպքում մտահոգող իրավական հարցը հետևյալն է. ինչու՞ է նշված օրենքը տարբերակում այն օպերատիվ-հետախուզական միջոցառումները (այսուհետ՝ ՕՀՄ), որոնցով կարող են բացահայտվել և որպես ապացույց օգտագործվել փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկությունները, մասնավորապես՝ ինչու՞ չի արգելվում այնպիսի ՕՀՄ-ների անցկացումը, ինչպիսիք են՝ իրերի և փաստաթղթերի հետազոտումը, արտաքին դիտումը, օպերատիվ ներդրումը, երբ այդ ժամանակ վստահորդը հաղորդակցվում է իր փաստաբանի հետ: Մեր կարծիքով, թվարկված ՕՀՄ-ների իրականացումը լուրջ սպառնալիք կարող է ներկայացնել փաստաբանական գաղտնիքի պաշտպանության համար:

Փաստաբանական գաղտնիքի պաշտպանվածության հաջորդ ռիսկի էությունը հետևյալն է. Օրենքի 31-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ. «...արգելվում է անցկացնել (...) նախատեսված օպերատիվ միջոցառումները, երբ անձը, որի նկատմամբ իրականացվելու է այդ միջոցառումը, հաղորդակցվում է իր փաստաբանի հետ:»։ Նորմի ձևակերպումից հետևում է, որ փաստաբանական գաղտնիքը պաշտպանվում է, երբ համապատասխան ՕՀՄ-ն իրականացվում է վստահորդի նկատմամբ:

Օրենքը չի պաշտպանում փաստաբանական գաղտնիքը հակառակ իրավիճակում, այն է՝ երբ ՕՀՄ-ն իրականացվում է փաստաբանի նկատմամբ: Մեր կարծիքով, նման տարանջատումն արդարացված չէ, քանի որ փաստաբանի և վստահորդի կոնֆիդենցիալ հաղորդակցության սկզբունքի խախտում պետք է համարվի նաև, երբ փաստաբանի նկատմամբ որևէ ՕՀՄ իրականացնելիս օպերատիվ մարմիններն ստանում են փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկություններ և դրանք օգտագործում են որպես ապացույց: Հիմք ընդունելով պահպանվող գաղտնիքի արժեքը՝ կարևոր չէ՝ այդ տեղեկությունները բացահայտվում են վստահորդի, թե փաստաբանի նկատմամբ իրականացվող ՕՀՄ-ի արդյունքում: Երկու դեպքում էլ այդ տեղեկություններն ենթակա են հավասարաչափ պաշտպանության, դրանք չպետք է բացահայտվեն, հրապարակվեն կամ օգտագործվեն որպես ապացույց:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ կետը ամրագրում է փաստաբանի վկայության անձեռնմխելիությունը: Մասնավորապես, որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել. «Փաստաբանները՝ պարզելու համար տեղեկություններ, որոնք նրանց կարող են հայտնի լինել կապված իրավաբանական օգնության դիմելու

կամ նման օգնություն ցույց տալու հետ:»։ Փաստաբանի վկայության անձեռնմխելիությունն ամրագրված է բազմաթիվ պետությունների քրեադատավարական օրենսդրություններով²⁴, սակայն ի տարբերություն մի շարք պետությունների (Գերմանիայի, Ֆրանսիայի և այլն) քրեադատավարական օրենսգրքերի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսել փաստաբանի օգնականի վկայության անձեռնմխելիությունը, որպիսի երաշխիքը պետք է ուղղակիորեն սահմանվի քրեական դատավարության օրենսգրքով, քանի որ **նույն օրենսգրքով** կարող են միայն նախատեսվել վկայություններ տալու և տեղեկություններ հայտնելու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

Վկայության անձեռնմխելիության նույն խնդիրն առկա է նաև բանկային, ապահովագրական գաղտնիքների դեպքում, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի ազատում բանկերի, ապահովագրական կազմակերպությունների աշխատակիցներին վկայություններ տալու և տեղեկություններ հայտնելու պարտականությունից: Վկայության անձեռնմխելիության հետ կապված բավականաչափ օրինակելի է Գերմանիայի քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումները: Մասնավորապես, Գերմանիայի քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը երաշխավորում է՝ մասնագիտական գործունեության առանձնահատկություններով պայմանավորված վկայություն տալուց հրաժարվելու փաստաբանի, նոտարի, ատոլիտորի (...) իրավունքը, իսկ նույն օրենսգրքի 53a-րդ հոդվածը նախատեսում է՝ վկայության անձեռնմխելիություն նշված անձանց օգնականներին²⁵: Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածով առևտրային կամ բանկային գաղտնիքը չհրապարակելու աշխատանքային պարտականություն ունեցող անձինք ևս օժտված են վկայության անձեռնմխելիությամբ:

Օրենքով պահպանվող գաղտնիքների պաշտպանության վերոգրյալ հիմնախնդիրների առկայությունը հիմնավորում է այն հանգամանքը, որ գաղտնիքի «պահպանություն» և «պաշտպանություն» իրավական եզրույթներն իրենց էությամբ նույնական չեն նաև գործնական հարթությունում: Այլ կերպ՝ գաղտնիքը կարող է պահպանվել օրենքով, սակայն չունենալ բավարար պաշտպանվածության մակարդակ:

- ¹ Տե՛ս, Бондарь И.В., Тайна по российскому законодательству (Проблемы теории и практики): Дис. канд. юрид. наук: Н. Новгород, 2004, С. 17.
- ² Տե՛ս, Ромовская З.В., Защита в советском семейном праве. Львов, 1985, С. 8-9.
- ³ Տե՛ս, Реализация прав граждан в условиях развитого социализма / отв. ред. Лукашева Е.А. М., 1983, С. 222.
- ⁴ Տե՛ս, Иванов О.В., Защита гражданских прав как правовой институт и как научная проблема. Вопросы советского государства и права. Труды Иркутского университета. Т. 45, вып. 8, ч. 3. Иркутск, 1967, С. 44: Тихонова Б.Ю. Субъективные права советских граждан, их охрана и защита: автореф. дисс. ... канд. юрид. наук. М., 1972, С. 11-15.
- ⁵ Տե՛ս, Витрук Н.В., Общая теория правового положения личности. М., 2008, С. 361.
- ⁶ Տե՛ս, Стремоухов А.В., Правовая защита человека. СПб., 2007, С. 17.
- ⁷ Տե՛ս, Кудрявцев В.Н., Правовое поведение: норма и патология. М., 1982, С. 41.
- ⁸ Տե՛ս, Теория юридического процесса / под ред. В.М.Горшенева. Харьков, 1985, С. 51-64.
- ⁹ Տե՛ս, Попов Л.Л., Мигачев Ю.И., Тихомиров С.В. նշված աշխատությունը էջ 84:
- ¹⁰ Տե՛ս, Уголовное право России. Общая часть / под ред. Ф.Р.Сундукова, И.А. Тарханова. М.: Статут, 2009. С. 197.
- ¹¹ Տե՛ս, Коржанский Н.И., Очерки по теории уголовного права. Волгоград: Изд-во Волгоградской ВСШ МВД СССР, 1992. С. 47.
- ¹² Տե՛ս, S.Ellis Wild Webster's New World Law Dictionary 1st Edition 2006, էջեր 120, 211:
- ¹³ Տե՛ս, Էդ.Բ.Ադայան Արդի հայերենի բացատրական բառարան, հատոր 2, Երևան, Հայաստան, 1976, էջեր 1172, 1181:
- ¹⁴ Տե՛ս, Гражданское право / Под ред. Ю.К. Толстого, А.П. Сергеева. СПб., 1996. Ч. 1. С. 240. Гаврилов Э.П. мментарий Закона об авторском праве и смежном правах. М., 1996. С. 217. Матузов Н.И. Правовая система и личность. Саратов, 1987, С. 130-131.
- ¹⁵ Տե՛ս, Стоякин Г.Н., Понятие «защита гражданских прав» // Проблемы гражданско-правовой ответственности защиты гражданских прав. Свердловск, 1973, С. 30-35. Тархов В.А. Гражданское право. Чебоксары, 1997, С. 259-260.
- ¹⁶ Տե՛ս, Баукен А.А., Правовая защита собственности в Российской Федерации: вопросы теории: дис. ... канд. юрид. наук. Челябинск, 2006, С. 14.
- ¹⁷ Տե՛ս, Рыбаков В.А., Тархов В.А. Собственность и право собственности. Уфа, 2001, С. 172.
- ¹⁸ Տե՛ս, Баукен А.А., նշված աշխատությունը, էջ 16-18:
- ¹⁹ Տե՛ս, Московченко Ю.С., Административно-правовая охрана политических прав граждан России: дис. ... канд. юрид. наук. М., 2006. С. 41.
- ²⁰ Տե՛ս, Вахитов А.К., Административно-правовая охрана объектов культурного наследия: дис. ... канд. юрид. наук. М., 2007, С. 35.
- ²¹ Տե՛ս, Родионова Е.Ю., Административно-правовая защита избирательных прав граждан в Российской Федерации: дис. ... канд. юрид. наук. М., 2008, С. 48.
- ²² Տե՛ս, Пилипенко Ю.С., Адвокатская тайна: теория и практика реализации: диссертация доктора юридических наук: Москва, 2009, С. 40.
- ²³ Տե՛ս, Евсеев В.Е., Тайна в досудебных стадиях уголовного процесса: дис. канд. юрид. наук. 16, С. 50.
- ²⁴ Տե՛ս, Lücken im Schutz von Berufsgeheimnisträgern (§ 53 StPO) vor staatlichen Eingriffen ©2007 Deutscher Bundestag, հետևյալ հղումը՝ <https://www.bundestag.de/resource/blob/408112/4eda1788159c63354110acc7b6a58a6c/WD-7-328-06-pdf-data.pdf>:
- ²⁵ Տե՛ս, Epping V., Grundrechte, 8. Aufl., Berlin 2019, էջ 352:

Варздат Сукиасян

Помощник судьи Уголовной палаты Кассационного суда РА,
аспирант кафедры уголовного права и уголовно-процессуального права
института права и политики РАУ

РЕЗЮМЕ

Сущность защиты охраняемой законом тайны

Исследователи вопроса о соотношении правовых категорий «охрана тайны» и «защита тайны» не могут прийти к единому мнению относительно их сущности, содержания и допустимых пределов. Ученые различных исследовательских направлений сформировали противоположные позиции по вопросу о соотношении этих понятий. В статье была предпринята попытка обобщения взглядов различных ученых и исследователей на проблему, связанную с соотношением указанных категорий, а также было дано определение термина «защита тайны».

Ключевые слова: правовая охрана, правовая защита, юридическая ответственность, правовые гарантии, правомерное поведение, правонарушение, тайна.

Varazdat Sukiasyan

Assistant to the judge of the Criminal chamber of the RA Cassation court,
PhD student of the Chair of Criminal Law and Criminal Procedure Law of
RAU, Institute of Law and Politics

SUMMARY

The Essence of Defense of Secret Protected by Law

Researchers of the correlation between the legal categories of “protection of secrets” and “defense of secrets” cannot agree on their nature, content and permissible limits. Scientists from different research areas have formed opposing positions on the issue of the relationship between these concepts. The article made an attempt to generalize the views of various scientists and researchers on the problem associated with the ratio of these categories, and also gave a definition of the term “defense of secret.”

Key words: legal protection, legal defense, legal liability, legal guarantees, lawful behavior, offense, secret.

Բնագիրը ներկայացվել է 16.07.2020թ.

Ընդունվել է տպագրության 09.09.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Լ. Թադևոսյանը

ՆԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՀ վարչական դատարանի դատավորի օգնական,
Հայաստանի ամերիկյան համալսարանի
իրավագիտության մագիստրոս

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՄԱՆ ՀԱՅՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Սույն աշխատանքում ուսումնասիրվել են որոշ հիմնախնդիրներ՝ կապված ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հրամանագիր արձակելուն ՀՀ նախագահին պարտավորեցնելու հայցապահանջի՝ որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պարտավորեցման հայցի շրջանակներում քննության առարկա դառնալու հետ: Որպիսի ուսումնասիրության նպատակը պայմանավորված է օրենսդրական կարգավորումների բացակայության և դատական պրակտիկայում հանդիպող որոշակի տարակարծություններով:

Հիմնադրադեռ՝ ՀՀ նախագահ, ՀՀ քաղաքացիություն, պարտավորեցման հայց, հրամանագիր, վարչական ակտ, վարչական վարույթ, իրավասություն:

Պարտավորեցման հայցը, ի թիվս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք)¹ նախատեսված մյուս հայցատեսակների, հանդիսանում է անձի կողմից վարչական մարմնի դեմ ՀՀ վարչական դատարան (այսուհետ՝ Դատարան) ներկայացվող հայցատեսակ, որի շրջանակներում հայցվորն ակնկալում է իր խախտված իրավունքների վերականգնումը՝ պատասխանող վարչական մարմնին բարենպաստ վարչական ակտ ընդունելու, վարչադատական կարգով պարտավորեցնելու միջոցով՝ խնդրելով պարտավորեցնել վարչական մարմնին՝ ընդունելու այն վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վերջինիս կողմից:

Մասնավորապես՝ Օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը: Ընդ որում, պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված՝ միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

Որպես ուսումնասիրության առարկա, հատկապես, հետաքրքրական է ՀՀ նախագահի դեմ պարտավորեցման հայցի շրջանակներում ներկայացվող հայցապահանջը, որը վերաբերում է ՀՀ նախագահի կողմից ՀՀ քաղաքացիության հարցի լուծման շրջանակներում ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հրամանագիր ընդունելուն:

ՀՀ նախագահի գործադիր-կարգադրիչի կարգավիճակը ձևավորող լիազորությունների թվում

առանձնապես կարևորվում է: Նա՝ օրենքով սահմանված կարգով, լուծում է ՀՀ քաղաքացիության հետ կապված հարցերը: Քաղաքացիություն շնորհելու լիազորություն իրականացնելիս Հանրապետության նախագահը ընդհանուր կանոնի գործառության շրջանակում ևս հանդես է գալիս որպես վարչական մարմին: Իսկ քաղաքացիություն շնորհելու մասին ՀՀ նախագահի հրամանագիրը վարչական ակտ է²:

Ըստ 2005 թվականի Սահմանադրության խմբագրության՝ Հանրապետության նախագահը մի շարք լիազորություններ իրականացնում էր ինքնուրույն, առանց որևէ այլ մարմնի միջամտության: Սինչեռե փոփոխված Սահմանադրությամբ՝ նախատեսվում է, որ Հանրապետության նախագահն այդ լիազորություններն իրականացնելու է Կառավարության կամ վարչապետի առաջարկությամբ, իսկ որոշ դեպքերում այդ լիազորությունները կարող են իրականացվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով³:

Այսպես, ՀՀ Սահմանադրության⁴ 134-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը: Իսկ 139-րդ հոդվածի համաձայն՝

1. Իր լիազորություններն իրականացնելիս Հանրապետության նախագահն ընդունում է հրամանագրեր և կարգադրություններ:

2. Հանրապետության նախագահը Սահմանադրության 131-137-րդ հոդվածներով, 155-րդ հոդ-

վածի 3-րդ մասով, 166-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերում կարող է համապատասխան ակտը, եռօրյա ժամկետում, իր առարկություններով, վերադարձնել առաջարկություն ներկայացնող կամ միջնորդությամբ դիմող մարմին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան:

3. Եթե Հանրապետության նախագահը չի կատարում նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ապա համապատասխան ակտն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:

Սահմանադրական այս նորմը նույնաբովանդակ կերպով արտահայտվել է նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի⁵ 13-րդ հոդվածի 6-րդ մասում և 26-րդ հոդվածում: Իսկ վերոնշյալ օրենքի 27-րդ հոդվածը, նախատեսելով քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծման կարգը, սահմանում է, որ ՀՀ-ում գտնվելու դեպքում ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ դիմումն անձը ներկայացնում է անձամբ ՀՀ ոստիկանություն, վերոնշյալ դիմումների կապակցությամբ: Վերջինիս կազմած եզրակացություններն ուղարկվում են Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողով, որն էլ համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո՝ քննարկում է այն հանձնաժողովի ղեկավարի կողմից հրավիրվող նիստերում: Քննարկման արդյունքում՝ կազմվում են ամփոփ եզրակացություններ և ՀՀ ոստիկանության կազմած եզրակացությունների հետ մեկամսյա ժամկետում ներկայացվում ՀՀ վարչապետին: ՀՀ վարչապետը հանձնաժողովի կողմից եզրակացություններն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում ՀՀ նախագահին է ներկայացնում քաղաքացիության վերաբերյալ դիմում՝ ներկայացրած անձի դիմումը մերժելու կամ բավարարելու մասին առաջարկություն՝ կցելով ՀՀ նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը: Նույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում, ՀՀ վարչապետը կարող է անձին քաղաքացիություն շնորհելու մասին առաջարկությունը ներկայացնել ՀՀ նախագահին՝ առանց Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովից եզրակացություն ստանալու: Իսկ ՀՀ նախագահի համապատասխան հրամանագրերն ընդունվում է ՀՀ Սահմանադրության 139-րդ հոդվածով սահմանված կարգով:

Վերոգրյալ իրավակարգավորումներից

հետևում է, որ ՀՀ նախագահն, ունենալով ՀՀ քաղաքացիության հարցերի լուծման սահմանադրական լիազորություն, ըստ էության, իր լիազորությունն իրականացնելիս սահմանափակված է ՀՀ վարչապետի ներկայացրած առաջարկությամբ, քանի որ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ ՀՀ վարչապետի կողմից ներկայացված առաջարկության և հրամանագրի նախագծի հետ համաձայն չլինելու դեպքում՝ ՀՀ նախագահը կարող է այն իր առարկություններով ներկայացնել ՀՀ վարչապետին, որոնք վերջինիս կողմից չընդունվելու դեպքում՝ ՀՀ նախագահին մնում են միայն վերջինիս վերապահված երկու լիազորություններ. նա կ'ստորագրում է համապատասխան հրամանագիրը, կ'ամրագրում է ՀՀ սահմանադրական դատարան: Միաժամանակ, սահմանված է նաև երրորդ տարբերակը, երբ վերոնշյալ լիազորությունները չիրականացնելու, այսինքն, անգործություն դրսևորելու դեպքում՝ հրամանագիրն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:

Պետք է նշել նաև, որ առկա չէ որևէ կարգավորում Սահմանադրական դատարանի կողմից հրամանագրի վերաբերյալ որոշում կայացնելու հետ կապված: Ըստ էության՝ վերոնշյալ հանգամանքի կարգավորման տիրույթն ընդգրկվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)⁶ կարգավորման առարկայի շրջանակներում:

Մասնավորապես՝ Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումներից հետևում է, որ ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է ՀՀ նախագահի հրամանագրերի համապատասխանությունը Սահմանադրությանը՝ ընդունելով համապատասխան որոշում: Սակայն, հնարավոր է նաև իրավիճակ, երբ հրամանագրի նախագիծը լինի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, սակայն, միաժամանակ՝ ոչ իրավաչափ: Օրինակ՝ ՀՀ նախագահի հրամանագրի նախագծով պետք է մերժվի անձի դիմումը ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ՝ վերջինիս կողմից ՀՀ նկատմամբ չկատարված պարտավորություն (օրինակ՝ զինվորական հաշվառման կանգնելու չկատարված պարտավորություն) ունենալու հիմքով, սակայն ՀՀ նախագահը չի կարող պարզել նման պարտավորության առկայության հարցը և ըստ այդմ՝ որոշել հրամանագրի նախագծի իրավաչափությունը, քանի որ, եթե պարզվի, որ սխալմունք է տեղի ունեցել, և անձն իրականում ոչ մի պարտավորություն էլ չի ունեցել, կստացվի, որ հրամանագրի նախագիծը եղել է ոչ իրավաչափ, և, իրակա-

նում, պետք է ընդունվեր հակառակ լուծում ունեցող հրամանագիր, որպիսին իրավասություն գործող իրավակարգավորումների պայմաններում ՀՀ նախագահին վերապահված չէ: Այստեղից հետևում է, որ անգամ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ նախագահի հրամանագրի նախագծի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի պարզաբանումից հետո էլ ՀՀ նախագահը հրամանագրի նախագծի ոչ իրավաչափ լինելու պայմաններում որևէ գործուն լիազորություններով օժտված չէ:

Դեռ ավելին, առավել խորը ուսումնասիրության արդյունքում ստացվում է նաև, որ ՀՀ նախագահը նույնիսկ օժտված էլ չէ ՀՀ վարչապետի ներկայացրած հրամանագրի նախագծի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու լիազորությամբ, քանի որ Օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ նախագահին վերապահված է Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործերով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավասություն այն դեպքում, երբ վերջինիս ներկայացված առաջարկությունը (տվյալ դեպքում՝ ՀՀ վարչապետի կողմից ներկայացված առաջարկությունը) հակասում է Սահմանադրությանը: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է ՀՀ նախագահի կողմից ՀՀ սահմանադրական դատարան դիմելու լիազորություն, այն դեպքում, երբ առաջարկություն ներկայացրած իրավասու մարմինը չի ընդունում ՀՀ նախագահի առաջարկությունը՝ առաջարկության վերաբերյալ, և ՀՀ նախագահը չի ստորագրում համապատասխան ակտը և դիմում է ՀՀ սահմանադրական դատարան՝ տվյալ ակտի (տվյալ դեպքում՝ հրամանագրի նախագծի) Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

Այսինքն՝ ստացվում է, որ Սահմանադրությանը և Օրենքով ՀՀ նախագահին վերապահված են ՀՀ քաղաքացիության հարցերի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրար հակասող լիազորություններ: Ընդ որում, ՀՀ սահմանադրական դատարանին, ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասով, վերապահված է, ըստ ՀՀ նախագահի հրամանագրերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու լիազորությունը: Հետևաբար, պարզ չէ՝ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ ՀՀ վարչապետի առաջարկության և հրամանագրի նախագծի հետ համաձայն չլինելու դեպքում ՀՀ նախագահը ո՞ր ակտի սահմանադրականության հարցով կարող է

դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ, հրամանագրի նախագծի, թե՞ արդեն իսկ ընդունված հրամանագրի սահմանադրականության հարցի պարզաբանման նպատակով:

Ուստի, տվյալ դեպքում նախ անհրաժեշտ է պարզել՝ արդյոք ՀՀ նախագահը համարվում է ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու հարցով վարչական ակտ ընդունող իրավասու սուբյեկտ, թե՞ ոչ:

Հատկանշական է, որ Օրենսգրքով նախատեսված վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման և ճանաչման հայցատեսակներից ՀՀ նախագահին համապատասխան հրամանագիր ընդունելուն պարտավորեցնելու հայցապահանջը համապատասխանում է պարտավորեցման հայցատեսակին բնորոշ հատկանիշներին: Մասնավորապես՝ 1) հայցապահանջն ուղղված է ՀՀ նախագահի դեմ, ով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի⁷ 3-րդ հոդվածի իմաստով, հանդիսանում է վարչական մարմին, 2) ՀՀ նախագահի հրամանագիրը հանդիսանում է վարչական ակտ, որով լուծվում է անձին ՀՀ քաղաքացիություն շնորհելու հարցը, 3) անձը դիմել է վարչական մարմնին՝ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ, որպիսի պահանջը ՀՀ նախագահի հրամանագրով մերժվել է, այսինքն՝ առկա է միջամտող վարչական ակտ, որով մերժվել է բարենպաստ վարչական ակտի ընդունումը, 4) անձի պահանջն ուղղված է վերջինիս համար բարենպաստ հանդիսացող, իր՝ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հրամանագիր ընդունելուն:

Այսինքն՝ տվյալ դեպքում առկա են պարտավորեցման հայց ներկայացնելու՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր նախապայմանները, սակայն պարտավորեցման հայցի շրջանակներում, քննության առարկա դարձնելով ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու հիմքերի առկայության կամ բացակայության հարցը՝ Դատարանը, Օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իրավակարգավորումների համատեքստում նախ պետք է պարզի հայցվող բարենպաստ վարչական ակտի, այն է՝ ՀՀ նախագահի համապատասխան հրամանագրի իրավաչափության հարցը, տվյալ հանգամանքն էլ պայմանավորելու է հայցի բավարարումը կամ մերժումը: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ միայն վերոնշյալ փաստի հաստատումը՝ հրամանագրի իրավաչափ լինելը, բավարար չէ հայցը բավարարելու համար, քանի որ պարտավորեցման հայցն ուղղված է դատական կարգով վարչական մարմնին իր իրավասության շրջանակներ-

րում օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելուն: Այլ կերպ ասած՝ եթե պարզվի, որ ՀՀ նախագահը չի հանդիսանում ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու հարցը լուծող իրավասու սուբյեկտ, ստացվում է, որ Դատարանը չի կարողանա պարտավորեցնել ՀՀ նախագահին ընդունելու այնպիսի հրամանագիր, որի ընդունումը դուրս է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված իրավասության շրջանակներից, որքան էլ որ իրավաչափ լինի հայցվող վարչական ակտը:

Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով 26.12.2016 թվականին արտահայտած իրավական դիրքորոշմամբ հայտնել է, որ. «Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ պարտավորեցման հայցի բուն նպատակը անձի համար քարենպաստ վարչական ակտի ընդունմանը հասնելն է, և հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե վարչական դատարանը ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հաստատված է համարում հայցվող քարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, վերջինս պետք է կայացնի հայցը բավարարելու վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ անվավեր ճանաչելով վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը և պարտավորեցնելով վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը»⁸:

Այսինքն՝ վերոգրյալ իրավական դիրքորոշումից հետևում է, որ Դատարանը, քննության առարկա դարձնելով հայցվող հրամանագրի իրավաչափության հարցը, անուղղակի կերպով քննության առարկա է դարձնելու նաև հրամանագրին նախորդող գործընթացների իրավաչափությունը, հետևաբար, եթե պարզվի, որ վիճարկվող հրամանագրի հիմքում ընկած գործընթացն իրականացվել է օրենքի խախտմամբ, իսկ հայցվող հրամանագիրը հանդիսանում է իրավաչափ վարչական ակտ, ուստի, գտնում ենք, որ Դատարանը պետք է ունենա համապատասխան լիազորություն՝ պարտավորեցնելու ՀՀ նախագահին ընդունելու համապատասխան հրամանագիր:

Վերոնշյալ հանգամանքով էլ պայմանավորված է ՀՀ նախագահի դեմ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հրամանագիրը՝ այն ընդունել պարտավորեցնելու, հայցապահանջ ներ-

կայացնելու դեպքում որպես պարտավորեցման հայց դիտարկելու հիմնախնդիրը, քանի որ դատական պրակտիկայում վերոնշյալ հարցի վերաբերյալ առկա են որոշակի տարբերություններ:

Մասնավորապես՝ թիվ ՎԴ/2968/05/19 վարչական գործով Դատարանն արձանագրել էր, որ. «...եթե վարչական ակտի ընդունմանը նախորդում է և դրա հիմքում դրվում է դատավարական ընթացակարգը, երբ դատարանը քննում է անձի կողմից ներկայացված պարտավորեցման հայցը, ապա այդ դեպքում էական են ոչ թե վարչարարական ընթացակարգերը, այլ դատավարական կանոնները և այդ կանոններով վարչական ակտի իրավաչափության հիմնավորվածության հարցը, հետևաբար, սույն գործի շրջանակներում միակ էական հանգամանքն այն է, թե դատավարական կանոններով հիմնավորվա՞ծ է արդյոք հայցվող վարչական ակտի կայացման համար անհրաժեշտ նյութաիրավական հիմքերի առկայությունը, թե՞ ոչ...»⁹ այդպիսով բավարարելով հայցվորի պահանջը՝ անվավեր ճանաչել համապատասխան հրամանագիրը և պարտավորեցնել ՀՀ նախագահին՝ ընդունել հայցվորի քաղաքացիությունը դադարեցնելու մասին հրամանագիրը:

Վերոնշյալ դատական ակտը, սակայն, բողոքարկվել էր վերաքննության կարգով, որն էլ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանն իր որոշմամբ բեկանել էր՝ նշելով, որ. «...Հանրապետության նախագահին իրավասություն չունի լուծելու ՀՀ քաղաքացիություն շնորհելու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու հետ կապված հարցերը՝ դրանց վերաբերյալ ՀՀ վարչապետի առաջարկությանն ու կից ներկայացվող հրամանագրի նախագծին հակառակ հրամանագիր ընդունելու միջոցով: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի համոզմամբ, ՀՀ քաղաքացիություն շնորհելու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերի հետ կապված ՀՀ վարչապետի առաջարկությանը համապատասխան հրամանագիր ընդունելու (առաջարկությանը կից համապատասխան հրամանագրի նախագիծը ստորագրելու) փոխարեն Հանրապետության նախագահի կողմից հիշյալ հարցերի կապակցությամբ հակառակ լուծում տվող հրամանագրի ընդունումը որևէ կերպ չի կարող հանդիսանալ Հանրապետության նախագահի՝ ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքով հստակ ամրագրված լիազորությունների ծավալի մեջ մտնող և այդ լիազորություններից բխող իրավաչափ գործառնությ ... »¹⁰:

Մեկ այլ վարչական գործով և՛ Դատարանը, և՛ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը դիրքորոշ-

ում էին արտահայտել, ըստ որի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ նախագահի համապատասխան հրամանագրով մերժվել էր ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու վերաբերյալ հայցվորի դիմումը, ուստի հայցապահանջում առկա է պարտավորեցման հայցով ՀՀ վարչական դատարան դիմելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նախապայմանը¹¹ :

Վկայակոչված դատական ակտերից հետևում է, որ դատական պրակտիկայում դեռևս չի մշակվել միանշանակ մոտեցում՝ կապված ՀՀ նախագահին համապատասխան հրամանագիր ընդունել պարտավորեցնելու պահանջը Օրենսգրքով նախատեսված պարտավորեցման հայցի շրջանակներում քննելու և այն որպես պարտավորեցման հայց դիտարկելու վերաբերյալ: Ըստ էության՝ դատական պրակտիկան ընթանում է երկու տարբեր ուղղություններով՝ մի դեպքում համարելով, որ ՀՀ նախագահն իրավասու չէ ընդունելու ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու հետ կապված հարցի շրջանակներում ՀՀ վարչապետի կողմից ներկայացված առաջարկությանը հակասող հրամանագիր, որպիսի պայմաններում վերջինիս, ըստ էության, պարտավորեցման հայցի շրջանակներում մնան հրամանագիր ընդունելը պարտավորեցվել չի կարող, իսկ մյուս ուղղությունը հանգում է նրան, որ այն դեպքում, երբ պահպանված են պարտավորեցման հայցի ներկայացման համար օրենսդրությամբ սահմանված նախապայմանները, ապա ՀՀ նախագահի դեմ ներկայացված հայցը՝ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու, հրամանագիր ընդունելուն պարտավորեցնելու վերաբերյալ, պետք է դիտարկվի որպես պարտավորեցման հայց:

Ընդ որում, առաջին տեսակետի կողմնակիցները, պնդելով, որ վերոնշյալ հայցապահանջը չի կարող համարվել պարտավորեցման հայց և քննվել դրա շրջանակներում, միաժամանակ լուծում չեն տալիս այն հարցին, թե ինչպիսի հայցատեսակի շրջանակներում պետք է իրացվի անձի արդար դատաքննության իրավունքը այն դեպքում, երբ անձը դիմում է ներկայացրել՝ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ, և ՀՀ նախագահի կողմից այն մերժվել է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձի կողմից ներկայացված պահանջն ամբողջովին համապատասխանում է պարտավորեցման հայցի համար օրենսդրությամբ նախատեսված բոլոր նախապայմաններին, հետևաբար՝ գործի դատաքննության սկզբնական՝ հայցադիմումի ընդունման փուլին՝ վերոնշյալ պահանջների պահպանմամբ

ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, ըստ էության, բացակայում են: Իսկ ինչ վերաբերում է ՀՀ նախագահի կողմից ՀՀ քաղաքացիության հարցերի լուծման վերաբերյալ հրամանագիր ընդունելու լիազորություն չունենալու հանգամանքին, ապա դա, մեր կարծիքով, կարող է քննության առարկա դառնալ ոչ թե հայցադիմումի ընդունման, այլ գործը ըստ էության լուծող դատական ակտի կայացման ժամանակ: Այլ կերպ ասած՝ այն կարող է հիմք հանդիսանալ Դատարանի կողմից հայցը մերժելու կամ բավարարելու համար: Մինչդեռ, հաշվի առնելով դատական պրակտիկայում հանդիպող տարբերումները՝ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հրամանագիր ընդունելուն ՀՀ նախագահին պարտավորեցնելու պահանջը՝ պարտավորեցման հայց դիտարկելու հարցի վերաբերյալ կարող է ստացվել մի իրավիճակ, երբ այդ տարբերումների հետևանքով մի դեպքում վերոնշյալ պահանջով հայցադիմումը օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված լինելու պարագայում կընդունվի վարույթ, իսկ մյուս դեպքում՝ հայցադիմումի ընդունումը կմերժվի, այն հիմքով, որ ՀՀ նախագահն իրավասու չէ համապատասխան հրամանագիր ընդունելու, ուստի հայցը ենթակա չի լինի դատարանում քննության:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցի որոշումը հանդիսանում է փոխկապակցված վարույթների ամբողջություն, որում ընդգրկված են տարբեր վարչական մարմինների կողմից իրականացվող տարբեր վարույթներ: Ուստի, անգամ այն դեպքում, երբ համարենք, որ ՀՀ նախագահը չի իրականացնում առանձին վարչական վարույթ, և ըստ այդմ՝ վերջինիս լիազորությունների մեջ չի մտնում քաղաքացիության հարցի լուծումը, ապա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ մնան եզրահանգմամբ առարկայագուրկ կդառնա նաև ՀՀ վարչապետի կողմից ներկայացված առաջարկության վերաբերյալ առարկություններ կատարելու ՀՀ նախագահի լիազորությունը, քանի որ տրամաբանորեն ենթադրվում է, որ առարկությունների առաջացումը պետք է պայմանավորված լինի գործի քննությամբ և ուսումնասիրությամբ, իսկ վերոնշյալ գործընթացում ընդգրկված վարչական մարմինները թեև իրականացնում են առանձին վարչական վարույթներ, սակայն դրանք փոխկապակցված են միմյանց հետ և յուրաքանչյուր մոր վարույթ հանդիսանում է նախորդի շարունակությունը, իսկ մնան շղթայում որևէ վարչական մարմին գործն ըստ էության եզրափակող վարչական ակտ չի կայացնում, այլ ըստ էության՝ ընդունում է

ընթացակարգային, օժանդակ բնույթ կրող ակտեր, որոնց ամբողջության հիման վրա ընդունվում է համապատասխան հրամանագիրը:

Հետևաբար անձն իր իրավունքների պաշտպանության նպատակով չի կարող դիմել մեկ այլ վարչական մարմնի, օրինակ՝ ՀՀ վարչապետի դեմ, քանի որ վերջինս նույնպես գործն ըստ էության լուծող վարչական ակտ չի կայացնում, այլ վերջինիս իրավասությունը սահմանափակվում է՝ ՀՀ նախագահին հրամանագրի նախագիծ ներկայացնելով: Տվյալ դեպքում, անձի կողմից իր իրավունքների պաշտպանության նպատակով հայցը կարող է ներկայացվել վարույթը եզրափակող մարմնի՝ տվյալ դեպքում ՀՀ նախագահի դեմ, ով հանդիսանում է տվյալ վարչական վարույթը եզրափակող իրավասու սուբյեկտ, ում վարչական ակտով՝ հրամանագրով ամփոփվում են մի քանի վարչական մարմինների կողմից իրականացված տարբեր ընթացակարգային վարույթներ:

Ամփոփելով վերոգրյալը՝ հանգում ենք այն եզրակացության, որ անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանել ՀՀ նախագահի ՀՀ քաղաքացիության հարցերի լուծման հարցում հստակ լիազորությունների շրջանակը՝ վերջինիս հնարավորություն ընձեռելով սեփական հայեցողությամբ

որոշելու ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ ներկայացված դիմումը բավարարելու կամ մերժելու հարցը՝ հիմք ընդունելով նաև ՀՀ վարչապետի կողմից ներկայացված առաջարկությունը: Այսինքն, ըստ էության՝ առաջարկում ենք նախատեսել ՀՀ վարչապետի կողմից ներկայացված առաջարկությունը՝ ՀՀ նախագահի համար համապատասխան իրավակարգավորումներ՝ ոչ թե որպես պարտադիր, այլ՝ օժանդակ և խորհրդատվական բնույթ ունեցող առաջարկություն դիտարկելու վերաբերյալ: Այդպիսով, օրենսդրությամբ նախատեսելով ՀՀ նախագահին հայեցողական լիազորություն, կարգավորելով վերջինիս ՀՀ քաղաքացիության հարցերի լուծման ոլորտում դերը՝ առավել լայն իրավասություններ վերապահել:

Կարծում ենք՝ վերոնշյալ փոփոխությունների իրականացմամբ հնարավորություն կտրվի անձին իրացնելու իր արդար դատաքննության իրավունքը պարտավորեցման հայցի շրջանակներում, ինչպես նաև կհստակեցվեն ՀՀ նախագահի՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված և օրենքով ամրագրված իրավասությունները:

¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 05.12.2013 թվականին, ուժի մեջ է մտել 07.01.2014 թվականին: Տե՛ս, ՀՀՊՏ 2013.12.28/73 (1013).1, Հոդ.1186.1-րդ:

² Տե՛ս, «Պատմություն և հասարակագիտություն» Տարեգիրք (գիտական հոդվածների ժողովածու), Մանուկյան Ս., Վարչական մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, «Հայկարի» ՍՊԸ, Երևան: 2017, էջ 128:

³ Տե՛ս, Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության խմբագրությամբ Սահմանադրությունը, Համառոտ պարզաբանումներ. «Տիգրան Մեծ», Երևան: 2016, էջ 128:

⁴ Տե՛ս, ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 06.12.2015 թվականին, ուժի մեջ է մտել 22.12.2015 թվականին: Տե՛ս, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118-րդ:

⁵ Տե՛ս, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 06.11.1995 թվականին, ուժի մեջ է մտել 28.11.1995 թվականին: Տե՛ս ՀՀԱԺՏ 1995/8:

⁶ Տե՛ս, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, Ընդունվել է 17.01.2018 թվականին, ուժի մեջ է մտել 09.04.2018 թվականին: Տե՛ս, ՀՀՊՏ 2018.01.31/7(1365) Հոդ.74-րդ:

⁷ Տե՛ս, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, Ընդունվել է 18.02.2004 թվականին, ուժի մեջ է մտել 31.12.2004 թվականին: Տե՛ս, ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413-րդ:

⁸ Տե՛ս, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով 26.12.2016 թվականի որոշումը:

⁹ Տե՛ս, ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/2968/05/19 վարչական գործով 25.07.2019 թվականի վճիռը, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932999.

¹⁰ Տե՛ս, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի թիվ ՎԴ/2968/05/19 վարչական գործով 20.12.2019 թվականի որոշումը, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932999.

¹¹ Տե՛ս, թիվ ՎԴ/9845/05/19 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 03.12.2019 թվականի որոշումը և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 24.01.2020 թվականի որոշումը, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940356.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1) ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 06.12.2015 թվականին, ուժի մեջ է մտել 22.12.2015 թվականին: Տե՛ս, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում: Հոդ. 1118-րդ:
- 2) Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 05.12.2013 թվականին, ուժի մեջ է մտել 07.01.2014 թվականին: Տե՛ս, ՀՀՊՏ 2013.12.28/73 (1013).1, Հոդ.1186.1-րդ:
- 3) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 18.02.2004 թվականին, ուժի մեջ է մտել 31.12.2004 թվականին: Տե՛ս, ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413-րդ:
- 4) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 06.11.1995 թվականին, ուժի մեջ է մտել 28.11.1995 թվականին: Տե՛ս, ՀՀԱԺՏ 1995/8:
- 5) «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք: Ընդունվել է 17.01.2018 թվականին, ուժի մեջ է մտել 09.04.2018 թվականին: Տե՛ս, ՀՀՊՏ 2018.01.31/7(1365) Հոդ.74-րդ:
- 6) Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության խմբագրությամբ Սահմանադրությունը, Համառոտ պարզաբանումներ. «Տիգրան Մեծ», Երևան: 2016, էջ 128:
- 7) Մանուկյան Ս., Վարչական մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, «Պատմություն և հասարակագիտություն» Տարեգիրք (գիտական հոդվածների ժողովածու), «Հայկարի» ՍՊԸ, Երևան: 2017, էջ 128:
- 8) ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով 26.12.2016 թվականի որոշում:
- 9) ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/2968/05/19 վարչական գործով 25.07.2019 թվականի վճիռ, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932999.
- 10) ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի թիվ ՎԴ/2968/05/19 վարչական գործով 20.12.2019 թվականի որոշում, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932999.
- 11) ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի թիվ ՎԴ/9845/05/19 վարչական գործով 24.01.2020 թվականի որոշում, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940356.

Нарине Аракелян

Помощник судьи Административного суда РА,
магистр юриспруденции Американского университета Армении

РЕЗЮМЕ

Вопросы о прекращении гражданства РА в рамках иска о принуждении

В данной статье были изучены некоторые вопросы связанные с расследованием иска об обязывании Президента РА принять постановление о прекращении гражданства РА в рамках иска о принуждении предусмотренного кодексом административного судопроизводства РА, цель расследования которого связано с отсутствием законодательных положений и некоторых разногласий в судебной практике.

Ключевые слова: Президент РА, гражданство РА, иск о принуждении, постановление, административный акт, административное производство, полномочия.

Narine Arakelyan

Judge's assistant of the Administrative Court of RA
Master of laws of American University of Armenia

SUMMARY

Issues on the termination of citizenship of RA within the framework of the action of compelling

This article discusses some issues on examining the action of compelling a president of RA to terminate the citizenship of RA as the action of compelling stipulated by the Administrative procedure code of RA and the aim of the examination is connected to the absence of legal regulations and some disagreements in judicial practice.

Key words: President of RA, citizenship of RA, action of compelling, order, administrative act, administrative procedure, authority.

Բնագիրը ներկայացվել է 19.08.2020թ.

Ընդունվել է տպագրության 09.09.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու Լ. Հակոբյանը

ՎԻՐԱԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝
Դատական դեպարտամենտի Դատավորների ընդհանուր
ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության
ապահովման վարչության Դատավորների ընդհանուր ժողովի
և հանձնաժողովների գործունեության ապահովման բաժնի
առաջատար մասնագետ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ՄԵՂՔԻ ԵՎ ՊԱՏԺԻ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԴՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԴՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ

Աշխատանքում փորձ է արվել հնարավորինս բացահայտել մեղքի և պատժի համաչափության սկզբունքների իմաստը և նշանակությունը, ընդգծել իրավական սկզբունքի սահմանադրական մակարդակում ամրագրումը՝ որպես դրա նշանակության վրա որոշակի ազդեցություն ունեցող հանգամանք:

Փորձ է արվել ընդգծել նաև իրավական սկզբունքի մեկնաբանումը՝ որպես սկզբունքի իմաստի և նշանակության բացահայտման համար օգտակար գործիք հանդիսացող երևույթ: Նաև՝ բացահայտել մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքների կապը և հարաբերակցությունը սահմանադրական ու իրավական այլ սկզբունքների հետ՝ սահմանադրական նոր կարգավորումների ներքո:

Հիմնաբառեր - իրավունքի սկզբունք, սահմանադրական սկզբունք, սկզբունքի իմաստ և բովանդակություն, սկզբունքի նշանակություն, մեկնաբանում, իրավական համակարգ:

Ժամանակակից տեսության մեջ, իրավական սկզբունքների ներքո, հաճախ հասկացվում են օրենքում ամրագրված գաղափարական, քաղաքական և բարոյական սկզբունքները, որոնք սահմանում են հասարակական հարաբերությունների կարգավորման ուղղությունը, բնույթը, հիմքը և ծավալը:

Ըստ իրավական նշանակության՝ սկզբունքները հանդիսանում են, այսպես կոչված, իրավունքի նորմերի հատուկ տեսակ և այդ պատճառով էլ հաճախ իրավակիրառ պրակտիկայում, այլ իրավական նորմերի հետ մեկտեղ, հաշվի են առնվում աշխարհի տարբեր երկրներում գործող դատարանների կողմից այս կամ այն գործը քննելիս: Մասնավորապես, իրավական սկզբունքները բացառիկ նշանակություն են ստանում իրավունքի նորմեր կամ օրենքի դրույթներ մեկնաբանելիս, ինչպես նաև իրավական տարբեր հակասություններ լուծելիս:

Բացի այդ, իրավական սկզբունքները հանդիսանում են նաև գիտական կատեգորիա, քանի որ հաճախ հենց տեսության մեջ տարբեր իրավական նորմեր բարձրացվում են սկզբունքների մակարդակի: Վերջին ժամանակներում, որպես իրավաբանական տեխնիկայի զարգացման արդյունք, սկզբունքները սկսեցին հռչակվել օրենսդրությամբ: Ի դեպ, որպես կանոն, դա արվում է սահմանադրական կամ այլ հիմնարար իրավական ակտերում:

Իրավունքի իրացումը, ինչպես ցանկացած նպատակաուղղված գործունեություն, օբյեկտիվորեն պահանջում է վերջինիս բովանդակության ըմբռնումը, ինչն, իր հերթին, ենթադրում է համապատասխան իրավական, այդ թվում՝ նաև սահմանադրական նորմերի մեկնաբանություն, առանց որի հնարավոր չէ բացահայտել տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը, և այն համադրելով սահմանադրական իրավակարգավորումների հետ՝ հանգել որևէ հետևության, այսինքն՝ իրականացնել դատական սահմանադրական վերահսկողություն:

Այդ առումով՝ հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ տեքստը կարող է ընդգրկել բազմաթիվ իմաստային կառուցվածքներ, և, հետևաբար, բազմաթիվ իրավական նորմեր, որոնցից իրավակիրառ մարմինը պետք է ընտրի այն, որն ինքը կիրառելու է: Մինչ այդ ընտրությունը կի-

րառվող նորմ գոյություն չունի, գոյություն ունի միայն տեքստ: Որոշ առումով հենց մեկնաբանությունն է, որ տեքստը հարստացնում է կոնկրետ նորմով¹:

Վերոնշյալի հաշվառմամբ կարելի է եզրահանգել, որ իրավական սկզբունքների բովանդակության ամբողջական բացահայտման համար ևս կարևոր նշանակություն ունի դրանց մեկնաբանումը: Դա թույլ կտա բացահայտել իրավական սկզբունքների իմաստային ու բովանդակային բոլոր տարրերը՝ թե՛ տեսական, թե՛ գործնական մակարդակներում:

Գործնական մակարդակում, մասնավորապես, կարևորում ենք դատական պրակտիկայում դատարանների կողմից իրավական սկզբունքների մեկնաբանման կարևորությունը: Այդ հարցում թերևս առաջնային դեր է ստանձնել Սահմանադրական դատարանը, քանի որ այն մարմինն է Սահմանադրության և օրենքի, ինչպես նաև՝ դրանց առանձին դրույթների մեկնաբանման գործառնության կամ լիազորության հիմնական կրողը, եթե ոչ՝ երկրի սահմանադրական արդարադատություն իրականացնողը:

Բայցևայնպես, այս համատեքստում փոքր չէ նաև մյուս դատարանների դերը, որոնք պարբերաբար իրենց կողմից կայացվող դատական ակտերով տալիս են օրենքի դրույթի յուրովի մեկնաբանություն, և հաճախ դրանք կարող են վերաբերել այն իրավական սկզբունքներին, որոնք դատարանը կիրառել է կոնկրետ իրավահարաբերության համար:

Պետք է նշել նաև, որ իրենց կիրառման առումով՝ իրավական սկզբունքները լինում են ընդհանուր (համընդհանուր) և հատուկ: Առաջին խումբ սկզբունքները ավելի կիրառելի են ընդհանուր իրավական համակարգի համար և այս կամ այն իրավունքի ճյուղում ընդամենը վեր են հանում որոշակի առանձնահատկություններ: Երկրորդ խումբ սկզբունքները բացահայտում են առանձին իրավունքի ճյուղերի իրավական կարգավորումների որակական առանձնահատկությունները:

Ավելին, համընդհանուր իրավական սկզբունքները, կախված դրանց ամրագրման եղանակից, կարող են հանդես գալ որպես միջազգային իրավական կամ սահմանադրական սկզբունքներ: Հատկանշական է, որ հիմնականում այն սկզբունքները, որոնք առնչվում են քրեական իրավունքի ոլորտին, հանդիսանում են միաժամանակ և՛ միջազգային իրավական, և՛ սահմանադրական սկզբունքներ. այսպես կարելի է դիտարկել նաև մեր հետազոտության առարկա հանդիսացող սկզբունքները:

Վերը նշված սկզբունքները, միջազգային հանրության համար, կրում են առավել ունիվերսալ բնույթ՝ իրենց բոլոր տարաբնույթ իրավական համակարգերով հանդերձ:

Կարծում ենք, որ իրավական տարբեր ակտերով ամրագրված սկզբունքներում տեղ գտած յուրաքանչյուր բառ ունի կոնկրետ իրավական իմաստ ու նշանակություն, և դրանք միասին նախանշում են տվյալ սկզբունքի ուղղությունն ու բնույթը, հիմքն ու ծավալը: Սկզբունքների իմաստն ու նշանակությունն ունեն կարևոր դերակատարում դրանց նպատակի, գործառնության ամբողջ ծավալով կատարման հարցում, քանզի դրանք պետք է արտահայտեն այն ամբողջ իրավական փիլիսոփայությունը, որը սահմանադիրը կամ օրենսդիրը նկատի է ունեցել՝ այդ սկզբունքներն այս կամ այն իրավական ակտով ամրագրելիս:

Իրավունքի տեսության մեջ իրավական սկզբունքները դիտարկվում են տարբեր հայացքների ներքո: Օրինակ՝ Չեռնովը նշում է, որ իրավունքի սկզբունքները որոշ գաղափարներ են, որոնք որոշակի ձևով ազդում են իրավունքի համակարգի կառուցման, իրավունքի իրացման վրա և վերջնական արդյունքում արտացոլվում են իրավակարգում²: Այս ամենը նույնպես ներառվում է սկզբունքի էության ընդհանուր համատեքստում, և այդ գաղափարները պետք է լինեն համահունչ սկզբունքի իմաստի և բովանդակության հետ:

Յավիչը նշում էր, որ սուբյեկտիվ իրավունքների և կոնկրետ իրավահարաբերությունների շրջանում որոշ սկզբունքներ կարող են ձևավորվել, կատարելագործվել և գործել մինչ որոշակի ժամանակահատվածը՝ չլինելով օրենսդրության մեջ, լինելով պարզ արտահայտված, կարող են գործարկվել դատական պրակտիկայի և իրավական սովորույթների ոլորտում: Չնայած, իհարկե, օպտիմալ տարբերակը կայանում է սահմանադրական օրենսդրությունում հիմնական սկզբունքների առավել լրիվ ամրագրման մեջ³: Սա ևս կարելի է դիտարկել որպես իրավունքի որոշակի զարգացման դրսևորում, քանի որ համոզված ենք, որ յուրաքանչյուր սկզբունքի իմաստը և բովանդակությունն անընդհատ կարող են համալրվել նոր տարրերով և գաղափարներով, ինչի արդյունքում կարող է փոփոխությունների ենթարկվել նաև սկզբունքի նշանակությունը: Նմանատիպ գործընթաց կարող է տեղի ունենալ նաև սկզբունքի՝ մեկ այլ, նորմատիվ իրավական ակտում ամրագրելիս՝ որպես խնդրո հետազոտման առարկա, մեղքի և պատժի համաչափության սկզբունքների պարագայում: Կարծում ենք, որ սահմանադրական մակարդակում ամրագրվելիս

դրանք ստացել են ավելի լայն նշանակություն և կարող են տարածվել ավելի լայն շրջանակի իրավահարաբերությունների վրա:

Խնդրո հետազոտման առարկա ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածը նվիրված է մեղքի և պատժի համաչափության սկզբունքներին:

Նշված հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է:

Օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին:

Սահմանադիրը, նշելով «հանցանք» բառը, ամբողջ հոդվածի տրամաբանությունը տալիս է դեպի քրեաիրավական դաշտ:

Ինչպես գրեթե յուրաքանչյուր սահմանադրական սկզբունք, այնպես էլ մեղքի և պատժի համաչափության սկզբունքները ունեն լայն մեկնաբանության և իրավունքի տարբեր ճյուղերի վրա տարածում ունենալու տեսական և գործնական հնարավորություն: Հենց դրանով էլ որոշակի չափով պայմանավորված է դրանց՝ Սահմանադրությամբ ամրագրված լինելը, սահմանադրական բնույթը:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

Վերոգրյալից հետևում է, որ հանցանք կատարելը հանդիսանում է քրեական պատասխանատվություն առաջացնող միակ հիմքը, որի հանցակազմի բոլոր հատկանիշները պետք է բացառապես նախատեսված լինեն քրեական օրենքով: Այսինքն որևէ այլ օրենքով հանրության համար վտանգավոր որևէ հակաօրինական արարք չի կարող դիտարկվել որպես հանցանք:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է նաև, որ միայն հանցանք կատարելու դեպքում կարող է առաջանալ քրեական պատասխանատվություն, այսինքն՝ քրեական պատիժ:

Հետևաբար, Սահմանադրության 71-րդ հոդվածով ամրագրված դրույթները քրեաիրավական տիրույթում դիտարկելը խոչընդոտում է մեղքի և պատժի համաչափության սկզբունքների տարածական բնույթի արտացոլմանը և ավելի լայն իմաստով մեկնաբանմանը: Չէ՞ որ նշված սկզբունքներն

իրենց դրսևորումն են ստանում օրենքով նախատեսված բոլոր այն դեպքերում, երբ սահմանված է մեղքով դրսևորված որևիցե արարք և դրա համար նախատեսված պատասխանատվություն, ինքնատիպ պատիժ: Այդ մեղքը կարող է դրսևորվել ոչ միայն քրեաիրավական, այլ նաև՝ սահմանադրաիրավական, վարչաիրավական և այլ ոլորտներում, ինչի մասին աշխատանքում ավելի մանրամասն անդրադարձ է կատարվում՝ քննարկվող սկզբունքների տեղայնացման հարցը մեկնաբանելիս:

Նույն 71-րդ հոդվածի առաջին մասի բովանդակությունից բխում է նաև մեղքի և պատժի անվերապահորեն կապը, քանի որ նշվածից հետևում է, որ հենց նրա, այսինքն՝ հանցանք կատարած անձի մեղքն է հանդիսանում պատժի հիմքը:

Հիշատակված դրույթի իմաստային նշանակությունից երևում է Սահմանադրության 71-րդ հոդվածի կապն, ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի հետ: Չէ՞ որ վերջինիս իմաստը կայանում է նրանում, որ անձը կարող է ենթարկվել այս կամ այն պատասխանատվության հենց իր կողմից կատարված կամ իր մեղքի արդյունքում առաջացած հետևանքի համար՝ նման տրամաբանություն առկա է նաև Սահմանադրության 71-րդ հոդվածի առաջին նախադասությունում:

Նույն հոդվածի երկրորդ մասում չի մատնանշվում օրենքի քրեաիրավական ուղղվածության բացակայությունը և արարքի հանցավոր լինելու բացակայությունը, ինչը հեռացնում է հոդվածի իմաստն ու բովանդակությունը գուտ քրեաիրավական դաշտում ընկալելուց, որը չի կարելի ասել հոդվածի առաջին մասի դեպքում:

2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը կարևորագույն քայլ է կատարում քրեաիրավական երաշխիքների սահմանադրական կարգավորման հարցում՝ առաջին անգամ ամրագրելով մեղքի սկզբունքը: Այս սկզբունքն ունի սահմանադրաիրավական ու քրեաիրավական բաղադրիչներ: 71-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է: Այս իմաստով մեղքի սկզբունքն ապահովում է, որ քրեական պատժի ենթարկվի միմիայն այն ֆիզիկական անձը, ում կարելի է մեղադրել այն բանի համար, որ իր մեղավոր հակաիրավական վարքագծով է կատարել հանցանքը⁴:

Նույն հոդվածի 2-րդ մասը ապահովում է, որ մեղավորությամբ գործած հանցագործի նկատմամբ նշանակվի միմիայն այնպիսի քրեական պատիժ, որը համապատասխանում է այդ հանցանքով նրա կողմից դրսևորված մեղքի աստիճանին: Հանցանք կատարած անձի նկատմամբ սահմանված

պատիժը պետք է արդար հարաբերակցության մեջ լինի ինչպես կատարված արարքի ծանրության, այնպես էլ հանցանք կատարած անձի մեղավորության աստիճանի հետ: Պատժի կանխարգելիչ նպատակները (ինչպես, օրինակ՝ վերասոցիալականացումը կամ հետագա հանցագործություններից հետ պահելը) կոնկրետ պատիժ սահմանելիս (տեսակն ու չափը) կարող են հաշվի առնվել միմիայն այն ծավալով, որը թույլատրում է հանցանք կատարած անձի առանձին արարքին վերաբերող մեղքի չափը: Արարքի և պատժի համաչափության սկզբունքը ամրագրված է Եվրոպական միության հիմնական իրավունքների Խարտիայի 49-րդ հոդվածի 3-րդ մասում⁵:

Նշված մեջբերման առաջին պարբերությունից երևում է, որ Սահմանադրության 71-րդ հոդվածի 1-ին մասը մեկնաբանվում է բացառապես քրեական պատժի տիրություն, մինչդեռ, կարծում ենք, որ Սահմանադրությամբ պետք է տրվեր թե՛ մեղքի, և թե՛ պատժի ավելի լայն իմաստով մեկնաբանման հնարավորություն. «Ի՞նչ է նշանակում, որ վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել նաև այն անձը, ով իր մեղավոր հակաիրավական վարքագծով չի կատարել զանցանքը»: Այստեղ առաջ է գալիս որոշակի հակասություն համընդհանուր իրավական սկզբունքի հետ՝ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի, որը, թեև մեր իրավական համակարգում չի հանդիսանում սահմանադրական սկզբունք, սակայն մի շարք միջազգային փաստաթղթերում և մի շարք ժողովրդավարական երկրների իրավական համակարգերում ունի բացառիկ և ելակետային դեր: Բացի այդ, հիշյալ մեջբերման երկրորդ պարբերությունից էլ երևում է քննարկվող սկզբունքների կարևորությունը դրանց հետևանքի տեսանկյունից՝ պատժի նպատակներին հասնելու առումով: Տվյալ դեպքում որպես օրինակ են բերվում պատժի երկու նպատակները՝ վերասոցիալիզացումը կամ հետագա հանցագործություններից հետ պահելը, այսինքն՝ հետագա հանցագործությունների կանխումը, սակայն, կարծում ենք, որ որպես օրինակ տեղին կլինեն նշել պատժի բոլոր նպատակները, այդ թվում՝ սոցիալական արդարության վերականգնումը, որովհետև պրակտիկայում այս սկզբունքների խախտումը կհանգեցնի պատժի յուրաքանչյուր նպատակի իրականացման խնդրի, և սա՝ միայն քրեաիրավական դաշտում հարցը քննարկելիս:

«Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը» վերտառությամբ Սահմանադրության 72-րդ հոդվածը ևս որոշակիորեն փոխկապակցված է

Սահմանադրության 71-րդ հոդվածի հետ: Սակայն նշված հոդվածն ունի քրեաիրավական բնույթ: Այն չպետք է շփոթել Սահմանադրության «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի հետ:

Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

Սահմանադրության 72-րդ հոդվածի առաջին նախադասությունից հետևում է, որ հոդվածի իմաստն ու բովանդակությունը միտված են միայն դեպի քրեաիրավական դաշտ, քանի որ խոսք է գնում հենց հանցագործության մասին: Հանցագործությունն էլ, իր հերթին, հանդիսանում է մեղքով դրսևորված արարք, ի թիվս մեղքով դրսևորված այլ արարքների, որոնք հանցագործություն չեն համարվում: Հետևապես մեղքի սկզբունքը սերտորեն փոխկապակցված է նաև սահմանադրական այս հոդվածի հետ:

Հոդվածի երկրորդ նախադասությամբ նշված «պատիժ» հասկացությունը հանդիսանում է բացառապես քրեական օրենքով նախատեսված արարք թույլ տալու արդյունքում առաջացող հետևանք, որը բխում է հոդվածի առաջին նախադասությունում տեղ գտած «հանցագործություն» հասկացության ամրագրումից: Հոդվածում ամրագրված է, որ հանցագործության համար չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Իհարկե, նշվածում բացի ավելի ծանր պատիժ նշանակելու արգելքից խոսք չի գնում ավելի թեթև պատիժ նշանակելու արգելքի մասին, քանի որ ավելի թեթև պատիժ ենթադրող օրենքն ունենում է հետադարձ ուժ: Սակայն, թեկուզ միայն ավելի ծանր պատիժ սահմանելու արգելքը որոշակի իմաստով փոխկապակցվում է պատժի համաչափության սկզբունքի հետ, այն է՝ առավելագույն պատժաչափի և պատժատեսակի, որը հանցագործության կատարման պահին համարվել է համաչափ պատիժ թույլ տրված հանցավոր արարքի համար:

Արդյունքում՝ արված վերլուծությունների հիման վրա անհրաժեշտ է գալ այն եզրահանգման, որ Սահմանադրության 71-րդ և 72-րդ հոդվածները՝ թեև միայն մեղքի և պատժի քրեաիրավական դրսևորման տիրություն են, սակայն, այնուամենայն

նիվ, փոխկապակցված են միմյանց հետ:

Հարկ է անդրադառնալ նաև Սահմանադրության «Համաչափության սկզբունքը» վերտառությամբ 78-րդ հոդվածին:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Իհարկե, Սահմանադրության 78-րդ հոդվածի կարգավորումներն առաջին հերթին միտված են մարդու սահմանափակվող հիմնական իրավունքների ու ազատությունների, Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում սահմանափակման համաչափությանը, համարժեքությանը, պիտանելիությանը, անհրաժեշտությանը: Օրինակ՝ սեփականության իրավունքի, գործադուլի իրավունքի, ազատ տեղաշարժման իրավունքի և այլ սահմանափակվող իրավունքների Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում սահմանափակման համաչափությանը:

Սակայն Սահմանադրության 71-րդ հոդվածի համատեքստում մեղքի հետևանքով առաջացած պատժի արդյունքում ևս առաջանում է համաչափության սկզբունքի պահպանման անհրաժեշտություն: Օրինակ՝ հենց Սահմանադրության 40-րդ հոդվածով ամրագրված **ազատ տեղաշարժվելու իրավունքը** սահմանափակվում է հանցագործության կատարման հետևանքով անազատության հետ կապված պատիժ նշանակելիս: Այս դեպքում պետք է նշանակված պատիժը լինի համաչափ կատարված արարքի հետ, ինչն ուղղակիորեն բխում է Սահմանադրության 71-րդ հոդվածից, որպեսզի դրա արդյունքում մարդու սահմանափակվող այլ իրավունքը ևս լինի համաչափ, համարժեք և, այսպես ասած, արդարացված: Հակառակ դեպքում, եթե նշանակված պատիժը լինի ոչ համաչափ, օրինակ՝ եթե անազատության հետ չկապված պատիժ նշանակելու փոխարեն նշանակվի ազատության հետ կապված որևէ պատիժ, ապա ինքըստիներյան կխախտվի նաև անձի ազատ տեղաշարժման սահմանադրական իրավունքը, դրա սահմանափակման համաչափությունը:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ Սահմանադրության 71-րդ հոդվածի խախտումն ինքնին ուղղակիորեն կարող է հանգեցնել Սահմանադրության թե՛ 78-րդ հոդվածի, թե՛ անուղղակի կեր-

պով յուրաքանչյուր սահմանափակվող իրավունքի՝ տվյալ դեպքում օրինակ՝ Սահմանադրության 40-րդ հոդվածի խախտմանը, որտեղ էլ որ ակնհայտ է դառնում սահմանադրական այս հոդվածների սերտ փոխկապակցվածությունը ևս:

Կարծում ենք, որ քննարկվող սկզբունքները անհրաժեշտ է դիտարկել նաև **իրավական որոշակիության սկզբունքի** հետ: Մասնավորապես, այդ կապը ոչ այնքան բովանդակային է, որքան պատճառահետևանքային: Այդ կապի պատճառահետևանքային բնույթը կայանում է նրանում, որ իրավական որոշակիության սկզբունքի խախտումը կամ, այլ կերպ ասած, իրավական անորոշությունը, կարող է հանգեցնել պատժի համաչափության սկզբունքի խախտմանը: Եթե, օրինակ՝ անձի կողմից հանցավոր արարք կատարելու դեպքում օրենսդրի կողմից բավարար չափով որոշակիացված չլինեն այդ արարքի հանրային վտանգավորության աստիճանը, դրա համար նախատեսվող պատիժը կամ պատժաչափը, պատժաչափի վրա ազդող գործոնները և այլն, ապա այդ ամենը կարող է հանգեցնել ոչ համաչափ պատիժ նշանակելուն, ինչն էլ իր հերթին կհանգեցնի պատժի նպատակների ոչ արդյունավետ իրագործմանը:

Դատելով իրավագիտության աղբյուրներից՝ դատական ակտերում (այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներում) և փորձագիտական զեկույցներում արտացոլված մոտեցումներից՝ կարող ենք եզրակացնել, որ իրավական որոշակիության հիմնական երաշխիք է համարվում իրավական նորմերի, դրանցում օգտագործված եզրույթների անհրաժեշտ հստակությունը, մասնավորապես նախապատվությունը տրվում է այնպիսի եզրույթների օգտագործմանը, որոնց իրազեկվածության առնչությամբ գործնականում խնդիրներ չեն ծագում: Ինչ խոսք, սրանք միանգամայն իրավաչափ պահանջներ են, սակայն չպետք է անտեսել, որ գերխնդիրը տվյալ դեպքում ոչ թե իրավական նորմերի հստակությունն է, այլ դրանց իմաստը համարժեք բացահայտելու և դրան համապատասխան իրավակիրառ պրակտիկա ձևավորելու մշակույթը: Այս տեսանկյունից առնվազն իրավաչափ չէ անվերապահորեն, առանց նախապես սահմանված չափանիշների ակնկալել իրավական նորմերի հստակություն, սոսկ օրենսդրական փոփոխությունների միջոցով: Ընդ որում, նշված չափանիշների բացակայությունը իրավական ակտի որոշակիության անհարկի գնահատումը դրանք դարձնում է հեղինդուկ, որի պարագայում միևնույն իրավական նորմը միա-

ժամանակ կարող է գնահատվել ինչպես իրավական որոշակիության սկզբունքին հակասող, այնպես էլ՝ այդ սկզբունքին համահունչ⁶:

Արդյունքում, գալիս ենք այն եզրահանգման, որ մեղքի և պատժի համաչափության սկզբունքները՝ սահմանադրական մյուս սկզբունքների ամբողջության մեջ չունեն մեկուսացած դիրք: Դրանք փոխկապակցված են իրավական տարբեր սկզբունքների, ինչպես նաև մի շարք մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների հետ, և դրանց պահպանումը կամ խախտումն՝ ուղղակի, քե անուղղակի ձևով, իր ազդեցությունն է թողնում այդ սկզբունքների և իրավունքների ու ազատությունների վրա:

Աշխատանքում ներկայացվում է նաև իրավունքի սկզբունքների կատարելագործումը, զարգացումը և սահմանադրական մակարդակում ամրագրումը՝ որպես սկզբունքի նշանակության վրա ազդեցություն ունեցող գործոն:

Կարող ենք արձանագրել նաև, որ իրավական սկզբունքների մեկնաբանությունը հանդիսանում է օգտակար գործիք դրանց իմաստի, բովանդակության և, առհասարակ, նշանակության բացահայտման համար, ինչը ևս հանդիսանում է իրավունքի, իրավական համակարգի զարգացման նախադրյալ:

¹ Տե՛ս, Հարությունյան Գ. Գ., Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, վերահրատարակություն (լրամշակումներով), Եր., 2016, էջ 384, Тропер М. Проблема толкования и теория верховенства Конституции // Сравнительное конституционное образование, 2005, N 4 (53), С.175, Reeadt de J. Contested Constitutions: Constitutional Design, Conflict, and Change in Post-Communist East Central Europe. Enschede: Ipskamp Drukkers, 2009, <http://dare.ubvu.vu.nl/bitstream/1871/18202/5/8594.pdf>, էջ 91:

² Чернов К.А., Принцип равенства как общеправовой принцип российского права: автореф. дис. Казань 2003, С. 14

³ Явич Л.С., Сущность права. Л., 1985, С. 149-150.

⁴ Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, էջ 79:

⁵ Տե՛ս, նույն աշխատության մեջ, էջ 80:

⁶ Գևորգ Դանիելյան, «Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները», Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, էջ 5:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հարությունյան Գ. Գ., Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, վերահրատարակություն (լրամշակումներով), Եր., 2016:
2. Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016:
3. Գևորգ Դանիելյան, «Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները», Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն:
4. Тропер М., Проблема толкования и теория верховенства Конституции // “Сравнительное конституционное образование”, 2005, N 4 (53), С. 175.
5. Чернов К.А., Принцип равенства как общеправовой принцип российского права: автореф. дис. Казань 2003,
6. Явич Л.С., Сущность права. Л., 1985.
7. Reeadt de J. Contested Constitutions: Constitutional Design, Conflict, and Change in Post-Communist East Central Europe. Enschede: Ipskamp Drukkers, 2009.
8. <http://dare.ubvu.vu.nl/bitstream/1871/18202/5/8594.pdf>:

Վիրաբ Վարդանյան

Ведущий специалист отдела обеспечения деятельности генеральной ассамблеи судей и комиссий управления обеспечения деятельности генеральной ассамблеи судей и аппаратов судов Судебного департамента- Аппарат Высшего судебного совета, аспирант кафедры юриспруденции академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Конституционное и правовое содержание и значение конституционных принципов соразмерности вины и наказания, отношение между другими конституционно-правовыми принципами

В работе делается попытка максимально раскрыть смысл и значение принципов соразмерности вины и наказания, подчеркнуть закрепление правового принципа на конституционном уровне как обстоятельство, которое оказывает определенное влияние на его значимость.

В работе делается попытка подчеркнуть интерпретацию правового принципа как полезного инструмента для раскрытия смысла и значимости принципа.

Была также предпринята попытка обнаружить связь между конституционными принципами соразмерности вины и наказания и взаимосвязь с другими конституционными и правовыми принципами в соответствии с новыми конституционными положениями.

Ключевые слова - принцип права, конституционный принцип, смысл и содержание права, значение права, комментарий, правовая система.

Virab Vardanyan

Office to the Supreme Judicial Council: Leading Specialist of the Department for Ensuring the Activities of the General Assembly of Judges and the Commission for the Department of Ensuring the Activities of the General Assembly of Judges and Courts ' Judicial Department, PhD student of the chair of law of the Public Administration Academy of the Republic of Armenia

SUMMARY

The constitutional and legal content and significance of the constitutional principles of the proportionality of guilt and punishment, the relationship with other constitutional and legal principles

The work tries to reveal as much as possible the meaning and significance of the principles of the proportionality of guilt and punishment, to highlight the enshrinement of the legal principle at the constitutional level as a circumstance that has a certain impact on its significance.

The paper also attempts to highlight the interpretation of the legal principle as a useful tool for discovering the meaning and significance of the principle.

An attempt was also made to reveal the connection between the constitutional principles of the proportionality of guilt and punishment, and the relationship with other constitutional and legal principles under the new constitutional regulations.

Key words - principle of law, constitutional principle, meaning and content of the principle, significance of the principle, interpretation, legal system.

Բնագիրը ներկայացվել է 09.09.2020թ.

Ընդունվել է տպագրության 17.09.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա. Խաչատրյանը

ՆԱԽՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Հայ-Ռուսական համալսարանի քրեական իրավունքի
ամբիոնի և քրեական դատավարության ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի
քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ

**ՊՐՈԲԱՅԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԵՐԵՎ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

Հոգվածում հիմնավորվում է նոր քրեական վերականգնողական արդարադատության ներդրման անհրաժեշտությունը, ներկայացվում են պրոբացիայի ծառայության խնդիրներն իրագործելու ճանապարհին առկա մի շարք տեսական և գործնական խնդիրներ, ուսումնասիրվում են «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում առկա բացթողումները, առաջարկվում է վերը նշված օրենքի լիարժեք կիրառման համար մի շարք օրենսդրական փոփոխություններ կատարել քրեական, քրեադատավարական, քրեակատարողական օրենսգրքերում:

Հիմնաբառեր- պրոբացիոն ծառայություն, վերականգնողական արդարադատություն, այլընտրանքային պատիժներ, ընթացակարգ, հաշտեցում, մեղիացիա:

Ինչպես նշվել է «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի նախագծում, վերջին տասնամյակում, մի շարք երկրներում հանցագործությունների թվաքանակի աճի միտումը, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածությունն ու հասարակության անվտանգության երաշխիքների նվազումը հանգեցրել են արդարադատության համակարգի նկատմամբ դժգոհության, որը նպաստում է արդարադատության նկատմամբ վստահության նվազմանը:

Զարգացած և զարգացող քրեադատավարական հասարակական հարաբերություններն առաջ են քաշում դատաիրավական համակարգի արդիականացման պահանջը՝ համապատասխանեցնելով այն առկա հասարակական պահանջմունքներին, միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ապահովմանը¹:

Այս ամենը ազդակ է հանդիսացել նոր քրեական վերականգնողական արդարադատության ներդրման համար, որն, ի տարբերություն ՀՀ-ում գործող քրեադատավարական համակարգին, առավել ճկուն հակազդում է հանցագործությանը և նպաստում է արդարադատության համակարգի նկատմամբ վստահության աճին:

Վերականգնողական արդարադատության միջոցով մեծանում է հասարակության դերը՝ որպես

հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարի կարևոր գործոն²: Եթե նախկինում իրավակիրառ շրջանակի մոտ կարծրացած էր այն համոզմունքը, որ անձը մեծապես ուղղվում է ազատազրկման հետ կապված պատժի կամ խափանման միջոցի առկայության պայմաններում, ապա պրակտիկ վերլուծությունները ցույց են տալիս, որ, իրականում և մեծամասամբ, ոչ բոլոր դեպքերում է ազատազրկումը միջոց հանդիսանում անձի ուղղման և վերասոցիալականացման հարցում: Շատ դեպքերում այն նաև հակառակ ազդեցությունն է ունենում և կրկնահանցագործությունների աճի խթան հանդիսանում³:

Այս առումով՝ պրոբացիոն ծառայության հիմքում ընկած է այն գաղափարը, որ պատժի նպատակներին կարելի է հասնել հանցագործությունների հետ կապված խնդիրները լուծելու և տուժողին պատճառված վնասը վերականգնելու միջոցով⁴, այլ ոչ թե զուտ պատժողական մոտեցումներով⁵:

Վերականգնողական արդարադատության դեպքում հաշվի են առնվում տուժողի և հանցագործություն կատարած անձի կարիքները, ինչպես նաև՝ հանցագործություն կատարած անձին ազատազրկման վայրում պահելու փոխարեն պատժի կատարման և անձի վերասոցիալականացման գործընթացում ներգրավվում է համայնքը: Տուժողներն ավելի ակտիվ դերակատարություն են ունենում ողջ գործընթացում: Այսպիսով, վերականգնո-

դական արդարադատությունն ընդգրկում է և՛ տուժողին, և՛ հանցագործություն կատարած անձին և շեշտը դնում է նրանց կարիքների վրա: Բացի այդ, այն նաև նախատեսում է աջակցության միջոցներ հանցագործություն կատարած անձանց համար՝ նպատակ ունենալով նվազեցնել կրկնահանցագործության հավանականությունը՝ ինչն, ակնհայտորեն, դրական և ոգևորիչ մոտեցում է⁵:

Այս առումով, պրոբացիայի ծառայության խնդիրներն իրագործելու ճանապարհին առկա են մի շարք տեսական և գործնական խնդիրներ, որոնցից մի քանիսը ցանկանում ենք թվել: Ինչպես հայտնի է, ՀՀ-ում ներդրված պրոբացիոն ծառայությունն, ըստ «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի, իր գործառնություններն իրականացնում է 4 փուլերով՝

1. Մինչդատական վարույթի ընթացքում՝ զեկույցի պատրաստման և կալանավորման այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ապահովման առումով:

2. Դատաքննության փուլում՝ մինչև պատժի նշանակելը զեկույցի տրամադրման և մեղիացիայի առումով:

3. Պենիտենցիար փուլում՝ այլընտրանքային պատիժների կատարման, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի կազմակերպման և իրականացման, վերականգնողական աշխատանքների իրականացման, պատժից ազատված անձի վարքի վերահսկողության, պատիժը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության, ազատագրված տեսքով պատժի կրման ընթացքում պատժի անհատական պլանավորմանն աջակցության առումով:

4. Հետպենիտենցիար փուլում՝ դատվածությունը հանելու առնչությամբ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմնին զեկույցի ներկայացման առումով⁶:

Անդրադառնալով նշված փուլերից յուրաքանչյուրի ընթացքում առաջացող խնդիրներին՝ սկսենք մինչդատական վարույթից: Նախ հպանցիկ հիշատակելով ներկայիս քրեական դատավարության օրենսգրքով ապահովվող ընթացակարգը՝ անհրաժեշտ է փաստել, որ գործող քրեադատավարական օրենսգրքով կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու և միջնորդության քննարկման կարգը նախատեսող 137-րդ և 285-րդ հոդվածներում որևէ հիշատակում չկա պրոբացիոն ծառայության կողմից ներկայացվող զեկույցների վերաբերյալ⁷, իսկ այլընտրանքային խափանման միջոցներ հանդիսացող գրավի կիրառման և հսկողություն իրականացնելու մասին ընթացակարգերը, մեղադրյալին կամ ամբաստանյալին պրոբացիոն ծառա-

յությանը հանձնելու մասին իրավական հիմքերն են, որոնք տեսականորեն բացակայում են:

Հստակեցված չէ նաև պրոբացիոն ծառայության աշխատակցի կողմից բնութագրական և գնահատողական զեկույցների տրման ընթացակարգը: Ակամայից հարց է առաջանում, թե ինչպե՞ս կարող է ծառայության աշխատակիցը կալանքի քննարկման ընթացքում արժանահավատ, լրիվ և օբյեկտիվ բնութագրական կամ գնահատողական զեկույց տրամադրել դատարանին, որն էլ ինքնին ելակետային տվյալ կարող է հանդիսանալ անձին ազատությունից զրկելու հարցը որոշելիս:

Բացակայում են նաև դրույթները նախաքննական մարմինների հետ համագործակցության վերաբերյալ, որոնք առավելապես կարող են նպաստել ինչպես հանցագործությունների բացահայտմանը, այնպես էլ մեղադրյալի կամ ամբաստանյալի պատշաճ վարքագծի ապահովմանն ու պրոբացիայի հետագա փուլերում մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Դա կարող է նաև նպաստել անազատության հետ չկապված խափանման միջոցների կիրառման արդյունավետության բարձրացմանը և գրավը որպես առանձին խափանման միջոց կիրառելու դեպքում նաև գրավի սահմանաչափի որոշմանը, իսկ քննությունից կամ քրեական պատասխանությունից խուսափող մեղադրյալների կամ ամբաստանյալների դեպքում նաև՝ ժամանակին նշված հանգամանքի հայտնաբերմանն ու մեղադրյալի փախուստը կամ քննությանը խոչընդոտելու կանխմանը:

Վերոնշյալ խնդիրները լուծված չեն նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում: Նոր օրենսգրքի նախագծով ավելացել են այլընտրանքային խափանման միջոցների տեսակները, որոնցից պրոբացիոն ծառայության աշխատակիցների կողմից հիմնականում նախատեսվում են իրականացնել տնային կալանքի ու վարչական հսկողության ապահովումը, սակայն սրանով աշխատակիցների գործառնությունները սահմանափակված չեն:

Պրոբացիայի ծառայությունն ապահովում է նաև այլ այլընտրանքային խափանման միջոցների կատարումը, եթե դա նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով, որոնք են՝ գրավը, պաշտոնավարման կասեցումը, բացակայելու արգելքը, երաշխավորությունը և դաստիարակչական հսկողությունը: Սակայն վարույթն իրականացնող նախաքննական մարմնի կամ դատարանի կողմից նշված գործառնությունների իրականացման քրեադա-

տավարական ընթացակարգային նորմեր կրկին նախատեսված չեն, ինչն ուղղակիորեն արգելք է ստեղծելու պրոբացիայի ծառայություններից պատշաճ օգտվելու համար:

Այս առումով, անհրաժեշտ է փոփոխություններ իրականացնել ներկայումս գործող կամ դեռևս չընդունված քրեական դատավարության օրենսգրքում և նախատեսել պրոբացիայի ծառայությանը դիմելու, ծառայության աշխատակիցների կողմից կազմված զեկույցների ստացման և դրանց կիրառման ընթացակարգը:

Գործնականում, խնդիրներ կարող են առաջանալ նաև էլեկտրոնային հսկողության սարքավորումների կիրառման հետ կապված: Մասնավորապես, անընդունելի է այն տեսակետը, որ նշված գործիքակազմից կարող են օգտվել ֆինանսապես ապահովված ենթադրյալ հանցանք կատարած անձինք, որը դեմ է պրոբացիայի ծառայության սկզբունքներին և հանցավորների վերասոցիալականացման համընդանուր գաղափարի իրականացմանը⁸: Կարծում ենք, որ նման խտրականություն չպետք է լինի և էլեկտրոնային հսկողության ֆինանսավորումը պետք է իրականացվի պետության կողմից: Նաև իրավական առումով՝ հստակեցված չէ էլեկտրոնային հսկողության սարքերի վնասման պայմաններում նախատեսվող պատասխանատվության հարցը: Նման դեպքերում, նույնիսկ գույքի դիտավորյալ վնասման կամ ոչնչացման դեպքում պետք է նախատեսվի վարչական պատասխանատվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը նշված սարքը վնասել է՝ նոր հանցագործություն կատարելու նպատակով: Նման պայմաններում պետք է քրեական դատավարության օրենսգրքով ամրագրվի պրոբացիոն ծառայության կողմից վարույթն իրականացնող մարմնին այդ մասին տեղյակ պահելու և այդ հիմքով անձի նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոփոխելու ընթացակարգը:

Բացի այդ, նման իրավիճակներին հակազդելու համար անհրաժեշտ է փոփոխություններ իրականացնել նաև քրեական օրենսգրքում և 185-րդ հոդվածի 2-րդ մասում որպես որակյալ հատկանիշ ավելացնել. «Արարքը, որը կատարվել է ենթադրյալ հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի կողմից փախուստի դիմելու, կամ քննությանը խոչընդոտելու, կամ քննությունից խուսափելու նպատակով, դրսևորվել է իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցից ազատվելու իրականացումն ապահովելով, այն է՝ էլեկտրոնային հսկողության սարքի վնասումը կամ ոչնչացումը»:

Դատաքննության փուլում խնդիրները նկատելի են մեղիացիայի շրջանում: Ինչպես գործող, այնպես էլ ընդունման առաջարկվող ՀՀ քրեական դատավարության նախագծով, որևէ կերպ ամրագրված չեն մեղիացիայի իրականացման ընթացակարգերը: Մասնավորապես, նշված չէ, թե դատարանն ինչպիսի հիմքերի առկայության դեպքում կարող է դիմել մեղիացիայի իրականացման համար. դա իրականացվում է կողմերից մեկի միջնորդությամբ, թե՞ երկուսի համատեղ համաձայնության առկայության կամ դատարանի սեփական նախաձեռնության հիման վրա: Անընդունելի է նաև այն տեսակետը, որ գոհի և ենթադրյալ հանցագործություն կատարած անձի հաշտեցման գործընթացն իրականացվում է դատաքննության փուլում, մինչդեռ այն հնարավոր է իրականացնել նաև նախաքննության փուլում: Հիշյալ ընթացակարգի նախատեսումը վարույթի ավելի վաղ փուլում կարող է ապահովել նախնական քննություն իրականացնող մարմինների ծանրաբեռնվածության նվազմանն ու առկա աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, ինչպես նաև տուժողի խախտված իրավունքների ու կրած վնասների առավել արագ վերականգնմանն ու հատուցմանը, ինչն, ակնհայտորեն, առավել նախընտրելի է ու հանրօգուտ:

Առաջարկում ենք նշված ընթացակարգը ևս նախատեսել քրեական դատավարության օրենսգրքով՝ հստակեցնելով մեղիացիայի իրականացման հիմքերն ու պայմանները, իսկ «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի շրջանակում նշված գործառնություն իրականացնելու կարգը նախատեսելիս առանձնահատուկ վերաբերմունք դրսևորել և յուրահատուկ ընթացակարգ նախատեսել ընտանեկան բռնության գործերով կողմերի հաշտեցմանը՝ հստակեցնելով հաշտեցման գործընթացում ինչպիսի հարցերի քննարկմանը կարող են մասնակցել գոհի հնարավոր ներկայացուցիչը և մեղադրյալի կամ ամբաստանյալի պաշտպանը, ինչը՝ հոգեբանական առումով, կարող է դրական անդրադարձ ունենալ:

Պենիտենցիար փուլում խնդիր առաջանում է այլընտրանքային պատիժների կատարման, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի կազմակերպման և իրականացման ընթացքում:

ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծում հստակ արձանագրված է այլընտրանքային պատիժների ցանկն ու կատարման ընթացակարգը, նշված են դրանց կրման ընթացքում շահառուի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև՝ պատժի կրումից խուսափելու կամ

հրաժարվելու դեպքում պրոբացիայի ծառայության մարմնի գործողությունները, համաձայն որի՝ տուգանքը մուծելուց, հանրային աշխատանքները կատարելուց, ազատության սահմանափակման, պատժի կրումից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում պրոբացիայի ծառայության մարմնին արձանագրում է նշված փաստն ու հիմնավոր միջնորդություն ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը ազատագրված կամ ազատագրված փոխարինելու համար:

Թեև նշված պատիժների չկատարման դեպքում առաջացող իրավական հետևանքները հստակ նախատեսված են ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծով, սակայն, քանի որ այլընտրանքային պատիժների փոխարինումն իրականացվում է միայն ՀՀ քրեական դատավարության օրենսդրական նորմերի համաձայն, որոնք նախատեսում են պետական մարմնի աշխատակիցների գործառնությունները, այստեղ ևս առկա է օրենսդրական բաց: ՀՀ քրեական դատավարության գործող և նոր օրենսգրքի նախագծով չկա որևէ նորմ, որը կնախատեսի ՀՀ պրոբացիայի ծառայության մարմնի կողմից իրավասու դատարան միջնորդության ներկայացման կարգն ու դատարանի կողմից հիշյալ մարմնից ներկայացված միջնորդության հիմքով պատժի փոխարինման ընթացակարգը:

Նույն խնդիրն առկա է նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում՝ փորձաշրջանի կազմակերպման և իրականացման ընթացքում, որի կատարումն ապահովող կարգն ու պրոբացիայի ծառայության աշխատակցի իրավունքներն ու պարտականությունները համապարփակ արձանագրված են «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածներով, որտեղ 25-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով կարգավորված է պրոբացիայի ծառայության շահառուի կողմից դատարանի որոշմամբ սահմանված պարտականությունների կատարումից խուսափելու կամ անվտանգության միջոցների պայմանների խախտման դեպքում պրոբացիայի ծառայության մարմնի կողմից դատարան դիմելու ընթացակարգը⁹, սակայն այս առումով ևս չկա որևէ քրեադատավարական նորմ, որով մարմինը կարող է ղեկավարվել իր միջնորդությունը ներկայացնելուց և չկա հիմք, որով իրավասու դատարան կարող էր քննության առնել ներկայացված միջնորդությունը:

Առաջարկում ենք փոփոխություն իրականացնել գործող կամ ընդունման նախատեսվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում. պրոբա-

ցիայի ծառայության մարմինը ներառել որպես դատավարության մասնակից՝ նշված մարմնի կողմից ներկայացվող միջնորդությունների ցանկն ու ընթացակարգը նախատեսելու և այդ միջնորդությունների քննարկման կարգը նախատեսելու նպատակով: Կարծում ենք, որ, գործնականում, պրոբացիոն ծառայության համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն և խնդիրներ կարող է առաջացնել նաև այն հանգամանքը, որ ըստ գործող օրենսդրական նորմերի՝ այլընտրանքային պատժի կրման կամ փորձաշրջանի կանոնները խախտած դատապարտյալի պատժի փոխարինման վերաբերյալ միջնորդությունները պայմանավորված են դատապարտյալի պատժի կրման փոխարինման մասին միջնորդություններով, դրանք ներկայացվում են հենց պրոբացիոն ծառայության մարմնի կողմից, ինչից ենթադրվում է, որ մարմնի աշխատակիցներն էլ պետք է դատարանում ներկայացնեն իրենց միջնորդությունը և ապացուցեն դրա հիմնավոր լինելը: Մինչդեռ, այս գործառնությունը որոշակիորեն դուրս է պրոբացիայի ծառայության խնդիրների կատարումից: Այս առումով կարելի է քննարկել հիշյալ միջնորդությունները՝ ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանման ծառայողների կողմից դատարան ներկայացնելու հարցը, թե ինչպիսի՞ պայմաններում միջնորդության քննարկմանը կներկայանա այն դատարան ուղարկված դատախազը և դատարանում կներկայացնի ազատագրված կիրառման անհրաժեշտությունն ու հիմքերը:

¹ Տե՛ս, ՀՀ կառավարության՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին 2019 թվականի հոկտեմբերի 10-ի որոշում, ՀՀՊՏ 2019.10.25/74(1527), էջ.2 :

² Տե՛ս, Аветисян С.С., Конституционные предпосылки и условия обеспечения прав пострадавших от преступления, “Конституционное Правосудие”, 2011, #1(11)2001.стр.23.

³ Տե՛ս, Рахмаев Э.С., Службе пробации быть // Человек: преступление и наказание. 2016 г.стр.16.

⁴ Տե՛ս, Тейван-Трейновский Я.С., Пробация как социально – правовое воздействие на личность с противоправным поведением. КГЮА. Вестник. N 3, 2016. стр.49.

⁵ Տե՛ս, Садыков А.У., Перспективы института пробации в современной России // Общество и право. 2013г. стр.57.

⁶ Տե՛ս, «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենք (04.06.2016), ՀՕ – 48 - Ն:

⁷ Տե՛ս, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (01.07.1998), ՀՀՊՏ 1998.09.21/22(55):

⁸ Տե՛ս, Teivans-Treinovskis J., Management problems re-socialisation and educational process in the places of imprisonment. Regional review. Reserch papers / Jermolajeva E., ed. Nr.6 (2010). Daugavpils: Daugavpils University Academic Press: “Saule”, 2010.p.93.

⁹ Տե՛ս, «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենք (04.06.2016), ՀՕ – 48 - Ն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ քրեական օրենսգիրք (18.04.2003), ՀՀՊՏ 2003.05.02/25(260):

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (01.07.1998), ՀՀՊՏ 1998.09.21/22(55):

3. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք (10.02.2005), ՀՕ – 60 Ն:

4. ՀՀ «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենք (04.06.2016), ՀՕ – 48 - Ն:

5. ՀՀ կառավարության՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին 2019 թվականի հոկտեմբերի 10-ի որոշում, ՀՀՊՏ 2019.10.25/74(1527):

6. Аветисян С.С., Конституционные предпосылки и условия обеспечения прав пострадавших от преступления, “Конституционное Правосудие”, 2011, #1(11)2001.

7. Рахмаев Э.С., Службе пробации быть // Человек: преступление и наказание. 2016 г.

8. Тейван-Трейновский Я.С., Пробация как социально – правовое воздействие на личность с противоправным поведением. КГЮА. Вестник.N 3, 2016.

9. Садыков А.У., Перспективы института пробации в современной России // Общество и право. 2013 г.

10. Нестеров А.Ю., Перспективы развития института службы пробации в РФ // Власть. 2018 г.

11. Горбань Д.В., Досудебная пробация как стадия процесса ресоциализации // Уголовно-исполнительное право. 2017 г.

12. Teivans-Treinovskis J., Management problems re-socialisation and educational process in the places of imprisonment. Regional review. Reserch papers / Jermolajeva E., ed. Nr.6 (2010). Daugavpils: Daugavpils University Academic Press: “Saule”, 2010.

Наира Зограбян

Зав. кафедрой уголовного права и уголовно-процессуального
права Российско-Армянского университета,
кандидат юридических наук, доцент

Карапет Амбарцумян

Старший следователь по особо важным делам главного
управления СОД Следственного Комитета

РЕЗЮМЕ

Функции и очевидные вызовы службы пробации

В статье обосновывается необходимость внедрения восстановительного правосудия, представлены ряд проблем теоретического и практического характера, затрудняющие реализацию задач службы пробации. Проанализировав существующие упущения в законе РА «О пробации», предлагается внести ряд законодательных изменений в уголовный, уголовно-процессуальный, пенитенциарный кодексы для полного применения вышеупомянутого закона.

Ключевые слова: служба пробации, восстановительное правосудие, альтернативные наказания, примирение, медиация.

Naira Zohrabyan

Chair of criminal law and criminal procedure law Institute
of Law and Politics Russian-Armenian University
PhD in Law, Associate Professor

Karapet Hambardzumyan

Senior Investigator of Particularly Important Cases
Investigative Committee of the RA

SUMMARY

The Functions of the Probation Service and Obvious Challenges

The article argues the necessity to establish new criminal restorative justice, presents a number of theoretical and practical challenges faced by the Probation Service while fulfilling its tasks, analyzes existing gaps in the Law on Probation, proposes a number of amendments to the Criminal, Criminal Procedure and Penitentiary Codes aimed at ensuring fully-fledged implementation of the Law on Probation.

Key words: probation service, restorative justice, alternative sanctions, procedure, mediation.

Բնագիրը ներկայացվել է 07.09.2020թ.

Ընդունվել է տպագրության 09.09.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ս.Ծաղիկյանը

ՄԱՐԹԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության
Մալաթիայի բաժնի անչափահասների գործերով և
ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի պետ,
ոստիկանության փոխգնդապետ,
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և
քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի
և քրեական դատավարության ամբիոնի հայցորդ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԵՐԻ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Հոդվածում քննարկվում են ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնում (այսուհետ՝ Մալաթիայի բաժին) 2019 թվականի հունվարի 1-ից առ 2020 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ընտանիքում արձանագրված բռնությունների դետերմինանտները:

Հեղինակի կողմից ներկայացվում են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման ընթացքում առաջ եկած խնդիրները և դրանց վերլուծության հիման վրա համապատասխան օրենսդրական առաջարկությունների մշակումը:

Հիմնադրադր՝ ընտանիք, բռնություն, կանխարգելում, պատճառ, պայման, պաշտպանական միջոց, կանխարգելիչ հաշվառում:

Հանցավորության կանխարգելման արդյունավետությունը կախված է հանցավորության պատճառների և պայմանների արդյունավետ ուսումնասիրությունից: Դետերմինացիայի բոլոր տեսակներից առավել կարևոր է պատճառների և պայմանների կատեգորիան: Հանցավորության պատճառներն ու պայմանները սոցիալ-բացասական երևույթների համակարգ է, որը դետերմինացնում է հանցավորությունը՝ որպես իր հետևանք:

Պատճառները բացասական սոցիալական երևույթներն են՝ պայմանավորված հասարակության գործունեության օրինաչափություններով: Դրանք առաջացնում են հանցավորությունը՝ որպես իրենց հետևանք: Պայմանները ռեալ իրականության այն երևույթներն են, որոնք ինքնըստինքյան հանցագործություն չեն ծնում, բայց կարող են նպաստել, որ անձի կողմից հանցագործություն կատարելու ցանկություն առաջանա:

Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրության են ենթակա 2019 թվականի հունվարի 1-ից առ 2020 թվականի հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածում ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից սպասարկվող վարչական տարածքում գրանցված ընտանիքում բռնության դեպքերի դետերմինանտները:

Այսպես՝ նշված ժամանակահատվածում ըն-

տանիքում բռնության դեպքերի աճ է գրանցվել, մասնավորապես՝ 2019 թվականի 9 ամիսների ընթացքում ոստիկանության Մալաթիայի բաժնում արձանագրվել է ընտանիքում բռնության 41 դեպք, 2020 թվականի առաջին կիսամյակում արձանագրված ընտանիքում բռնության դեպքերի թիվը 51-ն է:

Պետք է նշել, որ արձանագրված մի շարք դեպքերում հանցագործությունների ուսումնասիրմամբ ակնհայտ է ընտանիքում բռնության ենթարկված անձանց դեպքում վարքագիծը, իհարկե, խոսքը մեծապես վերաբերում է ամուսինների միջև բռնության դեպքերին, ընդ որում՝ խոսքը միայն ֆիզիկական բռնության մասին չէ: «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտանիքում բռնության տեսակները հինգն են՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական, տնտեսական, անտեսում:

Դեպքում վարքագիծը հասարակությունում ընդունված իրավական, բարոյական նորմերից ու կանոններից շեղված վարքագիծն է՝ պայմանավորված ինչպես անձի անձնային հատկանիշներով, այնպես էլ նրա դաստիարակության և զարգացման գործընթացում սոցիալական, ընտանեկան, կրթա-

կան գործունեություն, ընկերական, շփման, զբաղվածության ոլորտով:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն եզրահանգմանը, որ ընտանիքում բռնության դեպքերը, ըստ դրանց պատճառների և նպաստող պայմանների, պայմանականորեն կարելի է բաժանել չորս խմբի՝

- Առաջին խմբի հանցագործությունների պատճառը կրում է սոցիալ-տնտեսական բնույթ: Պետք է նկատի ունենալ, որ բռնարարների հանցավոր վարքագիծը հիմնականում պոլիմոտիվացված է, այսինքն՝ միաժամանակ կարող են առկա լինել նյութական ծանր իրավիճակի, գործազրկության, նաև ինքնահաստատման կամ այլ շարժառիթները:

- Երկրորդ խմբի հանցագործությունների պատճառը ամուսնալուծության փուլում գտնվող ամուսինների տարաձայնություններն են՝ կապված դատարանների գերծանրաբեռնվածության արդյունքում տարիներով ձգվող դատաքննության հետ, ինպես նաև այդ ընթացքում՝ երեխաների խնամքի և համատեղ ամուսնական կյանքում ձեռքբերված գույքի բաժանման չլուծված հարցերի հետ:

- Երրորդ խմբի հանցագործությունների պատճառը՝ ամուսնական սեռական կյանքում հոգեբանական և ֆիզիոլոգիական բարդություններն են:

- Չորրորդ խմբի հանցագործությունների պատճառը՝ ամուսիններից մեկի հոգեկան խանգարումներն են՝ ալկոհոլաճնդությունն ու թմրամոլությունը:

Ընտանիքում բռնության արձանագրված դեպքերի վերլուծությունից ակնհայտ է, որ վերջին ժամանակաշրջանում մեր հասարակությունում նկատվում է ընտանիքի անդամների միջև բռնի, ագրեսիվ մոտիվացիայով վարքագծի տարածում, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է նաև աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման դեպքերով և այդ վարակն Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ որպես պանդեմիա որակելու հանգամանքով, որն էլ հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 16.03.2020թ-ի թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու համար: Վերջին փաստարկի վկայությունն են նաև ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից սպասարկվող վարչական տարածքում 2019 թվականի 6 ամիսների և 2020 թվականի նույն ժամանակահատվածում ընտանիքում բռնու-

թյան դեպքերի վիճակագրությունը: Այն, որ բռնությունը ընտանիքում առավել տարածում է ստանում, ակնառու է, առաջին հերթին, ընտանիքի անդամների կողմից կատարվող անձի կյանքի և առողջության դեմ հանցագործությունների համամասնությունների համեմատության արդյունքում:

Բացի այդ, կատարված ուսումնասիրմամբ ակնհայտ է, որ մի շարք դեպքերում, ենթադրաբար ընտանիքում, բռնության ենթարկված անձինք ոստիկանությունում իրենց նկատմամբ ընտանիքի մյուս անդամի կողմից ծանր հանցագործություն կատարելու մասին հաղորդում են տալիս, սակայն նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվում է, որ հաղորդմամբ ներկայացվել են տեղեկություններ հանցագործության կատարման մասին, գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է:

Այսպես, Վ.Շ.-ն ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում էր տվել իր նկատմամբ ամուսնու՝ Մ.Մ.-ի, կողմից ծանր հանցագործության կատարման մասին, այն է՝ իր կամքին հակառակ սեռական հարաբերություն է ունեցել իր հետ, որի համար քրեական պատասխանատվություն է նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածով: Նախապատրաստված նյութերով հարուցված քրեական գործը ուղարկվել էր վարչական շրջանի քննչական բաժին՝ նախաքննություն կատարելու համար: Նախաքննությամբ պարզվել էր, որ Վ.Շ.-ն կեղծ տեղեկատվություն էր տրամադրել իրավապահ մարմիններին, ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված քրեական գործը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կարճվել էր՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ, միաժամանակ քրեական հետապնդում էր իրականացվել Վ.Շ.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի հատկանիշներով:

Կասկածից վեր է, որ սուտ մատնությունը ունի հանրային վտանգավորության բարձր աստիճան: Ավելին, նման արարքները ոտնձգություն են իրավապահ մարմինների նորմալ գործունեության, մարդկանց իրավունքների և օրինական շահերի դեմ, ինչով էլ պայմանավորվել է սուտ մատնության քրեականացումը:

Նախագգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն: Նախագգուշա-

ցում կիրառելու մասին որոշումը ներառում է բռնության շարունակման կամ կրկնման դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին իրազեկում:

Նախագգուշացումը կիրառվում է դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորին չափ սեղմ ժամկետում⁴:

Կիրառված պաշտպանական միջոցի հիման վրա ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարցում է կատարում՝ ընտանիքում բռնություն գործադրած անձի հաշվառված լինելու հանգամանքը պարզելու նպատակով, և հարցման պատասխանը ստանալուց երկու աշխատանքային օրվա ընթացքում կազմում կանխարգելիչ հաշվառման քարտ⁵:

Քննարկվող դեպքի շրջանակներում ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազորությունները իրացնելով, անհապաղ նույն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված պաշտպանական միջոց՝ նախագգուշացում էին կիրառել ենթադրաբար ընտանիքում սեռական բռնություն գործադրած անձ՝ Մ.Մ.-ի նկատմամբ, որից հետո վերջինիս նկատմամբ ընտանիքում բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձի պաշտպանության նպատակով՝ կանխարգելիչ հաշվառման քարտ կազմել՝ համապատասխան կանխարգելիչ աշխատանքներ իրականացնելու համար:

Ցավով պետք է արձանագրել, որ, գործնականում, մյուս դեպքերը սակավաթիվ չեն:

Սույն օրինակի և մի շարք այլ դեպքերի ուսումնասիրմամբ, ակնհայտ է, որ անհրաժեշտ է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Տվյալ դեպքում խոսքը մեծապես վերաբերում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված՝ պաշտպանական միջոցի կիրառման հիման վրա կանխարգելիչ հաշվառում իրականացնելուն: Կարծում ենք, ենթադրաբար բռնություն գործադրած անձի իրավունքների և օրինական շա-

հերի պաշտպանության նկատառումներից ելնելով, անհրաժեշտ է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ կերպ. «Ընտանիքում բռնություն գործադրած անձը, որի նկատմամբ կայացվել է անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ինչպես նաև ընտանիքում բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունեցող չափահաս անձը ոստիկանության կողմից վերցվում են կանխարգելիչ հաշվառման: Նախագգուշացման որոշման հիման վրա կանխարգելիչ հաշվառման է վերցվում այն անձը, ով նախագգուշացման որոշում կայացնելուց հետո մեկ տարվա ընթացքում կատարել է բռնի արարք միևնույն անձի նկատմամբ:»:

Բացի վերոհիշյալ ներկայացրած օրինակից, կանխարգելիչ հաշվառման շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքները վկայում են այն մասին, որ ընտանիքում բռնության դեպքը առաջին անգամ հայտնաբերելու դեպքում, եթե կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն՝ մի շարք դեպքերում ոստիկանության կողմից կանխարգելիչ հաշվառումը չի ծառայում իր նպատակին, ավելին՝ նպաստում է ընտանիքում բռնության կրկնմանն ու շարունակությանը: Իհարկե, մեր դիրքորոշումը արդարացի է՝ ոչ բոլոր դեպքերի կիրառմամբ:

Որպես այլընտրանքային լուծում առաջարկվում է նաև նախագգուշացում կիրառելուց հետո կանխարգելիչ հաշվառումը իրականացնել ոստիկանությունում ընտանիքում բռնության դեպքի կապակցությամբ նախապատրաստված նյութերով կայացված որոշման հիման վրա: Մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում 2020 թվականի առաջին կիսամյակում արձանագրված 51 դեպքերով նախապատրաստված նյութերով հարուցվել է թվով 19 քրեական գործ, համապատասխանաբար՝ նախապատրաստված թվով 32 նյութերով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված պաշտպանական միջոցի կիրառման հիման վրա կանխարգելիչ հաշվառում իրականացնել միայն այն դեպքերում, երբ ոստիկանությունում

ընտանիքում բռնության դեպքով նախապատ-
րաստված նյութերով հարուցվել է քրեական գործ:
Համապատասխանաբար, անհրաժեշտ է համա-
պատասխան փոփոխություններ կատարել նաև ՀՀ
նստիկանության պետի 17.07.2019թ-ի թիվ 15-Լ
հրամանում:

Չնայած այն հանգամանքին, որ ընտանիքում
բռնության դեպքերի դինամիկան նվազման միտում
չունի, առաջարկվող օրենսդրական լուծումները
կնպաստեն պրակտիկայում առաջացած մի շարք
ընթացակարգային խնդիրների կարգավորմանը:

¹ Лафицкая Н. В., Отклоняющееся поведение как следствие влияния родительской семьи// Современные проблемы
науки и образования. – 2013. – N 3.

² Հեղինակի աշխատանքային պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները:

³ Հեղինակի աշխատանքային պրակտիկայից:

⁴ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և
ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մաս:

⁵ ՀՀ ռստիկանության պետի 17.07.2019թ. թիվ 15-Լ հրամանով ՀՀ ռստիկանության տարածքային
ստորաբաժանումների ԱԳ և ԸԲԿ բաժանմունքներում ընտանիքում բռնություն գործադրած անձանց
կանխարգելիչ հաշվառման վերցնելու մասին կարգի 19-րդ կետ
/աղբյուրը՝ <https://www.police.am/resources/police/uploads/files/protocols/1ea73f6757b9b265cb697839f0c9a84b.pdf>/, ՀՀ
նստիկանության պետի 09.03.2020թ-ի թիվ 15-Լ հրամանի 3-րդ կետ /աղբյուրը՝
www.police.am/resources/police/uploads/files/protocols/5a89cf1c5cfba03b0bc6c916bb35d180.pdf

Марта Меликсетян

Начальник отдела по делам несовершеннолетних
и по предупреждению насилия в семье отделения
ереванского административного района Малатия
Ереванского городского управления полиции РА,
подполковник полиции,

соискатель кафедры уголовного права и уголовного процесса
института политики и права Российско-Армянского университета

РЕЗЮМЕ

Частичный криминологический анализ случаев насилия в семье и разработка рекомендаций на его основе

В статье рассматриваются детерминанты семейного насилия, зарегистрированные в отделении полиции Малатия с 1 января 2019 года по 1 июля 2020 года. Автором представлена разработка соответствующих законодательных предложений на основе анализа проблем, возникающих при реализации полномочий, установленный по закону Республики Армения “О предупреждении семейного насилия, защите лиц, подвергшихся семейному насилию и восстановлении согласия в семье”.

Ключевые слова: семья, насилие, предупреждение, причины, условия, учет.

Marta Meliksetyan

Head of Prevention of Domestic Violence Department in the
Malatia Division of RA Police Yerevan City Department,
Lieutenant Colonel of the Police

Applicant for the Department of Criminal Law and Criminal Procedure
Institute of Politics and Law, Russian-Armenian University

SUMMARY

Partial criminological analysis of cases of domestic violence and development of recommendations based on it

The article examines the determinants of domestic violence registered at the Malatya Police Division from January 1, 2019 to July 1, 2020. The author presented the development of relevant legislative proposals based on the analysis of problems arising in the exercise of powers established by the law of the Republic of Armenia “On the prevention of domestic violence, the protection of persons subjected to domestic violence, and the restoration of harmony in the family. “On the Prevention of Domestic Violence, Protection of Persons Suffered by Domestic Violence and Restoring Consent in the Family” RA Law.

Key words: family, violence, prevention, reasons, conditions, registration.

Բնագիրը ներկայացվել է 17.09.2020թ.

Ընդունվել է տպագրության 22.09.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների պրոֆեսոր, վաստակավոր

իրավաբան Ս. Ավետիսյանը

ԼԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի մագիստրոս

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՊԱՅՈՒՅՑԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՏԵՍԱԿ

Տեղեկատվական հասարակության ձևավորմանը զուգընթաց առաջ է եկել անհրաժեշտություն բարեփոխելու և արդիականացնելու նաև հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական դաշտը: Մասնավորապես՝ էլեկտրոնային տեղեկատվությունը՝ որպես ապացույց քրեական գործի շրջանակներում օգտագործելու համար անհրաժեշտ են օրենսդրության փոփոխություններ:

Մույն աշխատանքի նպատակն է պարզել, թե արդյոք առկա¹ է էլեկտրոնային ապացույցների՝ որպես ապացույցի առանձին տեսակի, սահմանման անհրաժեշտությունը: Ըստ այդմ՝ ներկայացվել են առաջարկներ՝ ուղղված օրենսդրության կատարելագործմանը, որոնք հնարավորություն կտան ստեղծել արդյունավետ մեխանիզմ էլեկտրոնային տվյալները ապացուցողական զանգվածի մեջ ներառելու համար՝ հաշվի առնելով էլեկտրոնային տվյալների առանձնահատկությունները:

Հիմնարարը՝ ապացույց, քրեական դատավարության օրենսգիրք, քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ, էլեկտրոնային տեղեկատվություն, տեղեկատվության էլեկտրոնային կրիչ, էլեկտրոնային ապացույց:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ու տեղեկատվական հասարակության ձևավորումն իրենց ազդեցությունն են ունենում բոլոր հասարակական հարաբերությունների վրա և բացառություն չեն նաև քրեադատավարական ապացուցման վերաբերյալ ծագող հասարակական հարաբերությունները: Քրեադատավարական օրենսդրությունը պետք է իրավակիրառ մարմինների և ապահովի պատշաճ գործիքակազմով, որպեսզի ներառի այդ տվյալները ապացուցողական զանգվածի մեջ՝ պահպանելով ապացույցների թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջները: Այս առումով ապացուցման՝ որպես քրեական դատավարության ոլորտին վերաբերող ամենակարևոր և առանցքային գործընթացներից մեկի վերանայումը՝ հաշվի առնելով հասարակության զարգացման նոր ձևավորվող փուլը, առավել քան արդիական է և անհրաժեշտ:

Ապացույցի հասկացությունը քրեական դատավարության կենտրոնական, միաժամանակ, ամենահակասական և վիճելի հարցերից է: Գիտական գրականության մեջ ապացույցի հասկացության վերաբերյալ առկա են բազմաթիվ մոտեցումներ: Ապացույցի հասկացությունը տրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 104-րդ հոդվածի 1-ին մասում. «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեա-

կան օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները»: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «...որպես ապացույց թույլատրվում են՝ կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, վկայի, ամբաստանյալի, դատապարտյալի ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, իրենց ապացույցները, քննչական և դատական գործողությունների արձանագրությունները և այլ փաստաթղթեր»: Այսպես, ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում ապացույցի հասկացության հիմքում ընկած է փաստական տվյալի (ինֆորմացիայի) և դրա աղբյուրի միասնությունը: Ըստ այս հայեցակարգի՝ առաջինը՝ ապացույցի հասկացությունը բացահայտվում է ոչ թե փաստի, այլ՝ տեղեկության միջոցով, երկրորդ՝ այս հայեցակարգն ապացույցը դիտարկում է ձևի և բովանդակության տեսանկյունից: Ելնելով ապացույցի՝ որպես փաստական տվյալի (բովանդակության) և դրա աղբյուրի (ձև) միասնության հայեցակարգից, Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն անհրաժեշտ է դիտարկել միասնության մեջ¹:

Այսպիսով, վերոգրյալից հետևում է, որ էլեկտրոնային տեղեկատվությունը ապացույց ճանաչելու համար անհրաժեշտ է, որպեսզի դրանում առկա լինեն գործի համար նշանակություն ունեցող տվյալներ, այդ տվյալները պետք է իրենց արտահայ-

տուրյունը գտնեն օրենքով սահմանված ապացույցի տեսակներից մեկում: Ներկայումս *Էլեկտրոնային ապացույցի* այս կամ այն ապացույցի տեսակի դատավարական ձևի շրջանակներում օգտագործելու վերաբերյալ չկա միասնական մոտեցում: Մի մասը դրանք դիտարկում է որպես իրեղեն ապացույց, մյուս մասը՝ այլ փաստաթուղթ, մյուս մասն էլ առաջարկում է սահմանել Էլեկտրոնային ապացույցները որպես ապացույցի առանձին տեսակ:

Մեր առջև դրված իրավական խնդիրն է պարզել, թե *արդյոք առկա՞ է Էլեկտրոնային ապացույցների՝ որպես ապացույցի առանձին տեսակի Օրենսգրքում սահմանման անհրաժեշտությունը, թե՞ այդ ապացույցները կարող են օգտագործվել Օրենսգրքում առկա ապացույցի տեսակներից մեկի՝ դատավարական ձևի շրջանակներում:*

Օրենսգրքի 14-րդ գլխի և պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Էլեկտրոնային տեղեկատվության կրիչները ճանաչվում են՝ կամ իրեղեն ապացույց, կամ այլ փաստաթուղթ: Այսպես, Էլեկտրոնային տեղեկատվությունը այս կամ այն ապացույցի տեսակի դատավարական ձևի շրջանակներում օգտագործելու հնարավորությունը բացահայտելու համար, անհրաժեշտ է նախ և առաջ անդրադառնալ այդ ապացույցի հատկանիշներին, այնուհետև համադրել դրանք Էլեկտրոնային տեղեկատվության առանձնահատկությունների հետ՝ ըստ այդմ որոշելով դրանց համապատասխանության հարցը:

• Էլեկտրոնային տեղեկատվությունը և այլ փաստաթղթերը

Օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ այլ փաստաթղթերն ապացույց են ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:*

Անդրադառնալով այլ փաստաթղթերին՝ Վճռաբեկ դատարանը արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ ապացույցի այս տեսակն իր մեջ ներառում է տեղեկության (ինֆորմացիայի) նյութական կրողների բոլոր տեսակները, եթե այն նշանակություն ունի ապացուցման ենթակա հանգամանքները պարզելու համար²: Այսպես՝ այլ փաստաթուղթ համարվելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

1) թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի առկայությունը, որի վրա ամրագր-

ված են գրառումները,

2) քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալներ պարունակող բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում:

ՀՀ քրեական դատավարության մոդ օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *արտավարության փաստաթուղթ է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստերի մասին տվյալներ պարունակող թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որը ձևավորվել է տվյալ քրեական վարույթի շրջանակներից դուրս: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ փաստաթղթերն անհրաժեշտության դեպքում վարույթն իրականացնող մարմնի կողմից զննվում են, ինչպես նաև համապատասխան որոշմամբ ճանաչվում են արտավարության փաստաթուղթ և կցվում վարույթի նյութերին:*

Այլ փաստաթղթերը քրեական վարույթի շրջանակներից դուրս ձևավորված, այլ կերպ ասած՝ արտավարության և օրենքով սահմանված եղանակներով հավաքված փաստաթղթեր են, որոնք պարունակում են քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստական տվյալներ: Այլ (արտավարության) փաստաթուղթը կարող է ունենալ տարաբնույթ ձև՝ թղթային, մագնիսական, էլեկտրոնային, կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական, կամ այլ նշանային ձև³:

Անդրադառնալով այլ փաստաթղթի դատավարական ձևի շրջանակներում Էլեկտրոնային տեղեկատվության օգտագործմանը՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ այլ փաստաթղթի կառուցակարգը թույլ է տալիս դիտարկել Էլեկտրոնային տեղեկատվությունը և դրա կրիչը՝ առանձնացված: Այս տարանջատումը կարևոր նշանակություն ունի Էլեկտրոնային տեղեկատվության և դրա կրիչների առանձնահատկությունների համատեքստում: Այսպես, ապացուցողական նշանակություն ունի ոչ թե տեղեկատվության կրիչը իր արտաքին հատկանիշներով, այլ դրա բովանդակությունը, դրանում ամրագրված տվյալները: Այս համատեքստում պետք է արձանագրել, որ թեև Էլեկտրոնային տեղեկատվությունն ամրագրված է նյութական կրիչի վրա, այն ունի թվային տեսք և հանդիսանում է վիրտուալ աշխարհի օբյեկտ և չունի նյութական արտահայտություն: Բացի վերոգրյալից՝ այդ տարանջատման անհրաժեշտության վկայություն կարող են լինել նաև որոշ Էլեկտրոնային տեղեկատվության

կրիչների առանձնահատկություններ: Համակարգչային տեղեկատվության կրիչ կարող են հանդիսանալ, ինչպես օրինակ՝ էլեկտրամագնիսական կրիչը, էլեկտրոնային կրիչը, այնպես էլ՝ էլեկտրամագնիսական դաշտը⁴:

Խոսելով էլեկտրոնային տեղեկատվության կրիչներից՝ ուշադրության են արժանի տեղեկատվության օնլայն կրիչները, որոնք հանդիսանում են տարբեր կազմակերպությունների կողմից մատուցվող օնլայն ծառայությունների տարատեսակներ (iCloud, Облако Mail.Ru, Dropbox, Google Drive, Яндекс.Диск և այլն): Այս տեսակի կրիչները տեսանելի չեն և հանդիսանում են որպես օնլայն սերվերներ: Թեև քվային տեղեկատվությունն արձանագրված է նյութապես գոյություն ունեցող սերվերների վրա, սակայն դրանք ֆիզիկապես կարող են գտնվել աշխարհի ցանկացած անկյունում: Այսպես, ելնելով էլեկտրոնային տեղեկատվության կրիչների առանձնահատկություններից՝ դրանք երբեմն անհնար է ձեռք բերել և կցել գործի նյութերին: Այս պայմաններում էլ ավելի է կարևորվում գործի համար նշանակություն ունեցող տվյալներ պարունակող տեղեկատվությունը՝ նյութական կրիչից գատ՝ որպես ապացույց դիտարկելը:

Հաջորդիվ քննարկման առարկա դարձնենք այլ փաստաթղթերի մեկ այլ հատկանիշ՝ քրեական վարույթի շրջանակներից դուրս ձևավորված լինելը: Գործող Օրենսգրքի 122-րդ հոդվածում ուղղակիորեն սահմանված չէ ներկայացվող փաստաթղթերի համար վերոնշյալ պահանջը, սակայն այս մասին խոսվում է դատական պրակտիկայում և տեսությունում: Այս համատեքստում հարկ ենք համարում նշել, որ Նախագիծը, ի տարբերություն գործող օրենսդրության, ի թիվս այլ պայմանների, սահմանել է նաև քրեական վարույթի շրջանակներից դուրս ձևավորված լինելը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով այլ փաստաթղթերին, ձևավորել է այն իրավական դիրքորոշումը, որ այլ փաստաթղթերի՝ ապացույցի կարգավիճակ ձեռք բերելու համար որևէ քննչական գործողության կատարում չի պահանջվում. անհրաժեշտ է կոնկրետ փաստաթուղթն ապացույց ճանաչելու և գործի նյութերին կցելու մասին որոշման ընդունում: Նախաքննության ընթացքում մեղադրող կողմի հավաքած փաստաթղթերը կցվում են գործին և դառնում ապացույց՝ քննիչի (հետաքննության մարմնի) որոշմամբ⁵:

Այլ կերպ ասած՝ այլ փաստաթուղթ ճանաչելու և քրեական գործով օգտագործելու համար անհրաժեշտ է, որպեսզի փաստաթուղթը ծագի քրեական գործով վարույթից դուրս, այլ կազմակերպություն-

ների, հիմնարկների և պաշտոնատար անձանց բնականոն գործունեության ընթացքում և համապատասխանի կոնկրետ տեսակով պայմանավորված այդ փաստաթղթերի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝ նրանում պետք է առկա լինեն՝ կնիք, շտամպ, ստորագրություն, կազմման օր, ամիս, տարի և այլ անհրաժեշտ վավերապայմաններ:

Հիմք ընդունելով և զարգացնելով ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները՝ դատավոր Ս. Մարաբյանը նշում է հետևյալը. « (...)այլ փաստաթղթերը պետք է ամրագրեն այնպիսի տվյալներ, որոնք հայտնի են դարձել ոչ թե քննչական կամ դատական գործողությունների արդյունքում, այլ՝ դրանց շրջանակից դուրս, այսինքն՝ այլ փաստաթղթեր-ապացույցները պետք է ձևավորվեն քրեական դատավարությունից դուրս՝ ոչ դատավարական ճանապարհով և ոչ քրեական վարույթն իրականացնող մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից կամ նրանց մասնակցությամբ:»⁶:

Վերոգրյալի համատեքստում արձանագրենք, որ ոչ բոլոր էլեկտրոնային տվյալները կարող են ձեռք բերվել առանց որևէ քննչական գործողություն իրականացնելու կամ վարույթի մասնավոր մասնակիցների կողմից: Օրինակ՝ բնակարանի խուզարկության ժամանակ հայտնաբերված համակարգչի մեջ պահվող էլեկտրոնային տվյալների ձեռքբերման համար առնվազն անհրաժեշտ է զննության իրականացում, ընդ որում՝ այդ գործողությունն իրականացնողն է պաշտոնատար անձը, ինչը բացառում է այսպիսի ճանապարհով ձեռքբերված տվյալների այլ փաստաթուղթ հանդիսանալը:

• **Էլեկտրոնային տեղեկատվությունը և իրեն հանդիսանող ապացույցները**

Անդրադառնալով էլեկտրոնային տեղեկատվության իրեն հանդիսանող ապացույցի դատավարական ձևի շրջանակներում օգտագործելու հնարավորությանը՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել իրեն հանդիսանող ապացույցի հատկանիշները և համադրել դրանք էլեկտրոնային տեղեկատվության և էլեկտրոնային տեղեկատվության կրիչների առանձնահատկությունների հետ:

Օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *իրեն հանդիսանող ապացույցներ են այն առարկաները, որոնք հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել, կամ հանցավոր գործողությունների օրյեկտներ են եղել, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և*

մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել:

Նախագծի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրեղեն ապացույց է ճանաչվում ցանկացած առարկա, որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու միջոց լինել, այդ թվում՝

1) ենթադրյալ հանցագործության գործիքները կամ այն առարկաները, որոնք իրենց վրա ենթադրյալ հանցագործության հետքեր են պահպանել,

2) այն առարկաները, որոնք ենթադրյալ հանցավոր ներգործության օբյեկտ են եղել,

3) ենթադրյալ հանցագործությամբ անմիջականորեն ձեռք բերված դրամը, այլ արժեքները և առարկաները: Այսպես, իրեղեն ապացույցների բնորոշման առումով՝ գործող օրենսդրությունը և Նախագիծը նույնանման մոտեցում են ցուցաբերել:

Այսպես, Օրենսգրքի համաձայն՝ իրեղեն ապացույց կարող են լինել այն առարկաները, որոնք՝

1) հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել,

2) կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ են եղել,

3) դրամը, այլ արժեքները և հանցավոր ճանապարհով ձեռքբերված մյուս բոլոր առարկաները, որոնք հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ կարող են ծառայել:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը չի սահմանել իրեղեն ապացույցների սպառիչ ցանկ, այդ իսկ պատճառով փաստական տվյալները իրեղեն ապացույց ճանաչելու համար՝ անհրաժեշտ է ելնել դրա հատկանիշներից: Տեսության մեջ նշվում է, որ իրեղեն ապացույցները նյութական աշխարհի օբյեկտներ են, որոնք քննվող հանցագործության դեպքի հետ ունեցած կապի շնորհիվ տեղեկություններ են պարունակում դրա վերաբերյալ: Իրեղեն ապացույցն առավելապես ունի օբյեկտիվ բովանդակություն, և այն, ի տարբերություն անձնային ապացույցի, օրինակ՝ ցուցմունքի, գուրկ է սուբյեկտիվ հատկանիշից: Բանն այն է, որ իրեղեն ապացույցը բովանդակում է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող տվյալներն՝ անփոփոխ վի-

ճակում⁷:

Իրեղեն ապացույցների բնորոշ հատկանիշներից է օբյեկտիվ կապը ապացույցման առարկայի հետ, որի ուժով դրանք կարող են ծառայել որպես գործի փաստական հանգամանքների հաստատման միջոց: Այս առումով նկատենք, որ էլեկտրոնային տեղեկատվությունը համապատասխանում է իրեղեն ապացույցի այս չափանիշին: Էլեկտրոնային տվյալները կարող են ծառայել որպես հանցագործության գործիք (օրինակ՝ վիրուսային ծրագիրը), որպես հանցագործության օբյեկտ (էլեկտրոնային տեսքով պահվող պետական գաղտնիք պարունակող տեղեկությունը) կարող է իրենից ներկայացնել հանցագործության հետք (ոչ սանկցիավորված մուտքի փորձ, որը ֆիքսվել է կոնկրետ ծրագրում): Դրամը և այլ արժեքները, որոնք ձեռք են բերվել հանցավոր ճանապարհով, նույնպես կարող են լինել էլեկտրոնային տեսքով:

Այս առումով իրավացի է Պ.Ս.Պաստուխովը, որ տեղեկատվական միջավայրը, որը գոյություն ունի հեռահաղորդակցության կապի ուղիներում, դարձրել է նյութական աշխարհի լիիրավ փոխարինող: Նրանում տեղի ունեցող դեպքերը, այդ թվում՝ հանցագործությունները, արտացոլվում են տարբեր «օբյեկտների», ինչպես նաև «սուբյեկտների» գիտակցության մեջ: Եթե հանցագործությունը տեղի է ունենում համակարգչի միջոցով արդարացի կլինի համարել, որ նրա տեղեկատվական հետքերը հանդիսանում են սովորական հանցագործության արդյունքում թողնված հետքերի անալոգ⁸:

Այսպիսով, իրեղեն ապացույցները նյութական աշխարհի առարկաներ են, որոնք քննվող հանցագործության դեպքի հետ ունեցած կապի շնորհիվ տեղեկություններ են պարունակում դրա վերաբերյալ: Էլեկտրոնային տեղեկատվությունը կարող է հանդիսանալ հանցագործության առարկա, գործիք, ինչպես նաև կարող է իրենից ներկայացնել հանցավոր գործունեության հետք: Հենց այս հանգամանքի ուժով շատ դատավարագետներ էլեկտրոնային տվյալները դասում են իրեղեն ապացույցների շարքին, քանի որ էլեկտրոնային տեղեկատվությունը պարունակում է իրեղեն ապացույցին բնորոշ կարևոր հատկանիշը՝ հանցագործության դեպքի հետ օբյեկտիվ կապը: Այս համատեքստում որոշ համեմատականներ կանցկացնենք այլ փաստաթղթերի հետ:

Ինչպես արդեն նշեցինք, այլ փաստաթղթերի հիմնական հատկանիշներից է այն, որ դրանք պարունակում են վարույթի համար նշանակություն ունեցող փաստերի մասին տվյալներ, սակայն ծա-

գում են ոչ թե հանցագործություն կատարելու կապակցությամբ, այլ պետական մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կամ քաղաքացիների բնականոն գործունեության ընթացքում՝ ի տարբերություն իրեղեն ապացույցների, որոնց բնորոշ է օբյեկտիվ կապը հանցավոր գործողության հետ: Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, իրեղեն ապացույցի և այլ փաստաթղթերի մրցակցության դեպքում նախապատվությունը տրվում է իրեղեն ապացույցին, այլ կերպ՝ իրեղեն ապացույցի հատկանիշներ պարունակող այլ փաստաթղթերը ճանաչվում են իրեղեն ապացույց: Այսինքն՝ այն դեպքում, երբ էլեկտրոնային տվյալները օբյեկտիվորեն կապված են հանցավոր գործունեության հետ, մասնավորապես, հանդիսանում են հանցագործության հետք, գործիք, առարկա, չեն կարող համարվել այլ փաստաթուղթ, քանի որ այլ փաստաթղթերին բնորոշ է արտավարությանությունը, վերջիններս ծագում են ոչ թե հանցագործություն կատարելու կապակցությամբ, այլ պետական մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կամ քաղաքացիների բնականոն գործունեության ընթացքում:

Հարկ է նկատել, որ շատ դատավարագետներ էլեկտրոնային տեղեկատվությունը դասում են իրեղեն ապացույցների շարքին, այդպիսին է նաև ՌԴ քրեադատավարական օրենսդրության մոտեցումը⁹: Կարծում ենք էլեկտրոնային տվյալները իրեղեն ապացույցների շարքին դասելը թերևս լավագույն լուծումը չէ, ինչը կփորձենք հիմնավորել ստորև:

Իրեղեն ապացույցները առարկաներ են, որոնք պարունակում են գործի համար նշանակություն ունեցող տվյալներ, սակայն իրեղեն ապացույցի առաջին հատկանիշը, որը նշում է ՀՀ և ՌԴ օրենսդիրը, վերջինիս *առարկայականությունն է*: Առարկան իրենից ներկայացնում է նյութական աշխարհի ֆիզիկական օբյեկտ, որին բնորոշ են բազմաթիվ ֆիզիկական հատկություններ (զանգված, չափ, ծավալ, ձև, գույն, խտություն և այլն): ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ հոդվածից պարզ է դառնում, որ այն իրեղեն ապացույցների շարքին է դասել էլեկտրոնային կրիչները, որոնք հանդես են գալիս որպես նյութական օբյեկտ: Իհարկե, էլեկտրոնային տեղեկատվությունը չի կարող գոյություն ունենալ նյութական կրիչից զատ, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ էլեկտրոնային տեղեկատվության կրիչ կարող է հանդիսանալ ոչ միայն առարկան, այլև՝ էլեկտրամագնիսական դաշտը, որը չունի որևէ նյութական

արտահայտություն:

Բացի այդ տեղեկատվության էլեկտրոնային կրիչները իրեղեն ապացույց ճանաչելիս հաշվի չի առնվել, որ ապացուցողական նշանակությունը կրում է ոչ թե թվային տեղեկատվության նյութական կրիչը, այլ տեղեկատվության բովանդակությունը: Այս առումով համաձայն ենք այն դատավարագետների հետ, որոնք մերժում են տեղեկատվության էլեկտրոնային կրիչները իրեղեն ապացույց ճանաչելու գաղափարը: Այսպես, Վ.Ի. Շիկանովի դիրքորոշման համաձայն՝ իրեղեն ապացույցի դատավարական ձևի շրջանակներում չեն կարող օգտագործվել այնպիսի փաստաթղթեր, որոնք ուսումնասիրվում են բովանդակային առումով: Այսինքն, իրեղեն ապացույց կարող է հանդիսանալ միայն այնպիսի փաստաթուղթ, որն իր արտաքին ֆիզիկական առանձնահատկություններով է հետաքրքրություն առաջացնում վարույթն իրականացնող մարմնին, այլ ոչ իր բովանդակային առումով, ինչի հավանականությունն էլեկտրոնային փաստաթղթի դեպքում a priori (գրոյացվում է): Իրեղեն ապացույցները քրեական վարույթն իրականացնող մարմնի համար հետաքրքրություն են առաջացնում բացառապես առարկայի կարգավիճակում, դրանց անհատական (ֆիզիկական) հատկությունների (կամ տեղակայման) տեսանկյունից¹⁰:

Ն.Ա. Ջիգուրան նշում է, որ իրեղեն ապացույցն առարկա է, իսկ համակարգչային տեղեկատվությունը՝ տեղեկությունների բովանդակություն: Իհարկե, այդ տեղեկություններն ամրագրված են նյութական կրիչի վրա, այլապես այն չի կարող դիտարկվել որպես ապացույց, սակայն այդ կրիչի արտաքին տեսքը չի արտահայտում այն տեղեկությունները, որոնք պարունակում է: Ապացուցողական նշանակությունը կրում է միայն տեղեկությունը, այլ ոչ դրա կրիչը:

Բացի այդ, արդեն իսկ խոսել ենք օնլայն կրիչներում առկա տեղեկատվության նյութական կրիչների ձեռքբերման դժվարություններից, երբեմն անհնարինությունից: Այս խնդիրը արդիական է նաև իրեղեն ապացույցների համատեքստում: Ինչպես բխում է օրենսդրական բնորոշումից՝ իրեղեն ապացույցը հենց այդ նյութական կրիչն է, որը, ելնելով այս տեսակ կրիչների առանձնահատկություններից, անհնար է ձեռք բերել:

Էլեկտրոնային տեղեկատվությունն իրեղեն ապացույցի դատավարական ձևի շրջանակներում օգտագործելու անհնարինությունը հիմնավորելու համար՝ ներկայացնենք մի քանի հանգամանք ևս:

Էլեկտրոնային տեղեկատվության և իրեղեն

ապացույցների տարբերակումը ընկած է անձնային և առարկայական ապացույցների տարբերակման հարթությունում: Անձնային է այն ապացույցը, որի դեպքում փաստական տվյալը ձևավորվում է բացառապես մարդու կողմից՝ մարդը փաստական տվյալի կրողն է, ով փաստական տվյալը փոխանցում է գրավոր կամ բանավոր խոսքի միջոցով: Առարկայական են այն ապացույցները, որոնց դեպքում փաստական տվյալն արտացոլվել է նյութական աշխարհի իրերի վրա: Նյութական օբյեկտները փաստական տվյալի կրողներն են¹²:

Ի. Կերտեքը որպես առարկայական և անձնային ապացույցների տարանջատման չափանիշ դիտարկում է դրանց ձևավորման մեխանիզմը՝ նշելով, որ իրեղեն ապացույցներին բնորոշ է փաստերի մեխանիկական արտացոլումը, այն դեպքում, երբ մնացած ապացույցների տեսակների դեպքում առկա է մտավոր արտացոլում¹³:

Անդրադառնալով էլեկտրոնային հետքի ձևավորման մեխանիզմին՝ նկատենք, որ էլեկտրոնային տեղեկատվության ձևավորման մեխանիզմը կանխորոշվում է ծրագիրը ստեղծողի կողմից սահմանված ալգորիթմով և իրագործվում է ծրագրի միջոցով. այս եղանակով ծրագիրը հանդիսանում է փաստերի արտացոլման միջոց: Այսինքն, այս դեպքում այն հանդիսանում է սարքավորումների և ծրագրերի միջոցով ստացված արտացոլանք, որը միջնորդավորված է մարդկային գիտակցությամբ: Սրանից ելնելով՝ կարող ենք եզրահանգել, որ էլեկտրոնային տեղեկատվության դեպքում անհնար է փաստերի մեխանիկական արտացոլման կիրառումը, որը բնորոշ է առարկայական ապացույցներին: Այս հատկանիշով էլեկտրոնային տեղեկատվությունը նմանվում է անձնային ապացույցներին: Սակայն այն չի կարող հանդիսանալ անձնային ապացույց, քանի որ տեղեկատվությունը այս դեպքում ստեղծված է սարքավորումների և ծրագրային միջոցների օգնությամբ, և ենթարկվում է որոշակի սահմանված կանոնների, որոնք հանձնարարված են կիրառվող ծրագրով: Այս դեպքում բացակայում է սուբյեկտիվիզմի տարրը, որը բնորոշ է անձնային ապացույցներին: Այսպիսով, էլեկտրոնային տեղեկատվությունը մի կողմից չի կարող հանդիսանալ առարկայական ապացույց, քանի որ դրա ձևավորման մեխանիզմում առկա է մարդկային գործոնը, միաժամանակ, չի հանդիսանում անձնային ապացույց, քանի որ բացակայում է անձնային ապացույցներին բնորոշ սուբյեկտիվիզմի տարրը: Ելնելով վերոգրյալից՝ արձանագրենք, որ էլեկտրոնային տեղեկատվության (էլեկտրոնային-թվային հետք) և իրեղեն ապացույցի ձևավոր-

ման մեխանիզմները տարբեր են, ինչը հանդիսանում է վերջիններիս տարբերակման չափանիշ:

Էլեկտրոնային տեղեկատվության բնութագրիչ հատկանիշներից է այն, որ դրա ընկալումը հնարավոր է միայն *տեխնիկական միջոցների օգնությամբ*: Այս կապակցությամբ Յու.Կ. Օռլովն նշում է, որ իրեղեն ապացույցի դեպքում տեղեկատվությունն իր բնական, չկոդավորված վիճակում է, և դրա ձևափոխումը տեխնիկական միջոցների օգնությամբ հարկավոր չէ¹⁴:

Գիտական գրականության մեջ նշվում է, որ իրեղեն ապացույցի բովանդակությունն են այն հետքերը, հատկությունները, նշանները, որոնք արտացոլված են անմիջականորեն առարկայի վրա, ենթակա են անմիջական ընկալման և կարող են հայտնաբերվել տեսողական զննության ճանապարհով: Այսպիսի տեղեկատվության առկայությունն արդեն տալիս է բավարար հիմքեր գործին վերաբերելի համարելու համար¹⁵: Միաժամանակ կարելի է համաձայնել այն կրիմինալիստների հետ, ովքեր նշում են, որ որոշ իրեղեն ապացույցներ (օրինակ՝ միկրոհետքեր) հնարավոր է ընկալել միայն տեխնիկական միջոցների օգնությամբ¹⁶: Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ այս դեպքում տեխնիկական միջոցներն օգտագործվում են որոշակի վերլուծության՝ առարկայի արտաքին հատկանիշների ուսումնասիրության համար: Այսպիսով, օբյեկտի վերափոխում (վերակոդավորում) տեղի չի ունենում, ինչն առկա է էլեկտրոնային տեղեկատվության դեպքում¹⁷:

Հաջորդ հատկանիշը, որ կարող է հանդիսանալ այս ապացույցների տարանջատման չափանիշ, դատավարագետների կողմից նշված իրեղեն ապացույցի *անփոխարինելիության և յուրօրինակության* հատկանիշներն են¹⁸: Այս չափանիշի հիմքում ընկած է այն փաստը, որ ոչ մի նյութական օբյեկտ չի կարող ունենալ ամբողջովին նույնական կրկնօրինակ: Իրեղեն ապացույցները առանձնանում են իրենց անփոխարինելիությամբ և յուրօրինակությամբ, դրանում տեղի ունեցող փոփոխությունները կապված են հանցագործության դեպքի հետ: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ի տարբերություն իրեղեն ապացույցի, էլեկտրոնային փաստաթուղթը բնութագրող հատկություններից են՝ հեշտ խմբագրումը, կրկնօրինակումը, փոփոխումը: Բացի այդ, էլեկտրոնային տեղեկատվության կրիչը չի կարող լինել անփոխարինելի և յուրօրինակ, էլեկտրոնային տեղեկատվության և դրա կրիչի միջև առկա չէ սերտ կապ, կրիչը կարող է հեշտությամբ փոխարինվել մեկ ուրիշով: Այս դեպքում կարևոր նշանակություն ունի ոչ թե կրիչի հատկա-

նիշները, այլ դրա բովանդակությունը, իսկ կրիչները կարող են հեշտությամբ փոխարինվել:

Այսպիսով, ամփոփենք վերոնշյալ վերլուծությունները՝ կապված էլեկտրոնային տեղեկատվությունը իրեղեն ապացույցների և այլ փաստաթղթերի դատավարական ձևի շրջանակներում օգտագործելու հետ:

1. Էլեկտրոնային տեղեկատվության որոշ տեսակներ կարող են օգտագործվել այլ փաստաթղթերի դատավարական ձևի շրջանակներում: Այլ փաստաթղթերի կառուցակարգը հնարավորություն է տալիս տարանջատել էլեկտրոնային տեղեկատվությունը և դրա կրիչը, այլ փաստաթղթերի, ինչպես նաև էլեկտրոնային տվյալների դեպքում՝ ապացուցողական նշանակություն ունի բովանդակությունը, ոչ թե կրիչները: Միևնույն ժամանակ, այլ փաստաթղթերի դատավարական ձևի շրջանակներում էլեկտրոնային տեղեկատվությունը կարող է օգտագործվել ոչ բոլոր դեպքերում: Այն այլ փաստաթղթերի հիմնական հատկանիշն է, և դրանք ծագում են ոչ թե հանցագործության կատարելու կապակցությամբ, այլ պետական մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կամ քաղաքացիների բնականոն գործունեության ընթացքում, ի տարբերություն իրեղեն ապացույցների, որոնց բնորոշ է օբյեկտիվ կապը հանցավոր գործողության հետ: Այսինքն՝ այն դեպքում, երբ էլեկտրոնային տվյալները օբյեկտիվորեն կապված են հանցավոր գործունեության հետ, մասնավորապես, հանդիսանում են հանցագործության հետք, գործիք, առարկա, չեն կարող համարվել այլ փաստաթուղթ, քանի որ ծագել են հանցագործության դեպքի կապակցությամբ: Բացի այդ այլ փաստաթղթերին բնորոշ է այն, որ դրանք վարույթն իրականացնող մարմնին հայտնի են դառնում ոչ թե քննչական կամ դատական գործողությունների արդյունքում, այլ՝ դրանց շրջանակից դուրս, այսինքն՝ այլ փաստաթղթերը պետք է ձևավորվեն քրեական դատավարությունից դուրս՝ ոչ դատավարական ճանապարհով և ոչ քրեական վարույթն իրականացնող մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից, կամ նրանց մասնակցությամբ: Այս առումով արձանագրենք, որ ոչ բոլոր էլեկտրոնային տվյալները կարող են ձեռքբերվել առանց որևէ քննչական գործողություն իրականացնելու, առանց պաշտոնատար անձանց մասնակցության:

2. Իրեղեն ապացույցի դատավարական ձևի շրջանակներում էլեկտրոնային տեղեկատվության օգտագործման կապակցությամբ կատարել ենք հետևյալ եզրահանգումները: Այն դեպքում, երբ էլեկտրոնային տեղեկատվությունը ծագում է հան-

ցագործությունների դեպքի առնչությամբ, այն օբյեկտիվորեն կապված է հանցավոր գործունեության հետ, մասնավորապես՝ հանդիսանում է հանցագործության հետք, գործիք, առարկա, ձեռք է բերում իրեղեն ապացույցի հատկանիշներ: Հենց այս հանգամանքն է հիմք հանդիսանում վերջիններիս շատ դատավարագետների կողմից իրեղեն ապացույցների շարքին դասելու համար: Մակայն այս տեսակի տվյալները իրեղեն ապացույց ճանաչելու համար առկա են բազմաթիվ խոչընդոտներ: Առաջին՝ որպես այդպիսին է հանդես գալիս իրեղեն ապացույցի առարկայականությունը: Այս խնդրի լուծումը դատավարագետները տեսնում են էլեկտրոնային տեղեկատվության կրիչը իրեղեն ապացույց դիտարկելու մեջ, սակայն այն, թերևս, լավագույնը չէ: Նման մոտեցման դեպքում հաշվի չեն առնվում էլեկտրոնային տվյալների առանձնահատկությունները: Այսպես, չնայած էլեկտրոնային տեղեկատվությունը ամրագրված է նյութական կրիչի վրա և չի կարող գոյություն ունենալ նյութական կրիչից զատ, սակայն ապացուցողական նշանակություն ունի ոչ թե նյութական կրիչը իր ֆիզիկական հատկանիշներով, այլ վերջինիս բովանդակությունը, տվյալները, որոնք գոյություն ունեն միայն վիրտուալ տիրույթում և չունեն նյութական արտահայտություն:

Էլեկտրոնային տեղեկատվությունը իրեղեն ապացույց համարելու համար առկա են որոշ խոչընդոտներ ևս: Առաջին՝ տարբեր են իրեղեն ապացույցի և էլեկտրոնային տեղեկատվության ձևավորման մեխանիզմները, ինչը բացառում է էլեկտրոնային տեղեկատվությունը որպես առարկայական ապացույց ճանաչելու հնարավորությունը: Երկրորդ՝ եթե իրեղեն ապացույցներին բնորոշ է դրանց անփոխարինելիությունը և յուրօրինակությունը, ապա էլեկտրոնային տեղեկատվությանը բնորոշ է հեշտորեն պատճենահանվելու, փոփոխվելու հատկությունները: Բացի այդ՝ էլեկտրոնային տեղեկատվությունը սերտորեն կապված չէ դրա կրիչի հետ. կրիչը կարող է հեշտությամբ փոխարինվել, սակայն ապացուցողական նշանակություն ունի դրա տեղեկատվությունը: Երրորդ՝ տարբեր են նաև իրեղեն ապացույցի և էլեկտրոնային կրիչների վրա առկա տեղեկատվության ընկալման մեխանիզմները:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ գործող քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ապացույցների տեսակներից ոչ մեկն ամբողջապես չի արտահայտում թվային տեղեկատվության առանձնահատկությունները, այնինչ տեղեկատվության այս տեսակն իր մեջ կա-

րող է պարունակել այնպիսի տվյալներ, որոնք կարող են լինել անփոխարինելի գործի լուծման համար: Կարծում ենք, որ տեխնոլոգիական զարգացումներին քրեադատավարական ապացուցման գործընթացը համապատասխանեցնելու առումով անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ:

Վերոնշյալ խնդրի առավել իրատեսական և, թերևս, լավագույն լուծումը կարող է լինել **էլեկտրոնային ապացույցները** որպես առանձին ապացույցի տեսակ սահմանելը, որն իր մեջ կներառի էլեկտրոնային տեղեկատվության բոլոր տեսակները:

Ներկայումս քրեադատավարական գրականության մեջ էլեկտրոնային ապացույցները որպես առանձին ապացույցի տեսակ սահմանելը շարունակում է լայն տարածում ստանալ: Նկատենք, որ էլեկտրոնային ապացույցները որպես ապացույցի առանձին տեսակ սահմանված է **Խորվաթիայի քրեական դատավարության օրենսգրքում, որի 202-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային ապացույցներ են հանդիսանում որպես ապացույց ձեռքբերված ցանկացած տեղեկատվություն, որն ունի էլեկտրոնային տեսք**¹⁹:

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված ապացույցի բնորոշումը՝ առաջարկում ենք **էլեկտրոնային ապացույցի** հետևյալ սահմանումը. «**էլեկտրոնային ապացույցները փաստական տվյալներ են, որոնք ներկայացվում են էլեկտրոնային ձևով և որի հիման վրա վարույթն իրականացնող մարմինները քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով պարզում են ապացուցման ենթակա հանգամանքները**»:

¹ Դամբարյան Ա., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1-ին, Հեղ.խումբ: Գիտ. մր. Եր.: Տիգրան Մեծ, 2016: էջ 359-360:

² Ալեքսեյ Սկրոչյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թ. փետրվարի 17-ի թիվ ՎԲ-01/09 որոշման 25-րդ կետը:

³ Դամբարյան Ա., նույն աշխատանքի էջ 447:

⁴ Зигура Н.А., Компьютерная информация как вид доказательств в уголовном процессе России: дис. на соискание научной академической степени канд.юрид.наук. Челябинск, 2010. С. 20.

⁵ Ալեքսեյ Սկրոչյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նույն որոշման 27-րդ կետը:

⁶ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԵԱՆԳ-0030/01/16 դատավճռի կետ 2.3.5:

⁷ Դամբարյան Ա., նույն աշխատանքի էջ 416:

⁸ Пастухов П.С., Электронное вещественное доказательство в уголовном судопроизводстве, «Право 17 июня 2015 г.

⁹ “Уголовно-процессуальный кодекс Российской Федерации” от 18.12.2001 N 174-ФЗ (ред. от 02.08.2019), հասանելի է http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/

¹⁰ Шиканов В.И., Актуальные вопросы уголовного судопроизводства и криминалистики в условиях современного научно-технического прогресса. – Иркутск: Восточно-сибирское кн. из-во 1978. С. 191.

¹¹ Зигура Н.А., նույն աշխատության էջ 58-59:

¹² Դամբարյան Ա., նույն աշխատանքի էջ 365:

¹³ Кертэс И., Основы теории вещественных доказательств. М. 1973. С. 26.

¹⁴ Орлов Ю.К., Основы теории доказательств в уголовном процессе. М. 2000. С.122.

¹⁵ Завидов Б.Д., Проблемы доказательств и доказывания в уголовном судопроизводстве // СПС «КонсультантПлюс».

¹⁶ Шиканов В.И., Микроследы. Понятие, криминалистическое значение, процессуальный статус| Проблемы советского государства и права Вып. 7. Иркутск. 1974. С.100.

¹⁷ Зигура Н.А., նույն աշխատության էջ 75:

¹⁸ Строгович М.С., Курс советского уголовного процесса. Т.1 Основные положения науки советского уголовного

процесса. М.: Издательство «Наука», 1968.

¹⁹ Տե՛ս, Խորվաթիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, հասանելի է https://www.legislationline.org/download/id/7895/file/Croatia_Criminal_proc_code_am2009_en.pdf

Лара Петросян

Магистр права кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

РЕЗЮМЕ

Электронные доказательства как самостоятельный вид доказательств

Одновременно с формированием информационного общества возникла необходимость в реформации и актуализации правового поля, регулирующего общественные отношения. В частности, для применения информации, содержащейся на электронных носителях, в качестве доказательства в рамках уголовного дела необходимы законодательные изменения. Цель данной работы – выяснить, присутствует ли необходимость определения информации, содержащейся на электронных носителях, в качестве отдельного вида доказательства. Соответственно, представить предложения относительно совершенствования законодательства, которые подготовят почву для создания эффективного механизма для включения электронных данных в доказательственную базу, учитывая при этом особенности электронных данных.

Ключевые слова: доказательство, уголовно-процессуальный кодекс, проект нового уголовно-процессуального кодекса, электронная информация, электронный носитель информации, электронные доказательства.

Lara Petrosyan

Master of law at the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics

SUMMARY

Electronic evidence as a specific type of evidence

Along with the development of the concept of the information society, there is a need to reform and modernize the legal framework regulating public relations. In particular, amendments to the legislation are necessary to use electronic information as evidence within criminal proceedings. The purpose of this study is to determine whether there is a need to define electronic evidence as a specific type of evidence. And accordingly, file proposals aimed at the improvement of the existing legislation, which will enable the establishment of an effective mechanism for the inclusion of electronic data in the evidential base, considering the peculiarities of electronic data.

Key words: evidence, criminal procedural code, draft of a new criminal procedural code, electronic information, electronic carrier of information, electronic evidence.

Բնագիրը ներկայացվել է 16.09.2020թ.

Ընդունվել է տպագրության 22.09.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

S. Սուջյանը